

«ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

*Տնտեսության սրընթաց զարգացման և
աղքատության հաղթահարման ծրագիր*

ԵՐԵՎԱՆ 2026 թ.

Բովանդակություն

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ.....	3
1 ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	7
1.1 Արդյունաբերական քաղաքականության նոր հայեցակարգը՝ մշակող արդյունաբերություն	7
1.2 Զբաղվածության ընդլայնումը և աշխատանքի շուկայի քաղաքականությունները	9
1.3 20,000 մատչելի բնակարաններ	17
1.4 Հարկաբյուջետային քաղաքականությունը	19
1.5 Արտադրողականության հեղափոխություն և արտահանման վրա հիմնված գյուղատնտեսությունը.....	24
1.6 Էներգետիկայի զարգացումը.....	27
2 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	32
2.1 Սոցիալական քաղաքականությունը և աղքատության կրճատումը.....	32
2.2 Կենսաթոշակային համակարգ.....	35
3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ.....	39
4 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ	42
5 ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՊՈՎՈՎՈՒՄԸ.....	48
5.1 Արդյունահեն հանրային կառավարման համակարգ	48
5.2 Տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման համակարգերի բարեփոխումները.....	52
5.3 Դատական իշխանության իրական անկախության ապահովումը և դատաիրավական համակարգի բարեփոխումները	58
6 ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	63
7 ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ	69

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

Մեր քաղաքական ուժը որդեգրում է **աջ-կենտրոնամետ աշխարհայացք**՝ հավատարիմ հասարակության բարոյական արժեքներին և նպատակաուղղված տնտեսական ազատությունների խթանմանը: Մեր նպատակն է ստեղծել **ազատ, ուժեղ և քրիստոնեական արժեքներով առաջնորդվող** պետություն, որտեղ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին պահպանվում է որպես ազգային ինքնության ողնաշար և հոգևոր-մշակութային շարունակականության երաշխավոր:

Մենք առաջնորդվում ենք հետևյալ հիմնարար արժեքներով և սկզբունքներով՝

- Հայոց պետականություն և ազգային ինքնություն.
- Ազգային միասնություն և համերաշխություն.
- Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր առաջնորդություն.
- Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներ ու ազատություններ.
- Ազատ շուկա, արտահանմանն ուղղված տնտեսություն և ձեռնարկատիրություն.
- Ընտանիք, աշխատանք և պատասխանատվություն.
- Ազգային անվտանգություն.
- Թափանցիկ պետություն և արդյունավետ կառավարում:

Մենք կառուցում ենք

ազգային-քրիստոնեական արժեքներով, ազատ, ուժեղ, արտահանող և տնտեսական հաշվարկով առաջնորդվող Հայաստան,

որտեղ

եկեղեցին, ընտանիքը, անվտանգությունը, կրթությունը, տնտեսությունը և տնտեսական դիվանագիտությունը

միասին ձևավորում են **մրցունակ, արդյունավետ և արժանապատիվ պետություն:**

Մենք առաջնորդվելու ենք **սահմանափակ, սակայն հստակ ձևակերպված գերակայություններով՝** ապահովելով այդ ուղղություններով դրված նպատակների լիարժեք իրականացումը: **Մեր ծրագրով նախատեսված բոլոր քաղաքականությունները համահունչ են և մեծամասամբ ենթակայացված են այդ գերակայություններին:**

Առաջիկա հինգ տարիներին մեր առաջնային գերակայություններն են լինելու՝

- 1. Արտահանման ընդլայնմանն ուղղված մշակող արդյունաբերության զարգացումը՝** փնտրեսությունում մշակող արդյունաբերության մասնաբաժնի գրեթե կրկնակի՝ մինչև 20 տոկոս ավելացմամբ և շուրջ 300,000 նոր աշխատեղերի ստեղծմամբ, որից մոտ 100,000-ը՝ մշակող արդյունաբերության ոլորտում.
- 2. Կրթության հեղուկական զարգացումն ու դերի արժեվորումը՝** ոլորտում պետական ծախսերի մակարդակի առնվազն ՀՆԱ-ի նկատմամբ 4 տոկոսի ապահովմամբ՝ առանձնահատուկ շեշտադրելով մասնագիտական կրթությունը.
- 3. Երեխա ունեցող ընտանիքների աղքատության վերացումը՝** հասցեական և նպատակային սոցիալական քաղաքականության արդյունքում զգալիորեն բարելավելով այս խմբի կենսամակարդակը, որը 2024 թվականին բնութագրվում էր 31 տոկոս աղքատությամբ, ինչը զգալիորեն գերազանցում է այլ խոցելի խմբերի աղքատությունը: Պետությունը դառնալու է երրորդ ծնող բազմազավակ ընտանիքների համար:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու բացառիկ դերակատարությունը

Հայաստանը եզակի պետություն է, որը դարերի ընթացքում պահպանել է իր ինքնությունը՝ շնորհիվ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու և իր հավատքի: Քրիստոնեական արժեքները մեր պետական, մշակութային, բարոյական և ազգային գոյության հիմքն են:

Մեր համոզմամբ՝

- Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին բացառիկ դեր ունի հայ ժողովրդի պատմության մեջ՝ որպես ազգային ինքնության, հավատքի, միասնության և պետականության պահպանման հենասյուն:
- Եկեղեցին պետք է լինի ազգային միասնականության, բարոյականության և համայնքային կյանքի առանցքային ինստիտուտ և դերակատար:
- Պետությունն ու Եկեղեցին պետք է սերտ համագործակցեն կրթության, մշակույթի և ընտանիքի ամրապնդման հարցերում՝ հստակ սահմանված շրջանակներով:
- Եկեղեցու սոցիալական, կրթական և բարեգործական ծառայությունները պետք է արժանանան պետական աջակցության:
- Հայոց պատմության, քրիստոնեության և եկեղեցական մշակույթի ուսուցումը կրթական համակարգում պետք է ունենա արժանի տեղ՝ առանց պարտադրանքի, բայց բարձր որակով:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ազգային անվտանգության հիմնասյուններից է՝ ազգը պահպանվում է ոչ միայն զենքով, այլև արժեքներով:

Հայաստանը ստեղծվել է

հայ ժողովրդի, հայոց լեզվի, քրիստոնեական քաղաքակրթության և հայկական մշակույթի պահպանման ու զարգացման համար:

Այս հիմքով են ձևավորվելու մեր՝

- կրթական քաղաքականությունը,
- մշակութային ռազմավարությունը,
- սփյուռքի հետ հարաբերությունները,
- քաղաքացիության և ներգաղթի քաղաքականությունը:

Յուրաքանչյուր հայ պետք է լինի հոգով հայրենասեր: Հայրենասիրությունը պարտադիր չէ արտահայտել բարձրախոսներով՝ այն ապրելու, գործելու և պատասխանատվություն կրելու ձև է:

Ընտանիքը՝ որպես հիմնարար արժեք

Մենք պաշտպանում ենք ավանդական հայկական ընտանիքը՝ որպես պետության և հասարակության հիմնասյուն:

Եզրափակիչ ուղերձ

Մենք կառուցելու ենք ուժեղ, ազատ, արդար և քրիստոնեական Հայաստան, որտեղ Հայաստանի քաղաքացին, հայ մարդը, հայկական ընտանիքը, Հայ Եկեղեցին և հայկական պետությունը միասին ձևավորում են բարեկեցիկ, անվտանգ և արժանապատիվ ապագայի հայրենիքը:

1 ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Արդյունաբերական քաղաքականության նոր հայեցակարգը՝ մշակող արդյունաբերություն

1. **Իրավիճակը և հիմնական խնդիրները:** Մշակող արդյունաբերության համախառն ավելացված արժեքի տարեկան միջին աճը 2018-2024 թթ. կազմել է 3.7 տոկոս, զգալի պակաս, քան միջին տնտեսական աճը՝ 5.3 տոկոս:
2. **Դերակատարումը տնտեսությունում:** Մշակող արդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ-ում 2018 թվականի նկատմամբ նվազել է շուրջ 9 տոկոսով՝ 2024 թվականին կազմելով 10.5 տոկոս՝ 2018 թվականի 11.3 տոկոսի համեմատ:
3. **Արդյունաբերություն:** Մշակող արդյունաբերության արտահանման ցածր մակարդակը, կենտրոնացվածությունը և վատ դինամիկան Հայաստանի առևտրային հաշվեկշռի վատթարացման հիմնական պատճառն են եղել: Ցավալի փաստն այն է, որ դրամային արտահայտությամբ (այն, ինչ կարևոր է ՀՀ տնտեսության համար) 2024 թվականին 2021 թվականի նկատմամբ ապրանքների արտահանման ծավալները (առանց վերաարտահանման) նվազել են շուրջ 12 տոկոսով: Արդյունքում, 2024 թվականին ապրանքների արտահանման (առանց վերաարտահանման) մասնաբաժինը ՀՆԱ-ի նկատմամբ, ըստ գնահատականների, կազմել է 13.2 տոկոս՝ 2021 թվականի 21.7 տոկոսի համեմատ՝ արձանագրելով մոտ 65 տոկոս նվազում:
4. **Զբաղվածություն:** Մշակող արդյունաբերությունում զբաղվածների թվաքանակի միջին տարեկան աճը 2018-2024 թթ. կազմել է շուրջ 2.5 տոկոս: Մշակող արդյունաբերությունում զբաղվածների թվաքանակը 2024թ-ին 2023-ի համեմատ նվազել է շուրջ 8 հազար մարդով կամ շուրջ 7 տոկոսով:
5. **Ներդրումներ:** Մշակող արդյունաբերությունում 2018-2024 թթ ներդրումների միջին տարեկան ծավալը կազմել է շուրջ 80 մլրդ դրամ (2024 թ. 87 մլրդ դրամ): Համեմատության համար նշենք, որ պետական բյուջեից վերջին հինգ տարիներին կատարված տարեկան ներդրումների ծավալը միջինում կազմել է շուրջ 500 մլրդ դրամ՝ միայն 2024 թվականին 650 մլրդ դրամ:

Մեր գերակայությունները և մոտեցումները

6. Մենք կարևորելու ենք ֆիզիկական ներդրումները՝ առավելապես մշակող արդյունաբերության մեջ:
7. Մենք քայլեր ենք ձեռնարկելու Հայաստանի Հանրապետություն հզոր վերազգային կորպորացիաների մուտքի համար, որոնք կստեղծեն աշխատատեղեր, կներարկեն նոր գիտելիք և մշակույթ, ինչպես նաև կհանդիսանան մեր տնտեսական և աշխարհաքաղաքական անվտանգության երաշխիք:
8. Այս նպատակով մենք ընտրելու ենք այն վերազգային կորպորացիաները, որոնք համապատասխան ոլորտներում հանդիսանում են համաշխարհային և տարածաշրջանային առաջատարներ:
9. Յուրաքանչյուր ապրանքի/ուղղության համար ներկայացված ծրագրերը գնահատվելու են հատուկ մշակված առաջնահերթություններով՝

- Կազմակերպության համաներդրման ծավալ (ոչ պակաս քան 70 տոկոս),
 - Ապրանքի տնտեսական բարդություն՝ ըստ Harvard laboratory of economic complexity մեթոդաբանության՝ դրական,
 - Կազմակերպության փորձը՝ համաշխարհային շուկայում վաճառքների ծավալի դիրքը,
 - Կառավարչական թիմի փորձը՝ տվյալ կազմակերպությունում կամ այլ նմանատիպ կազմակերպությունում կառավարչական պաշտոններ զբաղեցնելու ժամկետը,
 - Արժեշղթայի տեղայնացումը ՀՀ-ում, մարզերում ներդրումներին տրվելու որոշակի առաջնահերթություն:
10. Պետությունը առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսելու է ներդնել 180-210 մլրդ դրամ (2024 թ. հաստատուն գներով): Այդ նպատակով մշակվելու են հատուկ ընթացակարգեր և պայմաններ՝ հաշվի առնելով արդյունաբերական ուղղորդված քաղաքականության միջազգային առաջադեմ փորձը: Պետությունը հանդիսանալու է համասեփականատեր, սակայն չի մասնակցելու կառավարմանը:
11. Առաջնահերթություններ որոշելու նպատակով՝
- իրականացվելու են հատուկ հետազոտություններ Հայաստանի արտահանող հատվածի հնարավոր ընդլայնման ուղղությունները բացահայտելու նպատակով՝ մասնավորապես կիրառելով ներկայումս արագ զարգացող ԱԲ տեխնոլոգիաները և հայտնի ժամանակակից մեթոդները, իրականացվելու են նպատակային քննարկումներ Հայաստանում փորձառություն ունեցող գործարարների հետ.
 - օգտագործելով մեր գործարար փորձը, կապերը և հեղինակությունը՝ վերազգային կորպորացիաների հետ տարվելու են հատուկ խորհրդակցություններ՝ նպատակ ունենալով բացահայտել այն նախապայմանները, որոնց դեպքում Հայաստանը կարող է գրավիչ դառնալ օտարերկրյա ուղղակի ներդրումների համար.
 - նախաձեռնելու ենք հատուկ խորհրդակցություններ սփյուռքի անվանի գործարարների, խոշոր ընկերություններում փորձ ունեցող կառավարիչների և ներդրումային խոշոր ընկերությունների մասնագետների հետ:
12. Մշակող արդյունաբերության և հատկապես դրա արտահանող հատվածի ընդլայնմանը մեծապես նպաստելու են մեր շրջանակային քաղաքականությունները, որոնք նպատակամղված են լինելու արտահանման ընդլայնմանը, մասնավորապես՝ արտահանման վրա ազդեցության գնահատականները լինելու են կողմնորոշիչ ֆիսկալ, հատկապես հարկային, դրամավարկային, փոխարժեքի, աշխատանքի շուկայի, արտադրական ենթակառուցվածքների, որակի ենթակառուցվածքների և կրթական բնագավառներում: Հայաստանի արտաքին քաղաքականությունը այս համատեքստում ևս ենթարկվելու է զգալի վերափոխումների:
13. **Արդյունքում, մշակող արդյունաբերության ճյուղում առաջիկա հինգ տարիներին՝**
- տարեկան ներդրումները կավելանան շուրջ 6-7 անգամ՝ հասնելով շուրջ 500-600 մլրդ դրամի՝ 2024 հաստատուն գներով.
 - արդյունաբերության ոլորտի համախառն ավելացված արժեքը (2024 հաստատուն գներով) կավելանա շուրջ 2.6 անգամ.
 - մասնաբաժինը ՀՆԱ-ում 10 տոկոսից կհասնի 20 տոկոսի.

- կատեղծվեն ավելի, քան 100 հազար բարձր արտադրողականությամբ և բարձր վարձատրվող աշխատատեղեր.
- աշխատանքի արտադրողականությունը կավելանա շուրջ 1.8 անգամ կամ տարեկան շուրջ 10 տոկոսով.
- ապրանքների արտահանումը կհասնի ՀՆԱ-ի 35 տոկոսին՝ ներկայիս 13 տոկոսի համեմատ:

1.2 Զբաղվածության ընդլայնումը և աշխատանքի շուկայի քաղաքականությունները

14. **Իրավիճակի գնահատականը և խնդիրները:** Պաշտոնապես հրապարակված առկա վերջին տվյալների համաձայն՝ 2014-2024 թթ. աշխատանքային ռեսուրսները ավելացել են ավելի շատ, քան աշխատուժը, ինչն արտացոլվել է *աշխատուժի մասնակցության մակարդակի* (ակտիվության մակարդակ) փոփոխություններում, որը դրսևորել է նվազման միտում (2024 թ.՝ 59.1 տոկոս՝ 2014 թ. 63.1 տոկոսի համեմատ): Ընդ որում, այդ ցուցանիշը 2018-2024 թթ. կանանց շրջանում մշտապես փոքր է եղել 50 տոկոսից՝ 2014 թ. արձանագրված 55.2 տոկոս ակտիվության մակարդակի համեմատ:
15. 2024 թվականին՝ 2014 թվականի համեմատ բացարձակ առումով աշխատուժը գրեթե չի փոխվել: Մինչև 2020թ. զբաղվածների թիվը կրճատվել է գործազուրկների գրեթե հաստատուն թվի պարագայում, իսկ դրանից հետո զբաղվածների թիվը սկսել է ավելանալ՝ գործազուրկների թվի կրճատման ֆոնին: Այդուհանդերձ, ներքին զբաղվածությունը 2014-2018 թթ. հետզհետե նվազել է, իսկ 2019 հետո թեև աճել է, էապես չի գերազանցել 2014 թվականի մակարդակը՝ 2024 թ. կազմելով 1146.3 հազար մարդ՝ 2014 թ. 1133.5 հազարի համեմատ:
16. *Գործազրկության մակարդակը* սկսել է նվազել 2020 թ. հետո միայն՝ 2024 թ. կազմելով 13.4 տոկոս: Սակայն, գործազրկության մակարդակի կրճատումը տեղի է ունեցել զբաղվածության մակարդակի գրեթե անփոփոխ և մասնակցության մակարդակի կրճատման պարագայում՝ ի հաշիվ երկարաժամկետ գործազուրկների թվի կրճատման: Սա վկայում է այն մասին, որ գործազուրկների մի զգալի մասը պարզապես դուրս է եկել աշխատուժից:
17. Այս եզրահանգումն էլ ավելի փաստարկված է դառնում, երբ բոլոր այս ցուցանիշները դիտարկվում են տարիքային կտրվածքով: Այսպես, աշխատուժից դուրս բնակչությունը՝ աշխատանքային ռեսուրսների այն մասը, որը ոչ զբաղված է, ոչ էլ ակտիվ աշխատանք է փնտրում, ժամանակի ընթացքում զգալիորեն աճել է: Ընդ որում, այդ աճն, ըստ էության, տեղի է ունեցել 35 տարեկանից բարձր տարիքի բնակչության հաշվին (գրեթե 200 հազար մարդ):
18. Դիտարկվող ժամանակահատվածում *ոչ ֆորմալ զբաղվածությունը* կրճատվել է՝ 2024 թ. կազմելով 32.4 տոկոս՝ 2014 թ. արձանագրված 51.6 տոկոսի համեմատ: Այդուհանդերձ, այդ կրճատումը մեծապես պայմանավորված է եղել գյուղատնտեսական հատվածում ոչ ֆորմալ զբաղվածության նվազմամբ: Այսպես, 2014-2024 թթ. ոչ ֆորմալ զբաղվածության 18.7 տոկոսային կետով կրճատման 17.2 տոկոսային կետը վերագրվում է գյուղատնտեսական հատվածին և սոսկ 1.5 տոկոսային կետով նվազումն է պայմանավորվել ոչ գյուղատնտեսական հատվածով:


19. Այս առումով, կարևոր է նշել, որ գյուղատնտեսական հատվածում ոչ ֆորմալ զբաղվածության կրճատումը փաստացի նշանակում է այդ հատվածում զբաղվածության կրճատում, քանի որ այդ ոլորտում զբաղվածության ավելի քան 95 տոկոսը ոչ ֆորմալ է: Ոչ գյուղատնտեսական հատվածում ֆորմալության մակարդակի աճը մասամբ պայմանավորված է եղել գյուղատնտեսությունից ծառայությունների ոլորտ անցմամբ:
20. Աշխատանքի շուկայում զարգացումները հարաբերականորեն նպաստավոր են եղել *երիտասարդների համար*: Մինչև 35 տարեկանների խմբում աճել է զբաղվածության մակարդակը, ինչպես նաև կրճատվել գործազրկության մակարդակը: Չսովորող ու չաշխատող 15-29 տարեկանների թիվը ևս կրճատվել է: Այս ցուցանիշի կտրվածքով ժամանակի ընթացքում տղամարդկանց և կանանց միջև ճեղքվածքը նեղացել, սակայն հարկ է ընդգծել, որ 2024 թ. 15-29 տարեկան յուրաքանչյուր 3 իգական սեռի ներկայացուցիչներից 1-ը ոչ սովորում է, ոչ մասնակցում է աշխատուժին:
21. Առաջին ամուսնության տարիքի բարձրացմանը համընթաց՝ չսովորող և աշխատուժին չմասնակցող կանանց թիվը կրճատվել է 15-24 տարեկանների խմբում, սակայն գրեթե անփոփոխ է մնացել 25-29 տարեկանների համար (հենց այս խմբում է հիմնականում դիտարկվող ժամանակում առաջին ամուսնության միջին տարիքը): Ընդ որում, այս խմբում յուրաքանչյուր 3-ից 2-ը չեն մասնակցում աշխատուժին: Սա անուղղակիորեն ցուցադրում է երեխաների խնամքի ապահովման այլընտրանքային հնարավորությունների չափազանց սահմանափակ լինելու հանգամանքը, ինչն էլ կարևոր դեր է խաղում երիտասարդ կանանց շրջանում մասնակցության ցածր մակարդակ ունենալու հարցում:
22. Առկա տվյալները էական տարբերություններ չեն բացահայտում երիտասարդների և ավագ սերնդի միջև՝ ստացած որակավորման աշխատանքի շուկայում օգտակարության առումով: Ընդհանուր առմամբ, զբաղվածների շուրջ 60 տոկոսն է գնահատում իր մասնագիտությունը որպես օգտակար ներկայումս կատարած աշխատանքի համար, և այս ցուցանիշը գրեթե չի տարբերվում տարբեր տարիքային խմբերում:
23. Աշխատանքի շուկայի *ճյուղային կառուցվածքը* արտացոլում է ՀՀ տնտեսության վերջին տարիների զարգացման հետագիծը և բնութագրվում է մշակող արդյունաբերության դերի կրճատմամբ ու ծառայություններում զբաղվածության դերի ավելացմամբ: Առավել մտահոգիչ է 2023-2024 թթ. ընթացքում մշակող արդյունաբերությունում զբաղվածների զգալի կրճատումը: 2024 թ. մշակող արդյունաբերությունում զբաղվածների թվաքանակը 2023 թ. համեմատ նվազել է շուրջ 8 հազար մարդով կամ մոտ 7 տոկոսով՝ կազմելով 114 հազար մարդ: Այս ճյուղում ներգրավված է բոլոր զբաղվածների շուրջ 10 տոկոսը:
24. 2014-2024 թվականների ընթացքում շարունակել են խորանալ ոչ գյուղատնտեսական հատվածում զբաղվածության *տարածքային անհամաչափությունները*, ինչը խիստ մտահոգիչ է: Եթե 2014 թ. Երևանում զբաղված է եղել ոչ գյուղատնտեսական հատվածում բոլոր զբաղվածների 42 տոկոսը, ապա 2024 թ. արդեն՝ 44 տոկոսը: Ճյուղային կտրվածքով միտումները և մակարդակները բավականին տարբեր են: Թեև մշակող արդյունաբերությունը ավելի է կենտրոնացել Երևանում, այդուհանդերձ, այն շարունակում է ապահովել տարածքային կտրվածքով ավելի հավասարաչափ զբաղվածություն, քան ծառայությունների ոլորտը:

Ի՞նչ ենք մենք անելու

25. Մեր ծրագրի գերնպատակներից է զբաղվածության էական ընդլայնումը՝ ծրագրային ժամանակահատվածում **շուրջ 300,000 աշխատատեղ**:
26. Նման արդյունքի մենք հասնելու ենք արդյունաբերական քաղաքականության մեր յուրահատուկ մոտեցումներով՝ համակցելով դրանք աշխատանքի շուկայի քաղաքականություններում և կրթության ոլորտի հարակից քաղաքականություններում նախատեսվող արմատական վերանայումներով և վերափոխումներով: 2027-2031 թթ ընթացքում ակնկալում ենք տնտեսական աճի տարեկան միջին 8% աճ:
 - **Ջբաղվածության ընդլայնումը**
27. Աշխատատեղերի ստեղծման **առաջնային խթանը** հանդիսանալու է մշակող արդյունաբերությունը, որտեղ ստեղծելու ենք ընդհանուր առմամբ 100 հազար աշխատատեղ:
28. Համաշխարհային փորձը և քանակապես հիմնավորված գնահատականները վկայում են, որ մշակող արդյունաբերությունում ստեղծած 1 աշխատատեղը անուղակի և միջնորդված ուղիներով ողջ տնտեսությունում ստեղծում է 3-3.5 աշխատատեղ (մշակող արդյունաբերությունում և տնտեսության այլ ճյուղերում):
29. Ըստ Հայաստանի համար արված գնահատականներ՝ 45 հազար առաջնային աշխատատեղերը մշակող արդյունաբերությունում իրենց ետևից կստեղծեն գրեթե նույնքան անուղակի զբաղվածություն այդ նույն ճյուղում (55 հազար) և մշակող արդյունաբերության համեմատ շուրջ 1.8 անգամ ավելի (շուրջ 180 հազար)՝ ողջ տնտեսությունում:
30. Բացի դրանից, ակնկալվում է որ իրականացվելիք քաղաքականությունների հետևանքով մնացած ճյուղերը կունենան նաև իրենց աճը՝ մինչև 2031 թ. շուրջ 90 հազար լրացուցիչ աշխատատեղ: Որպես լրացուցիչ խթան նախատեսված է 5 տարվա ընթացքում ներգրավել 1 միլիարդ դոլար՝ զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման նպատակով:
31. Կարևոր է ընդգծել նաև, որ մշակող արդյունաբերությունում և տնտեսության այլ ճյուղերում աշխատատեղերի ավելացումը հանգեցնելու է գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական հատվածում զբաղվածության զգալի ընդլայնման:
32. Արդյունքում, ծրագրվում է, որ զբաղվածությունը 2026-2031 թթ. միջինում աճելու է տարեկան շուրջ 3.8 տոկոսով՝ ուղեկցվելով արտադրողականության աճին միտված ընդգծված քաղաքականությամբ:
33. Ծրագրվող ժամանակահատվածում ենթադրվում է սահմանափակ զբաղվածության աճ պետական հատվածում, առողջապահության և կրթության ոլորտներում: Մեր գնահատականներում հաշվի են առնվում նաև երկրի համեմատական առավելությունները և հետագծում առկա դրական միտումները: Դրանք արտացոլված են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում զբաղվածության առաջանցիկ աճով (տարեկան շուրջ 5 տոկոս):
34. Հանրագումարում՝ մինչև 2031 թվականը ողջ տնտեսությունում կստեղծվի **300 հազարից ավելի աշխատատեղ**, որից 100 հազարը մշակող արդյունաբերությունում:
35. Նշված զարգացումների արդյունքում նշանակալիորեն կփոխվի զբաղվածության կառուցվածքը: Մշակող արդյունաբերությունում զբաղվածների մասնաբաժինը համադրելի կդառնա ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրների համապատասխան ցուցանիշների հետ:

36. Զբաղվածության աճը ազդելու է նաև ինչպես գործազրկության մակարդակի վրա, այնպես էլ մասնակցության (ակտիվության մակարդակ) ցուցանիշի վրա: Գործազրկությունը կկրճատվի՝ հասնելով 9 տոկոսի, իսկ մասնակցության մակարդակը ներկայիս 59 տոկոսից կհասնի 71 տոկոսի:
37. Առաջանցիկ տեմպերով աճելու է զբաղվածության և մասնակցության մակարդակը 20-64 տարեկանների շրջանում և 2031 թ. համադրելի կլինի ԵՄ երկրների համապատասխան ցուցանիշների հետ: 20-64 տարեկանների շրջանում զբաղվածությունը կաճի առաջանցիկ տեմպերով՝ 2031 թ. հասնելով 75 տոկոսի՝ ընթացիկ 60 տոկոսի:
38. Էականորեն փոխվելու է զբաղվածության սեռային կառուցվածքը: Հայաստանը ունի նշանակալի չօգտագործված աշխատանքային ռեսուրսներ կանանց շրջանում, որոնց զբաղվածության մակարդակը ընդամենը 42 տոկոս է: Նախատեսվում է, որ բարձր արտադրողականությամբ աշխատեղերի ստեղծումը պահանջելու է հմտությունների այնպիսի շրջանակ, որոնք շատ ավելի պակաս են կախված լինելու սեռով պայմանավորված գործոններից: Ուստի, զբաղվածության մակարդակը կանանց շրջանում 2031թ. կհասնի 61 տոկոսի: Տղամարդկանց զբաղվածության մակարդակը կբարձրանա ևս, ներկայիս 60 տոկոսից հասնելով գրեթե 70 տոկոսի:


Մինչև 2031թ. լրացուցիչ զբաղվածության ստեղծման շրջանակը



Մշակող արդյունաբերությունում արժեքային շղթաների և զբաղվածության հետազոտություն

Մշակող արդյունաբերությունում ներդրումային քաղաքականության ուղեգիծը սահմանվելու է Հարվարդի տնտեսական բարդության լաբորատորիայի կողմից առաջարկվող ապրանքային դասակարգմամբ: Ըստ այդ մոտեցման, ապրանքները դասակարգվում են ըստ արտադրության բարդության աստիճանի, որն իրենից ներկայացնում է օգտագործվող միջանկյալ ապրանքների և աշխատուժի բարդության համակցություն:

Որքան ավելի բարդ է արտադրվող ապրանքը, այնքան ավելի խորն է այն պահանջում բարդ մատակարարման շղթաներ, ինչպես մշակող արդյունաբերությունում, այնպես էլ այլ ճյուղերում:



Նախնական գնահատականներով, մշակող արդյունաբերությունը ստեղծվող աշխատատեղերը կունենան հետևյալ բաշխումը՝ ըստ ապրանքի բարդության ինդեքսի (Product Complexity Index)

Ստեղծվող աշխատատեղերի բաշխումը	PCI	Արտադրողականություն, 1 զբաղվածի կտրվածքով
20 տոկոս	Բարձր (PCI>1.5, միջին 1.85)	50 մլն. դրամ / տարեկան
30 տոկոս	Միջին (PCA> 0.5, միջին 0.8)	30 մլն. դրամ / տարեկան
50 տոկոս	Միջինից ծացր (PCI ընկած -1 և 0 միջև, միջինը -0.5)	20 մլն. դրամ / տարեկան

➤ **Աշխատանքի շուկայի քաղաքականություններ**

39. Տնտեսությունում նշանակալի կառուցվածքային փոփոխությունները պահանջելու են նաև աշխատանքի շուկայի քաղաքականությունների, ինչպես նաև դրանց հետ անմիջականորեն փոխկապակցված կրթության ոլորտում մոտեցումների վերանայումներ:
40. **Գործազրկության նպաստները:** Աշխատանքի շուկայի քաղաքականությունների մասով գլխավոր փոփոխությունը պետք է լինի գործազրկության նպաստների ներմուծումը: Թիրախավորվող գործազրկության մակարդակը փաստացի շատ մոտ է լինելու գործազրկության բնական (կառուցվածքային) ցուցանիշին և նպաստները խաղալու են իրենց հիմնական դերը՝ ապահովագրելով աշխատանք կորցնողներին եկամտի կտրուկ անկումից:
41. Լրացուցիչ ուսումնասիրություններ են իրականացվելու նպաստների ծածկման գործակիցը (replacement rate) և տևողությունը որոշելու համար: Դրանք կախված են լինելու տնտեսությունում գերակայող ազատ աշխատատեղերի համալրման միջին տևողությունից և նվազագույն սպառում ապահովելու համար անհրաժեշտ միջոցներից:
42. Նպաստների առկայությունը ինքնին թույլ կտա ունենալ վարչական ավելի ամբողջական տվյալներ գործազուրկների վերաբերյալ և իրականացնել առավել նպատակադրված քաղաքականություն: Ներկայումս, նպաստների բացակայության պայմաններում որպես պաշտոնական գործազուրկ գրանցվելու խթանները շատ թույլ են, ինչով էլ պայմանավորված դրանց միայն մեկ-երրորդն է գրանցվում որպես գործազուրկ: Գործող նպաստների պարագայում այդ ցուցանիշը մոտ է լինելու ամբողջական ծածկույթին:
43. Գործազրկության նպաստների կարևոր գործառույթներից մեկը աշխատանք փնտրողներին բավականաչափ ժամանակ տալն է՝ իրենց հմտությունների համապատասխան աշխատանք գտնելու համար: Փաստացի դրանք թույլ են տալիս աշխատանքի շուկայում բարձրացնել համապատասխանեցման (matching) մակարդակը՝ դրական ազդելով աշխատանքային ռեսուրսների օպտիմալ օգտագործման վրա: Ավելի լավ համապատասխանեցումը (matching) հանգեցնում է արտադրողականության աճի և շրջանառության (job turnover) ավելի ցածր ցուցանիշի: Դրանք նաև հանդիսանում են լրացուցիչ քաղաքականության գործիքներ, քանի որ ունեն ֆիսկալ բարձր բազմապատկիչ, կրճատում են ռեցեսիաների խորությունը և տևողությունը, սատարում են համախառն պահանջարկի պահպանմանը:
44. Ներկայիս թվային տեխնոլոգիաների պայմաններում հնարավոր է իրականացնել առավել տարբերակված նպաստների համակարգ, որի պարագայում հաշվի է առնվում մասնագիտության յուրահատկությունները, լրացուցիչ վերապատրաստում անցնելու պահանջները, աշխարհագրական առանձնահատկությունները և այլն: Օրինակ՝ նպաստների տևողությունը կարող է կախվածության մեջ դրվել՝ գործազուրկի վերապատրաստման ջանքերից և պատրաստակամությունից և հաշվի առնել աշխատանք փնտրելու նրա ջանքերը (որոնք հիմնականում թողնում են թվային հետագիծ և հաշվելի են):
45. **Վերափոխված ակտիվ քաղականությունները:** Պետք է հաշվի առնել, որ պաշտոնապես գրանցված գործազուրկների մասով հնարավոր է հավաքել առավել համապարփակ անձնական մակարդակի տվյալներ, իսկ նպաստների համակարգը կապահովվի գրանցման մակարդակի գրեթե ամբողջական ծածկույթ: Դա հնարավորություն կընձեռի իրականացնել որակապես այլ մակարդակի ակտիվ քաղաքականություններ, որոնք օգտագործելով արհեստական բանականության (ԱԲ) և մեքենայական ուսուցման (ՄՈՒ)

գործիքակազմը կփոխարինեն ավանդական աշխատանքի շուկայի ակտիվ քաղաքականությունները, ինչպիսիք են, օրինակ՝ վերապատրաստման խմբերը, ավանդական աշխատանք փնտրելու աջակցությունը, այսինքն՝ բոլոր այն մոտեցումները, որոնք օգտագործում են համասեռ միջամտություններ աշխատանք փնտրողների մեծ խմբերի համար:

46. Միևնույն միջամտությունները կարող են ունենալ տարբեր ազդեցություններ՝ կախված հմտություններից, փորձից, մոտիվացիայից և տեղում եղած աշխատանքի պահանջարկից: Մյուս կողմից՝ կառավարությունը կտիրապետի մեծ և ամբողջական վարչական տվյալների, աշխատանքի շուկայի վերաբերյալ իրական ժամանակում տեղեկատվության և ԱԲ/ՄՈւ գործիքների: Դա թույլ կտա կիրառել ակտիվ քաղաքականությունների նոր սերունդ, որոնք ավելի թիրախային են և հարմարեցված կոնկրետ մարդու պահանջներին, և իրենց բնույթով ավելի պրոակտիվ են քան ռեակտիվ:
47. Ակտիվ քաղաքականությունների փիլիսոփայության փոփոխությունը անդրադառնում է նաև կանխատեսման մոդելների կիրառման վրա: ԱԲ/ՄՈւ նույն մոդելների, առնվազն ֆորմալ զբաղվածության հատվածում, օգտագործումը հնարավոր կդարձնի կանխատեսել աշխատանք կորցնողների թիվը և հիմնական բնութագրիչները՝ օգտագործելով հարկային հատվածում կուտակվող մեծ տվյալները: Կկիրառվեն նաև առաջադեմ մոդելներ, որոնք թույլ կտան կանխատեսել հմտությունների պահանջարկը առաջիկա տարիների համար:
48. Փաստացի ակտիվ քաղականությունների մոտեցումները կրկնօրինակելու են արդեն իսկ բիզնես ոլորտում լայն տարածում ունեցող «Know Your Customer» մոդելը, որի պարագայում աշխատանքը տարվում է ոչ թե միջինացված գործազուրկի կամ աշխատանք կորցնելու բարձր հավանականություն ունեցողների միջինացված նկարագիր ունեցողի հետ, այլ կոնկրետ մարդու հետ:

➤ **Աշխատանքի շուկային առնչվող կրթական քաղաքականություններ**

49. Մշակող արդյունաբերությունը պահանջում է համապատասխան որակավորման աշխատուժ, որի հիմնական աղբյուրը միջին մասնագիտական կրթական հաստատություններն են: Միջազգային փորձի ուսումնասիրությունը, մասնավորապես ԵՄ երկրներում, վկայում է, որ մշակող արդյունաբերությունում զբաղվածների և արհեստագործական (նախնական միջին մասնագիտական) կրթություն ստացող ուսանողների տեսակարար կշիռները նշանակալիորեն կոռելացված են:
50. Այս առումով, մեր ծրագրի անկյունաքարային նպատակներից մեկը լինելու է արհեստագործական (նախնական միջին մասնագիտական) կրթության (VET) հզորացումը: Առավել կարևոր քաղաքականության ուղղություններից են լինելու՝
 - VET մասնագիտությունների հստակ տարանջատումը բարձրագույն կրթության որակավորումներից.
 - կրթական ծրագրերի տևողության վերանայումը՝ դեպի առավելագույն կրճատում: Այս առումով կարևոր է դառնալու որակավորումների և հատկապես միկրո-որակավորումների (microcredentials) տարածման և ճանաչման գործընթացը, ինչի արդյունքում վերապատրաստումը դառնալու է անընդհատ գործընթաց՝ առանց արտադրությունից կտրվելու.
 - դուալ VET կամ այլ փորձառնական կրթության (experiential learning) համակարգերի առավել համակարգված կիրառում:

51. Միևնույն ժամանակ մշակող արդյունաբերության դերի բարձրացման գործընթացում կարևոր դեր է խաղում նաև բարձրագույն կրթության համակարգը: Այնպիսի երկրներում, ինչպիսիք են Նիդեռլանդները կամ Գերմանիան կիրառական գիտությունների համալսարանների (Universities of Applied Sciences) ընդլայնումը հանդիսացել է որպես արդյունաբերության զարգացման կարևոր խթան: Այդպիսի համակարգերի յուրահատուկ բնութագրիչներից են՝
- պարտադիր փորձնակությունը (internship) արդյունաբերությունում,
 - դուալ ճարտարագիտական կրթական ծրագրերը,
 - նախագծերի վրա հիմնված ուսուցումը ձեռնարկությունների ներգավվածությամբ,
 - արդյունաբերական ձեռնարկությունների կողմից հիմնված և ֆինանսավորվող լաբորատորիաները և այլն:
52. Առանձին քաղաքականություն է վարվելու նաև պահանջարկը խթանելու նպատակով: Հետևելով զարգացած երկրների փորձին, մենք կարևորելու ենք հետևյալ քաղաքականությունների իրագործումը՝
- ճարտարագիտական մասնագիտություններով ընդունվողների համար լրացուցիչ խթանների տրամադրում, ինչպիսիք են կրթաթոշակները կամ կեցության ծախսերի փոխհատուցումը.
 - հաշվի առնելով աշխատանքային ռեսուրսների սեռային բաշխվածությունը և սպասվող զբաղվածության աճը հատկապես 25-40 տարիքային խմբում՝ առանձնահատուկ միջոցառումներ են ձեռնարկվելու STEM ուղղություններով ընդունելությունների կշռում կանանց տեսակարար կշռի բարձրացման համար.
 - համալսարանական կառավարման համակարգերի վերափոխում, որը ուղղակիորեն կընդգրկի արդյունաբերության առաջատարներին ուսումնական ծրագրերի մշակման գործընթացում.
 - կրթական ծրագրերի մասով առանձնահատուկ կարևորություն են ձեռք բերելու մեխանիկական ճարտարագիտությունը (Mechanical engineering), էլեկտրական ճարտարագիտությունը (Electrical Engineering), արդյունաբերական տեղեկատվական տեխնոլոգիաները (Industrial IT), գործընթացների ճարտարագիտությունը (Process Engineering).
 - հաշվի առնելով երկրի չափերով պայմանավորված մասշտաբի էֆեկտի սահմանափակությունը՝ կրթական ծրագրերում նախապատվությունը տրվելու է առավել ընդհանրացված ճարտարագիտական ուղղություններին:

1.3 20,000 մատչելի բնակարաններ

53. **Իրավիճակի գնահատականը և խնդիրները:** Վերջին 10 տարիների ընթացքում Հայաստանում բազմաբնակարան շենքերի բնակարանների քանակը ավելացել է շուրջ 20 հազարով, որից գրեթե 100 տոկոսը Երևանում: Նման իրավիճակը մեծապես պայմանավորված է եղել պետության կողմից վարվող քաղաքականությամբ: 2018 – 2025 թթ. միայն հիպոթեքային վարկի վճարված տոկոսների գումարի վերադարձի գծով պետական բյուջեի փաստացի ծախսերը կազմել են ավելի, քան 300 մլրդ դրամ: 2026 թ. պետական բյուջեով այս ուղղությամբ նախատեսվում է կատարել շուրջ 102 մլրդ դրամ ծախս, որը համարժեք է նույն տարվա բյուջեով առողջապահական ոլորտին նախատեսված հատկացումների շուրջ 50 տոկոսին, իսկ կրթության ոլորտին հատկացումների՝ մոտ 30 տոկոսին:
54. Այդուհանդերձ, վարվող քաղաքականության արդյունավետությունը խնդրահարույց է՝ նկատի ունենալով առանցքային այն խնդիրները, որոնք ի հայտ են եկել այդ քաղաքականության արդյունքում, մասնավորապես՝
- *արհեստական գնաճ*՝ պետական խթանները մեծացրել են պահանջարկը՝ առանց համարժեք առաջարկի աճի, ինչի արդյունքում բնակարանների գները աճել են.
 - *բյուջեպային մեծ բեռ*՝ տոկոսների փոխհատուցման ծրագրերը ստեղծում են հարյուրավոր միլիարդների երկարաժամկետ պարտավորություններ.
 - *անարդյունավետ պետական մասնակցություն*՝ պետությունը հաճախ ֆինանսավորում է բնակարանի արժեքի մեծ մասը՝ առանց բավարար հասցեականության.
 - *քաղաքաշինական անհամաչափ զարգացում*՝ կառուցապատումը տեղի է ունեցել և շարունակում է ունենալ բացառապես Երևանում և հաճախ առաջ է ընկնում ենթակառուցվածքներից՝ ստեղծելով լրացուցիչ համակարգային խնդիրներ:
55. Միաժամանակ հարկ է արձանագրել, որ բնակարանաշինությունը ինքնին չի հանգեցրել բնակարանների մատչելիության խնդիրների էական մեղմմանը, իսկ պետական բյուջեից ահռելի ծախսերի՝ տարեկան ՀՆԱ-ի շուրջ 0.8 տոկոս, պայմաններում շահառուներ են հանդիսացել միջին եկամտից զգալիորեն բարձր բարեկեցություն ունեցող մարդիկ և բանկերը:
56. **Մեր լուծումը՝ մատչելի բնակարանային քաղաքականություն:** Առաջիկա տարիներին նախատեսվող ներդրումային ծրագրերի արդյունքում ակնկալվում է շուրջ 300,000 նոր աշխատատեղի ստեղծում: Այս պայմաններում աշխատուժի մոբիլության բարձրացումը և տեղաբաշխումը դառնում է առանցքային մարտահրավեր:
57. Ուստի, բնակարանաշինությանը աջակցող քաղաքականությունները մենք դիտում ենք որպես ներդրումների ընդլայնմանը և աշխատանքի շուկայի կառուցվածքային տեղաշարժերին նպաստող ենթակառուցվածքային գործիք:
58. Մեր նպատակն է աջակցել այնպիսի նոր բնակարանային ֆոնդի ձևավորմանը, որը թույլ կտա՝
- ապահովել աշխատուժի մոբիլության բարձրացմանը այն ուղղություններով, որտեղ իրականացվում են ներդրումները և ստեղծվում են նոր աշխատատեղեր.
 - լրացնել աշխատուժի պակասը տնտեսության առաջնահերթ ոլորտներում և առանձին տարածաշրջաններում.

- խթանել ներքին միգրացիան դեպի տնտեսական ակտիվության կենտրոններ ու գոտիներ.
 - նվազեցնել տարածաշրջանային զարգացման անհամաչափությունները,
 - բարձրացնել տնտեսության ընդհանուր արդյունավետությունը:
59. Թեև երկարաժամկետ հեռանկարում աշխատատեղերի և բնակարանների հասանելիության զուգորդումը դրականորեն կանդրադառնա նաև ժողովրդագրական միտումների վրա, այդուհանդերձ, ծրագրի շրջանակում նման զարգացումները դիտվում են որպես ուղեկցող ազդեցության դրսևորում:
60. Մենք որդեգրելու ենք աջակցության **նոր մոդել**, որը՝
- կնպաստի բնակարանների ինքնարժեքի նվազմանը,
 - հնարավորինս կբացառի շուկայի խեղաթյուրումը,
 - չի ստեղծի երկարաժամկետ անհարկի բյուջետային բեռ,
 - կծառայի հստակ սահմանված տնտեսական նպատակներին:
61. Մեր քաղաքականությունը միտված է լինելու պետություն – մասնավոր հատված արդյունավետ համագործակցությանը՝ առաջնորդվելով հետևյալ հիմնական մոտեցումներով և սկզբունքներով՝
- պետությունը **տրամադրում է հողատարածքները՝ հիմնական ենթակառուցվածքներին հասանելիության ապահովմամբ.**
 - մասնավոր հատվածը **կենտրոնանում է կառուցապատման վրա.**
 - սահմանվում են **գների վերին շեմեր՝** բացառելով սպեկուլյատիվ գնաճը.
 - տրամադրվում է սահմանափակ ծավալներով, **խիստ նպատակային պետական ֆինանսական աջակցություն.**
 - ապահովվում է **թափանցիկ և մրցակցային միջավայր:**
62. **Ակնկալվող արդյունքը:** Վարվող քաղաքականությունը նպաստելու է շուրջ 20,000 մատչելի բնակարանների առկայությանը ի շնորհիվ պետական աջակցության նպատակային ծրագրերի՝ իր ավանդը բերելով տնտեսության կառուցվածքային փոփոխություններին, տնտեսական ակտիվության բարձրացմանն ու լրացուցիչ ներդրումների ներգրավմանը:

1.4 Հարկաբյուջետային քաղաքականությունը

Հարկային քաղաքականության հիմնական սկզբունքները և նպատակադրումները

63. Մենք հանդես է գալիս **աջ պահպանողական տնտեսական քաղաքականությամբ**, որի հիմքում են՝ **մասնավոր նախաձեռնության ազատությունը, ցածր հարկային բեռը, ներդրումների ներգրավումը, արտադրության ընդլայնումը, արտահանման խթանումը և պետական ֆինանսների պատասխանատու կառավարումը:**
64. **Մենք** համոզված ենք, որ Հայաստանի տնտեսական հզորացման հիմնական ճանապարհը ոչ թե հարկերի անվերջ բարձրացումն է, այլ **արտադրող տնտեսության ձևավորումը, վերազգային կորպորացիաների ներգրավումը, արտահանելի հատվածների զարգացումը, նորաստեղծ բիզնեսների արագ աճը և ստվերի կրճատման հաշվին հարկային բազայի ընդլայնումը:**
65. Մեր հարկաբյուջետային քաղաքականության նպատակը հետևյալն է՝ **Հայաստանը դարձնել ցածր հարկերով, պարզ կանոններով, ներդրումների համար կանխատեսելի և տարածաշրջանային մրցունակ երկիր:**

I. Հնարավորինս ցածր անվանական հարկային բեռ

66. Պետությունը չպետք է տնտեսության զարգացումը խեղդի բարձր հարկերով: Մենք առաջնորդվելու ենք այն սկզբունքով, որ **քաղաքացիների և բիզնեսի մոտ պետք է մնա հնարավորինս շատ միջոց՝ սպառման, խնայողության և ներդրման համար:**
67. Մեր նպատակն է ձևավորել այնպիսի հարկային համակարգ, որտեղ՝
- հարկային դրույքաչափերը կլինեն **մրցունակ և տարածաշրջանային համեմատությամբ գրավիչ,**
 - հարկային քաղաքականությունը չի պատժի աշխատանքը, ձեռներեցությունը և կապիտալի կուտակումը,
 - տնտեսական աճը կդառնա բյուջետային եկամուտների հիմնական աղբյուրը, ոչ թե հարկային ճնշման աճը:

II. Փոքր և սկսնակ բիզնեսների հարկային արձակուրդներ

68. Փոքր բիզնեսը պետության համար ռիսկի աղբյուր չէ, այլ ապագա աշխատատեղերի, նորարարության և միջին խավի ձևավորման հիմք: Մենք նախատեսում ենք՝
- կիրառել շրջանառության հարկի 0-ական դրույքաչափի սահմանում,
 - հարկային և կարգավորիչ միջավայր, որը թույլ կտա բիզնեսին նախ կայանալ, հետո միայն լիարժեք հարկվել:
69. Մեր մոտեցումն է՝ **նախ օգնել բիզնեսին ոտքի կանգնել, հետո միայն ակնկալել ամբողջական բեռով հարկում:**

III. Ուղղակի հարկերի մասնաբաժնի նվազեցում

70. Մենք նպատակադրված ենք **հարկային եկամուտների կառուցվածքում նվազեցնել ուղղակի հարկերի՝ եկամտահարկի և շահութահարկի տեսակարար կշիռը՝** ավելի մեծ դեր հատկացնելով անուղղակի հարկերին:
71. Այս մոտեցումը թույլ է տալիս՝

- խրախուսել աշխատանքը, ներդրումները և ձեռնարկատիրական շահույթը,
- բարձրացնել տնտեսության մրցունակությունը,
- նվազեցնել կապիտալի և որակյալ աշխատուժի արտահոսքի ռիսկը,
- հարկային համակարգը դարձնել ավելի բարենպաստ երկարաժամկետ աճի համար:

72. Մենք գտնում ենք, որ **արտադրող, ներդրումային և արտահանող տնտեսության համար ուղղակի հարկերի չափավոր մակարդակը ռազմավարական առավելություն է:**

IV. Եկամտահարկի և շահութահարկի մրցակցային առավելություն

73. Հայաստանը պետք է հարկային քաղաքականությամբ մրցի ներդրումների համար: Մեր նպատակը ոչ թե պարզապես «ոչ վատ լինելն» է, այլ **Վրաստանի, Մոլդովայի և արևելաեվրոպական փոքր մրցակից երկրների համեմատ ներդրողների համար ավելի շահավետ հարկային միջավայր առաջարկելը:**

74. Այդ նպատակով մենք իրականացնելու ենք քաղաքականություն, որով՝

- **եկամտահարկը** կլինի տարածաշրջանում ամենագրավիչներից մեկը,
- **շահութահարկը** չի խոչընդոտի արտադրական և արտահանող ներդրումներին,
- հատուկ խթաններ կգործեն մշակող արդյունաբերության, արտահանման և ռազմավարական ներդրումների համար,
- Հայաստանը կդառնա հարթակ՝ միջազգային արտադրական շղթաների տեղաբաշխման համար:

75. Մեր ուղերձը պարզ է՝ **ոլ ստեղծում է աշխատատեղ, արտադրություն և արտահանում, պետք է Հայաստանում հարկային առումով շահի, ոչ թե տուժի:**

V. ԱԱՀ արդյունավետության բարձրացում

76. Մենք տեսնում ենք, որ Հայաստանում ԱԱՀ-ի անվանական դրույքաչափը բարձր է, սակայն դրա **արդյունավետ հավաքագրման մակարդակը բավարար չէ:**

77. Մեր նպատակը ոչ միայն դրույքաչափի սահմանելն է, այլ **ԱԱՀ-ի արդյունավետ դրույքաչափը բարձրացնել 2–3 տոկոսային կետով՝** առանց տնտեսությունը լրացուցիչ ճնշելու: Դա իրականացվելու է՝

- արտոնությունների և բացերի վերանայմամբ,
- ստվերի կրճատմամբ,
- շղթայական հաշվառման բարելավմամբ,
- թվայնացված վերահսկողությամբ և վերադարձների ավելի ճշգրիտ համակարգով:

78. Այսինքն՝ մեր խնդիրը **ոչ թե անվանական դրույքաչափը բարձրացնելն է, այլ գործող համակարգից ավելի լիարժեք եկամուտ ապահովելը:**

79. Մենք համոզված ենք, որ ճիշտ վարչարարության և հարկային բազայի ընդլայնման դեպքում հնարավոր է ապահովել ավելի բարձր ընդհանուր արդյունավետություն:

VI. Հարկային օրենսդրության և վարչարարության արդիականացում

80. Հայաստանի հարկային համակարգի գլխավոր խնդիրներից մեկն այսօր բարդությունն ու անկանխատեսելիությունն է: Բիզնեսը հաճախ բախվում է ոչ միայն բարձր ծախսերի, այլ նաև անորոշության:

81. Մենք իրականացնելու ենք **հարկային օրենսդրության լայնածավալ պարզեցում և արդիականացում**, որի շրջանակում՝

- հարկային կանոնները կդառնան **հստակ, կայուն և հասկանալի**,
 - կնվազի օրենքների և ենթաօրենսդրական ակտերի հակասականությունը,
 - կկրճատվեն հաշվետվությունների, ստուգումների և վարչարարության ծախսերը,
 - կզարգանա ամբողջական թվայնացում,
 - հարկ վճարող-պետություն հարաբերությունը կստեղծվի պատժիչից դեպի սպասարկող տրամաբանություն:
82. Մեր նպատակը հետևյալն է **հարկային համակարգը պետք է հեշտ լինի բարեխիղճ հարկ վճարողի համար և բարդ՝ խուսափողի համար:**
83. Հարկային բարեփոխումները մենք դիտարկում ենք ոչ թե մեկուսացված, այլ՝ մեր տնտեսական քաղաքականության համատեքստում և **պատասխանատու ֆիսկալ քաղաքականության** շրջանակում:

Պեղական ծախսային քաղաքականության մեր տեսլականը

84. **Իրավիճակի գնահատականը և խնդիրները:** Այսօր իշխանությունները բերում են տարբեր պատճառաբանություններ ֆիսկալ իրավիճակի կտրուկ վատթարացումը՝ պետական պարտքի և հատկապես դրա սպասարկման ծախսերի զգալի ավելացումը հիմնավորելու համար, խոսում են «ոսկե կանոնների» մասին, ընդ որում՝ դրանք սահմանվել են նախորդ իշխանությունների կողմից, բայց իրականում դրանք վերածել են պարտքի կուտակման մեխանիզմի:
85. Պարտքի սահմանաչափի առկայությունը չի կանխել, այլ հակառակը՝ խրախուսել է ծախսերի անվերահսկելի աճը. 2017 թվականից ի վեր կտրուկ աճել են կապիտալ ծախսերը, դեֆիցիտը և պետական պարտքը, իսկ պետական պարտքի սպասարկման ծախսերը գրեթե եռապատկվել են: Ավելին, գնալով մեծանում է թանկարժեք ներքին պարտքի բաժինը՝ շուրջ 10 տոկոս տոկոսադրույքով, այն դեպքում, երբ արտաքին պարտքը հնարավոր է ներգրավել մոտ 4 տոկոսով, և դա արվում է արժևորվող դրամի պայմաններում՝ լրացուցիչ բեռ դնելով բյուջեի վրա:
86. Միաժամանակ իրականացվում են միլիարդավոր դրամների ծրագրեր՝ առանց պատշաճ ֆինանսատնտեսական գնահատականների. «Ակադեմիական քաղաքի» դեպքում դրանք ընդհանրապես բացակայում են, կառուցվում են դպրոցներ, մանկապարտեզներ և ճանապարհներ, բայց դրանց պահպանման և շահագործման ծախսերը տարիներով թերակատարվում են:
87. Այդուհանդերձ, երբ մոտենում են ընտրությունները, նույն այս իշխանությունները հանկարծ սկսում են հիշել կենսաթոշակառուներին. 2025 թվականին աշխատանքային կենսաթոշակի իրական գնողունակությունը կազմել է 2017 թվականի մակարդակի ընդամենը շուրջ 91 տոկոսը, այսինքն՝ թոշակառու իրականում դարձել է ավելի աղքատ, բայց ընտրություններից ընդամենը ամիսներ առաջ, արդեն հաստատված բյուջեից հետո, որոշվում է կենսաթոշակները բարձրացնել տասնյակ միլիարդներով՝ օրինակ շուրջ 80 միլիարդ դրամով, առանց ցույց տալու այդ գումարի կայուն աղբյուրը: Սա սոցիալական քաղաքականություն չէ. սա ընտրություններից առաջ պարտք բաժանելու քաղաքականություն է, որի գինը վաղը վճարելու են նույն քաղաքացիները՝ ավելի բարձր հարկերով, ավելի մեծ պարտքով և ավելի քիչ հնարավորություններով իրենց երեխաների համար:

88. Պետությունը չի կարող բոլոր ոլորտները հայտարարել ծախսային գերակայություն, ինչպես դա արվում է այսօր. բավական է կարդալ միջնաժամկետ ծախսերի ծրագրերը կամ բյուջետային բացատրագրերը՝ համոզվելու համար, որ «գերակայություն» բառը կիրառվում է գրեթե ամեն ինչի նկատմամբ, ինչը իրականում նշանակում է՝ գերակայություն չկա:

Ի՞նչ ենք մենք անելու

89. Մեր նպատակն է հասնել իրական ֆիսկալ հավասարակշռվածության, ինչը մեզ հնարավորություն կտա նվազեցնել պետական հատվածի կողմից ֆինանսական շուկաների վրա գործադրվող ճնշումը և կնպաստի մասնավոր հատվածի համար վարկերի տոկոսադրույքների նվազմանը, ինչը կենսական նշանակություն ունի ներդրումների և արտադրության ընդլայնման համար:

90. Մենք ունենալու ենք հստակ և սահմանափակ ծախսային առաջնահերթություններ՝ ընդամենը երեքը.

- **առաջինը՝ կրթություն:** Մենք նպատակ ենք դնում շեշտակի բարձրացնել կրթության ծախսերը, սակայն այդ ծախսերի միայն մոտ 20 տոկոսն են լինելու կապիտալ ծախսերը. մեր առաջնահերթությունը լինելու է ուսուցչի որակը, աշխատավարձը և կրթության բովանդակությունը, ոչ թե միայն շենքերի կառուցումը, մինչև 2031թ մենք նախատեսում ենք ավելի քան կրկնապատկել ուսուցիչների աշխատավարձերը
- **երկրորդը՝ երեխա ունեցող ընտանիքների աղքատության գրեթե վերացում:** Այսօր Հայաստանում ամենախոցելի խմբերից են հենց երեխա ունեցող ընտանիքները. ընդհանուր աղքատության շուրջ 21 տոկոսի պայմաններում այդ ընտանիքների մոտ 31 տոկոսը աղքատ է, մինչդեռ, օրինակ, կենսաթոշակառուների աղքատության մակարդակը կազմում է շուրջ 15 տոկոս: Սա ոչ միայն սոցիալական, այլ նաև ժողովրդագրական խնդիր է և դրա լուծումը լինելու է մեր առաջնահերթություններից մեկը.
- **երրորդը՝ վերամշակող արդյունաբերության ընդլայնման խրախուսում:** Մենք համոզված ենք, որ կայուն եկամուտների և աշխատատեղերի ստեղծման լավագույն միջոցը ոչ թե պետական ծախսերի անվերջ աճն է, այլ արտադրող տնտեսության զարգացումը և արտահանման ընդլայնումը:

91. Այս երեք գերակայություններից բխող լրացուցիչ ծախսերը կիրականացվեն նախ և առաջ գործող բյուջետային ծախսերի խորքային վերանայման և վերաբաշխման, ինչպես նաև հարկման բազայի ընդլայնման միջոցով, այլ ոչ թե նոր պարտքերի կուտակման և ապագա սերունդների հաշվին: Սա է պատասխանատու պետական ֆինանսների կառավարման իրական իմաստը:

92. Մենք հրաժարվում ենք այն մոտեցումից, երբ պետությունը սոցիալ-տնտեսական խնդիրները փորձում է լուծել բացառապես ծախսերի ավելացման միջոցով՝ դա իրականացնելով կամ հարկային բեռի բարձրացման, կամ պետական պարտքի շարունակական աճի հաշվին:

93. Մեր սկզբունքն է՝ **ուժեղ պետություն, բայց ոչ ուռճացված, կայուն բյուջե, բայց ոչ արտադրության գործոնները խեղդող հարկերով, տնտեսական աճին և հանրային ծառայությունների որակի բարձրացմանը միտված պետական ներդրումներ, բայց ոչ ֆինանսատնտեսական պատշաճ փորձաքննություն չանցած մեզանախազծերի**

(օրինակ՝ «ակադեմիական քաղաք»), հարուստների առավել նպաստող հիփոթեքային ծրագրերի և, առավել ևս, ոչ «նախընտրական ասֆալտի» հաշվին:

Ակնկալվող հիմնական արդյունքները

94. Հարկաբյուջետային քաղաքականության մեր վերջնական նպատակներն են՝
- Հայաստանը դարձնել **ներդրումների համար ամենագրավիչ երկրներից մեկը տարածաշրջանում,**
 - ձևավորել **արտադրող և արտահանող տնտեսություն,**
 - խրախուսել **աշխատանքը, ձեռներեցությունը և կապիտալի ձևավորումը,**
 - ապահովել **սոցիալապես ավելի արդար, բայց տնտեսապես ավելի ազատ հարկային համակարգ,**
 - պետական բյուջեն ուժեղացնել ոչ թե հարկային ճնշմամբ, այլ **տնտեսության ընդլայնմամբ և հարկային բազայի աճով:**
95. Մեր համոզմամբ՝ **ցածր հարկերը, պարզ կանոնները, ներդրումային մրցունակությունը և կարգապահ բյուջետային քաղաքականությունը ոչ թե միայն տնտեսական ընտրություն են, այլ ազգային անվտանգության և պետական հզորացման պայման:**

1.5 Արտադրողականության հեղափոխություն և արտահանման վրա հիմնված գյուղատնտեսությունը

97. **Իրավիճակի գնահատականը և խնդիրները:** Խոստումների առատություն, արդյունքների պակաս: Վերջին տարիներին գրեթե բոլոր նախընտրական, ինչպես նաև կառավարության ծրագրերով, ներկայիս կառավարությունը հատկապես առանձնանում է դրանով, գյուղատնտեսության ոլորտին վերաբերող խոստումները իրենց քանակով և հավակնոտությամբ, թերևս, գերազանցում են մնացած բոլոր ոլորտներին:
98. Վերջին **10–15 տարիների ընթացքում** հիմնական խոստումները և գերակա ուղղությունները եղել են.
- կաթիլային ոռոգման համակարգերի զանգվածային կիրառում,
 - ինտենսիվ այգիների հիմնում,
 - «խելոք» անասնազոմերի բազմապատկում,
 - փոքր և միջին ջրամբարների կառուցում,
 - հողերի խոշորացման նպատակով կոոպերացիաների ստեղծում,
 - ջերմոցային տնտեսությունների զգալի ընդլայնում,
 - գյուղատնտեսական ապահովագրության ներդրում,
 - մի շարք այլ ծրագրեր:
99. Գրեթե բոլոր այս նախաձեռնությունները, ստանալով զգալի բյուջետային աջակցություն՝ **տարեկան շուրջ 60–70 մլրդ դրամ**, փաստացի չեն ապահովել ոլորտի համակարգային զարգացում:
100. Դրա մասին վկայում են փաստերը.
- **2025 թվականին**, 2015 թվականի համեմատ, գյուղատնտեսության ՀՆԱ-ն իրական արտահայտությամբ **կրճատվել է շուրջ 20 տոկոսով**,
 - կրճատման տեմպը հատկապես զգալի է եղել վերջին տարիներին:
101. *Արձանագրված բացասական միտումները:* Վերջին տարիներին արձանագրվել են մի շարք մտահոգիչ միտումներ: Այսպես, կարտոֆիլի և բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունները **նվազել են շուրջ 60 տոկոսով**, իսկ լոլիկի ցանքատարածությունները՝ **շուրջ 72 տոկոսով**:
102. Կարելի էր ենթադրել, որ պետական ծրագրերի շնորհիվ ավելացել է արտադրողականությունը: Սակայն իրականությունը հակառակն է՝ **վերջին 7 տարիներին արտադրողականության աճ չի արձանագրվել**:
103. Միաժամանակ, հողերի խոշորացում գործնականում տեղի չի ունեցել, իսկ ոռոգման համակարգերի ֆինանսական ինքնաբավությունը **պատիկներով նվազել է**:
104. Թերևս միակ ենթադրությունը, որը ցուցաբերել է աճ, եղել է **ծաղիկների** արտադրությունը, որի արտահանման ծավալները զգալիորեն աճել են, ընդ որում՝ այս ենթադրությունը չի եղել կառավարության հատուկ գերակայությունների ցանկում և չի ստացել առանձնահատուկ աջակցություն: Սա ցույց է տալիս, որ աճը հնարավոր է, բայց ոչ ներկայիս քաղաքականությամբ:
105. **Գյուղատնտեսության երկու հիմնարար խնդիրները:** Ոլորտում կուտակված խնդիրները բազմաթիվ են, սակայն դրանց շարքում առանձնանում են երկուսը՝
- ցածր արտադրողականությունը և

- իրացման բարձր անորոշությունը:

106. Այս երկու խնդիրները փոխկապակցված են և պահանջում են համակարգային լուծումներ: Մենք, ուսումնասիրելով միջազգային լավագույն փորձը, հասկանում ենք, որ **արտադրողականության աճի խնդիրը չի կարող լուծվել հատվածային ծրագրերով:**

107. Այս համատեքստում մենք մեծ կարևորություն ենք տալու **համակողմանի ազգային ռազմավարության** մշակմանն ու իրականացմանը:

108. **Իրացման խնդիրը**

Ինչու՞ գյուղացին չի կարողանում կանխատեսել իր եկամուտը

Իրացման խնդիրը կարելի է բաժանել երկու մասի.

Առաջին՝ Ֆունդամենտալ լուծում

Ֆունդամենտալ լուծումը գտնվում է *մշակող արդյունաբերության զարգացման և արտահանման շուկաների ընդլայնման մեջ:*

Առանց վերամշակման և արտահանման գյուղատնտեսությունը միշտ կմնա գների տատանումների գոհի կարգավիճակում:

Երկրորդ՝ շուկայի կարճաժամկետ անկայունություն

Այսօր գյուղացիները հաճախ մշակաբույսերի ընտրությունը կատարում են՝ ելնելով **նախորդ տարվա գներից:**

Օրինակ, եթե լուլիկի գինը բարձր էր, հաջորդ տարի շատերը լուլիկ են մշակում:

Արդյունքում՝

- առաջարկը կտրուկ աճում է,
- գները ընկնում են,
- գյուղացիները կրում են վնասներ:

Նույն խնդիրը կա նաև պտղատու այգիների դեպքում, որտեղ բերքի ծավալը մեծապես կախված է բնակլիմայական պայմաններից:

Այսպիսով, **գյուղացին կարող է ունենալ լավ բերք, բայց ցածր գների պատճառով կրել վնասներ:**

➤ **Մեր լուծումը**

Նվազագույն գնման գների ժամանակավոր համակարգ և պետություն-մասնավոր գործընկերության գործիքակազմով սառը-լոգիստիկ շղթայական համակարգերի՝ ամբողջական ցիկլով մթերման կայանների ստեղծում:

109. Մենք նախատեսում ենք՝

- **առաջին տարվանից սկսած որոշ ապրանքների համար սահմանել նվազագույն գնման գներ.**

- ստեղծել տարածաշրջանային ամբողջական ցիկլով մթերային կայաններ, որոնք կապահովեն արտադրանքի ամբողջ հետքերքահավաքային շղթան:

110. Յուրաքանչյուր կայանը ներառելու է՝

- սառնարանային պահեստներ,
- տեսակավորման գծեր,
- փաթեթավորման հարթակներ,
- արագ սառեցման (pre-cooling) համակարգեր,
- բեռնման և տեղափոխման ենթակառուցվածքներ,
- լաբորատոր վերահսկման ծառայություններ,
- արտահանման պատրաստման ենթակառուցվածքներ:

111. Բոլոր մթերման կայաններում, ըստ պահանջի, կներդրվեն՝

- ռիսկերի վերլուծության և կրիտիկական վերահսկողության կետերի սահմանման՝ HACCP համակարգեր,
- սննդի անվտանգության ISO 22000 ստանդարտներ,
- սառը շղթայի վերահսկման համակարգեր,
- թվային հետագծելիության համակարգեր:

112. Արդյունքում, սա թույլ կտա.

արտադրանքը դարձնել շուկայական և արտահանման համար պատրաստ:

113. Այս քաղաքականությունը կհանգեցնի՝

- գյուղացիների եկամտային ռիսկերի նվազեցմանը,
- կանխատեսելիության ավելացմանը,
- արտադրության խթանմանը և վաճառքների ապահովմանը:

Ռազմավարական եզրակացություն

Հայաստանի գյուղատնտեսության խնդիրը նոր ծրագրերի պակասը չէ:
Խնդիրը արդյունքների պակասն է:

Մենք չենք խոստանում նոր անվերջ ծրագրեր:

Մենք խոստանում ենք՝

մեկ ամբողջական ռազմավարություն, որը կբարձրացնի արտադրողականությունը, կկայունացնի եկամուտները և կվերածի գյուղատնտեսությունը արտահանման շարժիչ ուժի:

1.6 Էներգետիկայի զարգացումը

Իրավիճակի գնահատականը և խնդիրները:

I. Արևային էներգետիկայի զարգացման ծրագրի ձևադրում

114. Արևային էներգետիկայի զարգացումը, որպես ոլորտում իր կողմից իրականացված քաղաքականության հիմնական ձեռքբերումներից մեկը համարող ՀՀ կառավարությունը իրականում ձախողել է այդ ծրագիրը, որը ծանր հետևանքներ է ունեցել էլեկտրաէներգետիկ համակարգի համար, մասնավորապես՝
- արևային էներգետիկայի անկառավարելի աճը հանգեցրել է էլեկտրաէներգետիկ համակարգի լուրջ անհամաչափությունների (դիսբալանսի), ինչը Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի համար հուսալիության և անվտանգության ռիսկեր է առաջացրել,
 - էլեկտրաէներգետիկ համակարգի համար ֆինանսական բացասական հետևանքներ է առաջացրել՝ վնասի չափը տարեկան գնահատվում է շուրջ 5 մլրդ դրամ,
 - իրավիճակի շտկմանը ուղղված հապճեպ քայլերը վտանգի տակ են դրել Հայաստանում արևային էներգիայի մեծ ներուժի հետագա իրացման հեռանկարը, որը էներգետիկ ոլորտում համարվում է Հայաստանի հիմնական առավելություններից մեկը:

II. Բնակիչ սպառողների շահերի անտեսման հաշվին էլեկտրաէներգետիկ շուկայի ազատականացում

115. ՀՀ կառավարությունը էներգետիկայի ոլորտում իր կողմից վարված քաղաքականության որպես մյուս կարևոր ձեռքբերում է համարում էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացումը, սակայն շուկայի ազատականացման մեկնարկից չորս տարի անց դեռևս դրական արդյունքները տեսանելի չեն, իսկ բնակիչ սպառողների շահերը մեծապես անտեսված են եղել, մասնավորապես՝
- չնայած նրան, որ Հայաստանում արտադրվող էլեկտրաէներգիայի միջին գինը նվազում է, բնակչության համար էլեկտրաէներգիայի սակագինը ոչ միայն չի նվազել, այլ 2026 թվականին դրա բարձրացումը զսպելու նպատակով պետական բյուջեից 12.3 մլրդ դրամի սուբսիդիա տրամադրելու անհրաժեշտություն է առաջացել,
 - էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացումից առավելապես օգտվում են խոշոր սպառողները, որոնք դրա արդյունքում հասանելիություն են ստացել շուկայի կարգավորվող բաղադրիչում վաճառվող էժան էլեկտրաէներգիային, որի մասով տարեկան խնայողությունը 2026 թվականին գնահատվում է շուրջ 13.6 մլրդ դրամ,
 - էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում մրցակցությունը խիստ սահմանափակ է, գործարքների միայն չնչին մասն է (12 տոկոս) կնքվում շուկայական մեխանիզմներով գնագոյացմամբ՝ առաջարկ-պահանջարկի հիման վրա,
 - դեռևս էլեկտրաէներգետիկ համակարգում ի հայտ չեն եկել նոր համեմատաբար խոշոր արտադրողներ, որոնք պատրաստ կլինեին մրցակցային հիմունքներով գործել շուկայում:

III. Նոր մոդուլային ատոմային կայանի կառուցման արկածախնդիր ծրագիր

116. Գործող կառավարությունը հայտարարել է մինչև ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետի ավարտը՝ 2036 թվականը, նույն հզորությամբ նոր մոդուլային տիպի ատոմային կայանի կառուցման մտադրության մասին՝ առանց նշելու, թե ինչ հիմնավորմամբ է կայացվել այդ որոշումը: Ըստ վերջին գնահատականների՝ մոդուլային տիպի ատոմային կայանի կառուցման գինը ամենաբարձրերից մեկն է և մեկ ՄՎտ-ի հաշվով կազմում է մոտ 7.7 մլն ԱՄՆ դոլար:
117. Հաշվարկները ցույց են տալիս, որ գործող ատոմային կայանի հզորության (400 ՄՎտ) մոդուլային կայանի կառուցման համար կատարված ներդրումների խելամիտ եկամտաբերությամբ հետվերադարձը ապահովվելու համար անհրաժեշտ սակագինը կկազմի՝ 0.133 ԱՄՆ դոլար/կՎտ.ժ (50.5 դրամ/կՎտ.ժ), ինչը մոտ 76 տոկոսով բարձր կլինի այս պահին գործող հաշվեկշռման առավելագույն սակագնից (28.756 դրամ/կՎտ.ժ), իսկ ՀԱԷԿ-ի գործող սակագնից (15.127 դրամ/կՎտ.ժ) 3.3-ից ավել անգամ բարձր կլինի:
118. Վերը բերված գնահատականները կասկածի տակ են դնում Հայաստանի գործող իշխանությունների կողմից հայտարարված փոքր հզորության մոդուլային նոր ատոմային կայանի կառուցման ծրագրի տնտեսական կենսունակությունը:

Աճող պահանջարկ, հնացած մուրեցումներ

119. Հայաստանի էներգետիկ համակարգը մտնում է արագ փոփոխությունների փուլ: Առաջիկա **5 տարիների ընթացքում էլեկտրաէներգիայի պահանջարկը առնվազն 50%-ով աճելու է:**
120. Այս աճի հիմնական աղբյուրները լինելու են՝
- մշակող արդյունաբերության առաջանցիկ զարգացումը,
 - տվյալների կենտրոնների և արհեստական բանականության ենթակառուցվածքների ընդլայնումը,
 - տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի արագ աճը,
 - բնակչության սպառման աճը, որը խթանվելու է տնային արևային կայանների և կուտակիչների տարածմամբ:
121. Այս գործընթացները պահանջում են **նոր էներգետիկ մտածողություն**, քանի որ գործող մոդելը կառուցված է անցյալի պահանջարկի համար և չի համապատասխանում ապագայի տնտեսական կառուցվածքին:
122. Եթե համակարգը չվերափոխվի, աճող պահանջարկը կդառնա՝
- սակագների աճի աղբյուր,
 - ներդրումների սահմանափակման գործոն,
 - տնտեսական զարգացման արգելք:

Մեր տեսլականը

Էներգետիկան՝ արդյունաբերական զարգացման հիմք

123. Մեր քաղաքականության հիմքում երեք սկզբունքներն են՝

- *Էներգետիկ անվտանգություն,*
- *Ֆինանսատնտեսական արդյունավետություն,*

- *Մրցակցություն և ապաքաղաքականացում:*

124. Մենք չենք դիտարկում էներգետիկան որպես վարչական ոլորտ: Մենք դիտարկում ենք այն որպես. **արդյունաբերական զարգացման հիմնական ենթակառուցվածք:**

Էլեկտրաէներգիայի պահանջարկի նոր փուլ

125. Առաջիկա տարիներին Հայաստանի տնտեսության կառուցվածքը կփոխվի: Մշակող արդյունաբերության մասնաբաժնի աճը, ինչպես նաև տվյալների կենտրոնների զարգացումը, կբերեն էներգիայի սպառման զգալի ավելացման:

126. Մեր գնահատականներով մինչև **2031 թվականը** էլեկտրաէներգիայի պահանջարկը **առնվազն առնվազն 50%-ով աճելու է :**

127. Բնակչության սպառումը նույնպես աճելու է՝ ի հաշիվ տնային արևային կայանների և տնային կուտակիչների տարածվածության ընդլայնման, ինչպես նաև էլեկտրականացման գործընթացների:

128. Այս աճը պետք է ընդունել ոչ որպես խնդիր, այլ որպես **տնտեսական զարգացման հնարավորություն:**

Վերականգնվող էներգետիկան՝ գլխավոր ուղղություն

129. Մեր քաղաքականության գլխավոր գերակայությունը լինելու է **վերականգնվող էներգետիկայի մասնաբաժնի զգալի ավելացումը:**

Սակայն, մենք չենք կրկնի անցյալի սխալը՝ անկառավարելի աճ առանց համակարգային լուծումների:

Մեր մոդելը պարզ է.

Արևային կայաններ + կուտակիչներ = Հայաստանի էներգետիկ ապագա

Էլեկտրաէներգիայի կուտակման հեղափոխություն

130. Առանց կուտակման համակարգերի, արևային էներգետիկան չի կարող ապահովել կայունություն:

131. Այդ պատճառով մինչև **2031 թվականը** նախատեսվում է՝

- ստեղծել **անհրաժեշտ հզորությամբ կուտակիչ կայանների համակարգ,**
- զարգացնել ինչպես **ցանցային,** այնպես էլ **տնային կուտակիչները,**
- առավելագույնս օգտագործել **հիդրոկուտակման հնարավորությունները:**

132. Կուտակման համակարգերը թույլ կտան՝

- հավասարակշռել արտադրությունն ու սպառումը,
- նվազեցնել գների տատանումները,
- ապահովել համակարգի կայունությունը:

133. Հայաստանի էլեկտրական ցանցը պետք է անցնի նոր փուլ: ՀԷՑ-ը և ԲԷՑ-ը պետք է աշխատի **Smart Grid սկզբունքով:**

Սա նշանակում է՝

- թվայնացված ցանց,
- իրական ժամանակում կառավարման համակարգեր,
- սպառման ճշգրիտ կառավարում,

- ինքնավար կայանների արդյունավետ ինտեգրում:

Smart Grid-ը թույլ կտա՝

- բարձրացնել հուսալիությունը,
- նվազեցնել կորուստները,
- նվազեցնել սակագնային ճնշումները:

Կարգավորումների ապաքաղաքականացում

134. Էներգետիկ համակարգը չի կարող զարգանալ քաղաքական միջամտությունների պայմաններում:

135. Մենք իրականացնելու ենք.

ՀԾԿՀ-ի ամբողջական ապաքաղաքականացում:

Սա նշանակում է՝

- մասնագիտական որոշումներ,
- բաց և թափանցիկ կարգավորում,
- կանխատեսելի սակագնային քաղաքականություն:

Գները չեն կառավարվի.

քաղաքական նպատակներով:

Գները պետք է որոշվեն.

տնտեսական հաշվարկներով:

Մասնավոր ներդրումների նոր փուլ

136. Էներգետիկ համակարգի զարգացման հիմնական աղբյուրը պետք է լինեն **մասնավոր ներդրումները:**

137. Համակարգային բարեփոխումները թույլ կտան՝

- նվազեցնել ներդրումային ռիսկերը,
- բարձրացնել վստահությունը և կանխատեսելիությունը,
- ներգրավել նոր արտադրողներ:

Սա կնպաստի՝

- մրցակցության աճին,
- գների կայունացմանը,
- նոր տեխնոլոգիաների ներդրմանը:

Ատոմային էներգետիկա

Ոչ քաղաքական, այլ տնտեսական որոշումներ

138. Ատոմային էներգետիկան չի դիտարկվելու որպես քաղաքական կամ գաղափարական հարց:

139. Մենք չենք ընդունում այն մոտեցումը, որ ատոմային էներգետիկան ինքնին ապահովում է էներգետիկ անկախություն:

Ի վերջո,

եթե տեխնոլոգիան պատկանում է որևէ երկրի, կախվածությունը նույնպես առաջանում է այդ երկրից:

Մեր մոտեցումը պարզ է՝

միակ չափանիշը կլինի ֆինանսատնտեսական արդյունավետությունը:

Նոր ատոմային կայանի վերաբերյալ ցանկացած որոշում կընդունվի միայն այն դեպքում, երբ՝

- այն կլինի տնտեսապես հիմնավորված,
- այն կլինի մրցունակ,
- այն չի ստեղծի ավելորդ ֆինանսական բեռ:

Սակագնային քաղաքականություն

Արդար և կանխատեսելի գներ

140. Մեր քաղաքականությունը լինելու է.

կայուն սակագներ՝ առանց քաղաքական միջամտությունների:

141. Գների զսպման հիմնական գործիքները լինելու են՝

- մրցակցությունը,
- տեխնոլոգիական զարգացումը,
- արդյունավետ կառավարումը,
- կորուստների նվազեցումը,

և ոչ թե՛

արհեստական սուբսիդիաները:

Վերջնական տեսլական

Հայաստանի էներգետիկ ապագան կառուցվելու է.

- **վերականգնվող էներգիայի,**
- **կուտակիչների,**
- **թվային ցանցերի և**
- **մրցակցային շուկայի վրա:**

Մեր համոզմամբ.

Արևային կայաններ + կուտակիչներ + Smart Grid

սա է Հայաստանի էներգետիկ ապագայի բանաձևը:

Քաղաքական եզրափակիչ ուղերձ

Էներգետիկական պետք է դադարի լինել քաղաքական գործիք:

Այն պետք է դառնա տնտեսական զարգացման շարժիչ:

Մենք կառուցելու ենք.

**կայուն, մրցունակ և ժամանակակից էներգետիկ համակարգ,
որը կապահովի Հայաստանի արդյունաբերական վերածնունդը:**

2 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Սոցիալական քաղաքականությունը և աղքատության կրճատումը

142. **Իրավիճակը և հիմնական խնդիրները:** 2018-2024 թթ. ընթացքում Հայաստանում աղքատության մակարդակը կրճատվել է ընդամենը 1.8 տոկոսային կետով. 2024 թվականին աղքատության մակարդակը կազմել է 21.7 տոկոս՝ 2018 թվականին արձանագրված 23.5 տոկոսի համեմատ: Զուտ համեմատության կարգով՝ նախորդող 7 տարիների ընթացքում, 2012-2018 թվականներին, աղքատության մակարդակը 3.5 անգամ ավելի շատ է կրճատվել:
143. Կառավարության կողմից 2021 թվականին խոստացված աղքատության «կրկնակի կրճատման» համար առնվազն 2021-2024 թթ. ընթացքում եղել են Կառավարության կողմից նշված պայմանները (միջին տարեկան տնտեսական աճը՝ 8.1 տոկոս), սակայն աղքատության մակարդակն այդ ընթացքում խոստացված 50 տոկոսով նվազելու փոխարեն նվազել է ընդամենը 18 տոկոսով: Կառավարության 2021-2026 թթ. նպատակադրումը չի իրականացել: 2018-2024 թթ. ՀՆԱ աճը շատ փոքր չափով է նպաստել աղքատության նվազմանը: ՀՆԱ մեկ տոկոս աճը նպաստել է աղքատության միջինում ընդամենը 0.07 տոկոսային կետով նվազմանը, ինչը նշանակում է, որ տնտեսական աճի պտուղներից աղքատ խավերը շատ փոքր չափով են օգտվել:
144. 2021-2024 թթ. տնտեսական ու սոցիալական քաղաքականությունները՝ ուղղված տնտեսական աճի արդյունքների բաշխմանն ու վերաբաշխմանը, թիրախավորված չեն եղել ծայրահեղ աղքատության ուղղությամբ: Այս ամենախոցելի խավը փաստորեն չի օգտվել տնտեսական աճից՝ 2018-2024 թթ. ՀՆԱ մեկ տոկոս աճը նպաստել է ծայրահեղ աղքատության նվազմանը ընդամենը 0.01 տոկոսային կետով:
145. Հաշվարկները ցույց են տալիս, որ եթե պետական բյուջեի՝ սոցիալական պաշտպանությանն ուղղված ծախսերի ընդամենը 0.1-0.2 տոկոսը թիրախավորված ծրագրերի միջոցով 2023-2024 թթ. ուղղվեր հատկապես ծայրահեղ աղքատներին, ապա ծայրահեղ աղքատությունը կվերանար: Դա կկազմեր ՀՆԱ-ի 0.01 տոկոսը, իսկ պետական բյուջեի ընդհանուր ծախսերի՝ 0.03-0.05 տոկոսը:
146. Եթե ամենատարբեր թիրախավորված տնտեսական ու սոցիալական ծրագրերով 2023-2024 թթ. պետական բյուջեի ծախսերի 1.2-1.5 տոկոսը ուղղվեր հատկապես աղքատներին, աղքատության մակարդակը 50 տոկոսով կկրճատվեր: Դա կկազմեր ՀՆԱ-ի 0.4-0.5 տոկոսը, իսկ սոցիալական պաշտպանության ծախսերի՝ 4.3-5.5 տոկոսը:
147. Իրականում պետական սոցիալական տրանսֆերտներից (կենսաթոշակներ և նպաստներ) աղքատ բնակչության մեկ շնչի հաշվով եկամուտներն 2018-2024 թթ. աճել են 43 տոկոսով, մինչդեռ ոչ աղքատների բնակչության շրջանում դրանց աճը կազմել է 63 տոկոս: Սա մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ սոցիալական քաղաքականությունը լավ թիրախավորված չէ:
148. *Կենսամակարդակի բարձրացմանն ուղղված ընդհանրական նպաստների համակարգի խնդիրները:* Այս համակարգն ուղղված է աղքատության կրճատմանը, սակայն ունի ընդգրկման, հասցեականության և արդյունավետության մեծ խնդիրներ: 2024 թ. այս նպաստի շահառու է եղել 60,752 ընտանիք, մինչդեռ նախքան նպաստ ստանալը աղքատ է եղել շուրջ 148 հազար ընտանիք: Այսինքն, նույնիսկ լիակատար հասցեականության պարագայում համակարգի շահառու է դարձել աղքատ ընտանիքների 40 տոկոսը:

149. 2024 թ. տվյալների վերլուծությունը վկայում է, որ ընտանեկան նպաստների շահառու բնակչության թվում նախքան նպաստ ստանալն աղքատ է եղել 44.8 տոկոսը, ծայրահեղ աղքատ՝ 18.4 տոկոսը, իսկ ոչ աղքատ՝ 36.8 տոկոսը: Այսինքն, համակարգի հասցեականությունը ընդամենը մոտ 63 տոկոս է: Ընտանիքին ամսական տրամադրվող նպաստի միջին չափը այնքան փոքր է, որ այսպիսի աջակցությունը աղքատության նվազեցման տեսանկյունից արդյունավետ լինել չի կարող: Արդյունքում, վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե ընտանեկան նպաստների համակարգը չգործեր, ապա աղքատ կլինեին բնակչության ոչ թե 21.7 տոկոսը, այլ 23.5 տոկոսը: Այսինքն, աղքատության մակարդակը բարձր կլինեին ընդամենը 1.8 տոկոսային կետով: Իսկ ծայրահեղ աղքատ կլինեին բնակչության ոչ թե 0.6, այլ 2 տոկոսը: Այսինքն, ծայրահեղ աղքատության մակարդակը բարձր կլինեին 1.4 տոկոսային կետով: Տարիների փորձը ցույց է տալիս, որ այս համակարգը համեմատաբար արդյունավետ է ծայրահեղ աղքատներին ծայրահեղ աղքատությունից դուրս բերելու հարցում: Ընտանեկան նպաստ ստացող ծայրահեղ աղքատ ընտանիքների գերակշիռ մասը՝ մոտ 86 տոկոսը մնում է աղքատ, լուծելով միայն իրենց նվազագույն պարենային զամբյուղի լրացման խնդիրը:
150. *Երեխաներ և երեխա ունեցող ընտանիքների աղքատության խնդիրը:* Չնայած տնտեսական աճին՝ 2018-2024 թթ. ընթացքում երեխաների շրջանում աղքատության մակարդակը մնացել է հանրապետական միջինից բարձր և համարյա նվազում չի գրանցել: 2018 թ. աղքատ է եղել մինչև 5 տարեկան երեխաների շուրջ 31.5 տոկոսը, 2024 թ. նվազելով ընդամենը 1.3 տոկոսային կետով և կազմելով 30.2 տոկոս: Նույն միտումն է դիտվում նաև 0-18 տարեկան երեխաների շրջանում: 2024 թ. նրանց 28 տոկոսը աղքատ է եղել: Հարկ է նշել, որ չնայած էական կրճատմանը, այնուամենայնիվ երեխաների շրջանում երկրի միջինից բարձր է մնում նաև ծայրահեղ աղքատությունը: Երեխաներ ունեցող ընտանիքները էապես բարձր աղքատության ռիսկ ունեն: Նույնիսկ մեկ երեխայի առկայությունն ընտանիքում արդեն իսկ բարձրացնում է դրա անդամների աղքատության հավանականությունը: 2024 թ. աղքատ է եղել 1 երեխա ունեցող ընտանիքների 25.7 տոկոսը՝ 2018 թ. նկատմամբ նվազելով ընդամենը 0.4 տոկոսով, 2 երեխա ունեցողների՝ մեկ երրորդից ավելին՝ 33.8 տոկոսը, իսկ 3 և ավելի երեխա ունեցող ընտանիքներից աղքատ են եղել կեսից ավելին՝ 54.8 տոկոսը: Երեխաների և երեխա ունեցող ընտանիքների աղքատությունը նշանակում է աղքատության վերարտադրություն, ապագա սերնդի՝ աղքատությունից դուրս գալու հնարավորությունների սահմանափակվածություն: Այդ պատճառով թիրախային ու հասցեական սոցիալական քաղաքականությունը՝ երեխաների աղքատության տեսանկյունից, շատ կարևոր է: Երեխա ունեցող ընտանիքը աղքատ չպետք է լինի:
151. Երեխաներին ուղղված սոցիալական աջակցության հիմնական թիրախային ծրագրերն են մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի, երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստի, ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու կապակցությամբ նոր ծնված երեխայի ամսական դրամական աջակցության, աշխատող և չաշխատող անձանց մայրության նպաստի ծրագրերը: Այս ծրագրերն, ըստ էության, շարունակում են երեխաներով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության նախորդող, մինչև 2018թ-ը եղած ծրագրերին՝ բովանդակային առումով փոփոխություն մտցնելով միայն ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու կապակցությամբ տրամադրվող դրամական աջակցության մոտեցման մեջ: Դրանց վրա պետական ծախսերն ավելանում են, սակայն երեխաների աղքատությունը շատ դանդաղ է նվազում:

152. 2024 թվականին, 2018 թվականի համեմատ, այս 4 ծրագրերին ուղղվող պետական ծախսերն աճել են մոտ 5.5 անգամ և կազմել մոտ 85 միլիարդ դրամ՝ պետական բյուջեի ծախսերի 2.6, իսկ սոցիալական պաշտպանության ծախսերի մոտ 11 տոկոսը:
153. Միաժամանակ, 2024 թ. տվյալների վերլուծությունը վկայում է, որ աղքատ ընտանիքների 30.1 տոկոսն ունի առնվազն մեկ 0-5 տարեկան երեխա, իսկ 60.3 տոկոսը՝ 0-18 տարեկան առնվազն մեկ երեխա: 0-18 տարեկան առնվազն մեկ երեխա ունեցող բոլոր ընտանիքներին աղքատությունից դուրս բերելու համար անհրաժեշտ գումարը 2024 թ. կազմել է մոտ 57 միլիարդ դրամ: Մինչդեռ, 2024 թ. պետությունը երեխաներով ընտանիքների սոցիալական աջակցության նշված 4 ծրագրերի վրա ծախսել է մոտ 85 միլիարդ դրամ: Այսինքն, երեխա ունեցող աղքատ ընտանիքներին ուղղված թիրախավորված ու հասցեական քաղաքականություն վարելու պարագայում, նշված 4 ծրագրերին ուղղված բյուջետային միջոցների մոտ 67 տոկոսով կարելի էր վերացնել մանկական աղքատությունը:
154. Սա վկայում է, որ այդ ծրագրերը արդյունավետ չեն, դրանք հասցեական ուղղված չեն միայն աղքատ ընտանիքներին, սոցիալական աջակցություն ցույց տալով այդ ծրագրերի բոլոր՝ աղքատ և ոչ աղքատ ընտանիքներին: Արդյունքում, ամեն ընտանիքին հատկացվող աջակցության չափը աղքատ ընտանիքի համար առանձնապես հարց չի լուծում: Միջինում ամսական 50 հազարին մոտ նպաստի կամ դրամական աջակցության չափը աղքատությունից կարող է դուրս բերել ընտանիքի առավելագույնը մեկ անդամի, իսկ եթե ընտանիքը բազմանդամ է, դրա աղքատության հարցը այս նպաստներով չի կարող լուծվել:
155. *«Աշխատող աղքատների» հիմնախնդիրը:* Հայաստանի տնտեսական զարգացման արդի փուլում «աշխատող աղքատներ» երևույթը սոցիալական քաղաքականության ամենաբարդ մարտահրավերներից է: Աշխատողների աղքատությունը ստեղծում է «աղքատության թակարդ» և վերարտադրում է աղքատությունը հաջորդ սերունդների համար: 2024 թ. զբաղվածների 19 տոկոսը աղքատ է եղել: Դրանց մի զգալի մասը պետական/հանրային հատվածի աշխատողներն են, որոնք չեն կարողանում ապահովել իրենց ընտանիքների արժանավայել կենսամակարդակը: Դրանք են, մասնավորապես՝ ուսուցիչները, առողջապահական ոլորտի միջին և կրտսեր անձնակազմը, մշակույթի ոլորտում աշխատողների մի մասը: Պետությունը պետք է երաշխավորի իր համար աշխատողների արժանավայել վարձատրությունը և կենսամակարդակը, ինչը նաև կխթանի նրանց մոտիվացվածությունն ու աշխատանքի արդյունավետությունը: Օրինակ՝ հանրակրթական դպրոցի ուսուցիչների զգալի մասը: 2025 թ. դրությամբ հանրակրթական դպրոցների 29,582 ուսուցիչներից ատեստավորված էր 7,880-ը, կամ ընդամենը 26.6 տոկոսը: Նրանք ստանում են բավական բարձր աշխատավարձեր և իրենց ընտանիքների հետ մեկտեղ կունենան միջին կամ դրանից բարձր կենսամակարդակ: Սակայն, ուսուցիչների երկու երրորդը ատեստավորված չէ: Այսպես, հանրակրթական դպրոցի ուսուցիչը, որը ԲՏԾՄ ոլորտի ուսուցիչ չէ, չի անցել կամավոր ատեստավորում և զբաղված է մեկ դրույքով, ամսական ստանում է մոտ 96 հազար դրամ անվանական աշխատավարձ: Որպես աղքատության շեմ դիտարկելով Առողջապահության նախարարության կողմից մշակված և հրապարակվող նվազագույն սպառողական զամբյուղը (2025թ. չորրորդ եռամսյակի դրությամբ (ՆՍԶ) ամսական կտրվածքով 78,836 դրամ)՝ կարելի է փաստել, որ այս աշխատավարձը գերազանցում է մեկ անձի ՆՍԶ-ն սոսկ 21 տոկոսով՝ 1 դրույք զբաղվածության պարագայում: Այսպիսի մեկ ուսուցիչից և առնվազն մեկ տարիքային կենսաթոշակառուից կամ երեխայից բաղկացած ընտանիքն աղքատ կլինի: Այսպիսի երկու ուսուցիչից և առնվազն մեկ երեխայից բաղկացած ընտանիքը ևս աղքատ կլինի: Աղքատ կլինի նաև այսպիսի մեկ ուսուցիչից և մեկ պետական այլ ոլորտում միջին աշխատավարձի

95 տոկոսը կազմող աշխատավարձով (200 հազար դրամ) աշխատող անդամից և առնվազն 2 երեխայից բաղկացած ընտանիքը:

Ի՞նչ ենք մենք անելու

➤ Երեխաների և երեխա ունեցող ընտանիքների շրջանում աղքատության վերացում

156. **Հիմնական նպատակը՝ երեխա ունեցող ընտանիքը աղքատ չի լինելու:** Մենք որդեգրելու ենք «պետությունը երրորդ ծնող» սկզբունքը՝ առաջին հերթին նպաստելու ենք, որ ծնողներն ի գորու լինեն ապահովել իրենց երեխաների բարեկեցությունը, սակայն բոլոր այն դեպքերում, երբ նրանք օբյեկտիվորեն չեն կարողանում դա անել, դա կանի պետությունը:
157. Երեխաներին ուղղված սոցիալական աջակցության ներկայիս ծրագրերը ցույց են տվել իրենց անարդյունավետությունը՝ երեխաների աղքատության կրճատման և վերացման տեսանկյունից: Սոցիալական քաղաքականության նոր մոտեցմամբ դրանք հիմնովին կփոխվեն՝ աջակցությունը թիրախավորված ու հասցեական ուղղելով երեխա ունեցող՝ հատկապես աղքատ ընտանիքներին: Երեխաների աղքատության վերացմանն ուղղված թիրախային ու հասցեական նոր սոցիալական քաղաքականությունը ներկայումս այդ նպատակին ուղղված բյուջետային ծրագրերի ծախսերի նույնիսկ մոտ 70%-ով կվերացնի մանկական աղքատությունը:
158. Այդ քաղաքականությունը ներառելու է նաև աղքատ ընտանիքներում ծնողների աշխատանքային ակտիվության խթանումը՝ ծնողների համար մասնագիտական վերապատրաստմամբ և խնամքի ծառայությունների հասանելիությամբ:

➤ Պետական ոլորտում աշխատողների շրջանում աղքատության վերացում

159. Մասնավորապես, առաջին հերթին իրականացվելու է պետական հատվածում աշխատող բուժաշխատողների և ուսուցիչների աշխատավարձերի բարձրացում: Երևանում այդ աշխատավարձերը կավելանան տարեկան 20%-ով, իսկ մարզերում՝ տարեկան 25%-ով՝ 2031 թվականին հասնելով ավելի քան կրկնապատկված ցուցանիշի: Պետական հատվածի աշխատողների մեծ մասը չի կարողանում ապահովել ընտանիքի արժանավայել կենսամակարդակ: Աշխատանքային եկամուտների աճը դիտվելու է որպես աղքատության կրճատման հիմնական գործիք: Մենք վերանայելու են հանրային հատվածում աշխատավարձերի քաղաքականությունը, որպեսզի աշխատանքը դառնա աղքատությունից դուրս գալու իրական միջոց:

2.2 Կենսաթոշակային համակարգ

160. **Իրավիճակը և հիմնական խնդիրները:** 2025 թ. տարեվերջին Հայաստանում եղել է շուրջ 503 հազար կենսաթոշակառու: Կենսաթոշակի միջին չափը կազմել է ամսական 49,451 դրամ: Եթե նույնիսկ այդ մակարդակին գումարենք 2026 թ. ապրիլից կենսաթոշակի բազային մասի 10 հազար դրամով ավելացումը, ինչպես նաև անկանխիկ գործարքներից հետվճարի տրամադրումը առավելագույնը 10 հազար դրամի չափով, ապա միջին կենսաթոշակի գնահատված մեծությունը՝ շուրջ 69 հազար դրամ, ավելի պակաս է, քան նվազագույն սպառողական զամբյուղը, որը 2024 թ. վերջին եռամսյակին կազմել է 78,836 դրամ:
161. Մյուս կողմից, 69 հազար դրամ միջին ամսական կենսաթոշակը նշանակում է սոցիալական պաշտպանության ծախսերի ավելացում տարեկան մոտավորապես 120 միլիարդ դրամով: Եթե նկատի ունենանք, որ անկանխիկ գործարքներից հետվճարները նախատեսված են եղել 2026 թ. պետական բյուջեով, ապա ավելացումը 2026 թ. հաստատված բյուջեին այդ

տարվա 9 ամիսների համար կկազմի մոտ 45.3 միլիարդ դրամ: Այս գումարը կազմում է 2026 թ. պետական բյուջեի ընդհանուր ծախսերի 1.2 տոկոսը: Կառավարությունը նշում է, որ բարձրացման տարեկան ազդեցությունը բյուջեի վրա կազմում է մոտ 80 միլիարդ դրամի ավելացում բյուջետային ծախսերին (ինչը կազմում է 2026 թ. պետական բյուջեի ընդհանուր ծախսերի 2.2 տոկոսը և հիմնավորում է պահուստային ֆոնդի միջոցների օգտագործմամբ և այլ վերաբաշխումներով: Սա իհարկե նախատեսված չի եղել ՄԺԾԾ-ով (առնվազն առաջիկա 3 տարիների համար), քանի որ հանկարծակի որոշում է և պարզ չէ, թե արդյոք երկարաժամկետ հեռանկարի համար կա՞ն բյուջետային կանխատեսումներ, որոնք հաստատում են այս բեռի հիմնավորվածությունը և ֆիսկալ կայունությունը:

162. Մինչև 2026 թ. ապրիլի 1-ից կենսաթոշակների բարձրացման որոշման ընդունումը, աշխատանքային կենսաթոշակների (տարիքային, հաշմանդամության, արտոնյալ պայմաններով, երկարամյա ծառայության, մասնակի, կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակների) տրամադրման վրա պետական բյուջեի ծախսերը նախատեսված են եղել 295.4 միլիարդ դրամի չափով: Կենսաթոշակների բարձրացման վերջին որոշման պայմաններում այս գումարը 2026 թ. պետական բյուջեում պետք է դառնա մոտ 341 միլիարդ դրամ: Միևնույն ժամանակ, պետությունը նախատեսել է կուտակային կենսաթոշակի համակարգի մասնակիցների հատկացումների վրա ծախսել 244 միլիարդ դրամ:
163. 2024 թ. աշխատանքային ռեսուրսները ՀՀ-ում (15+ տարեկան ռեզիդենտ/մշտական բնակչություն) կազմել են 2,432 հազար մարդ, որից զբաղվածները կազմել են 48.2 տոկոսը, գործազուրկները՝ 7.4 տոկոսը և աշխատուժից դուրս բնակչությունը՝ 44.4 տոկոսը: Ֆորմալ զբաղվածությունը 2024 թ. կազմել է զբաղվածների 67.8 տոկոսը (804.3 հազար մարդ): Կենսաթոշակային կուտակային համակարգում ընդգրկվածության հնարավորություն ունեցող բնակչությունը 1974 թվականից հետո ծնվածներն են, այսինքն, 2024 թ. դրությամբ մինչև 50 տարեկանները: Պաշտոնական վիճակագրության տվյալներով 15-54 տարեկան ֆորմալ զբաղվածություն ունեցողները 2024 թ. դրությամբ 598.6 հազարն են: Սակայն, 2024 թ. դրությամբ նույն տարիքային խմբում գտնվող գործազուրկները, ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցողները (ըստ էության, գյուղատնտեսությունում զբաղվածներ) և աշխատուժից դուրս բնակչությունը կուտակային համակարգի մասնակից չեն: Բնակչության այս խումբը կազմում է 910 հազար մարդ: Եթե նկատի ունենանք, որ 15-24 տարեկանների գերակշիռ մասը տնտեսապես ոչ ակտիվ է կամ աշխատուժից դուրս է, քանի որ սովորում է հանրակրթությունում, դրանից բարձր կրթամակարդակներում կամ պարտադիր զինծառայող է, նպատակահարմար կլինի դիտարկել 25-54 տարեկանների տարիքային խումբը: Այս խմբում ֆորմալ զբաղվածություն ունի շուրջ 541 հազար մարդ, դրանք կուտակային համակարգի մասնակիցներն են: Գործազուրկ են, ոչ ֆորմալ զբաղվածություն ունեն և աշխատուժից դուրս են 624 հազարը, որոնք ժամանակին կենսաթոշակ կստանան ոչ կուտակային համակարգով:
164. Կուտակային կենսաթոշակային համակարգի ներկայիս կառուցվածքը Հայաստանում առաջացնում է մի շարք հիմնարար հակասություններ, որոնք կարելի է դասակարգել երեք մակարդակով.
 - **Սերունդների միջև սոցիալական պատասխանատվության անհավասարություն:** Նոր սերունդները, որոնք ընդգրկված են կուտակային համակարգում, միաժամանակ կրում են երկակի բեռ. նրանք ապահովում են իրենց ապագա կենսաթոշակը կուտակային ֆոնդի միջոցով և նույն ժամանակ հարկերի միջոցով մասնակցում են ավագ սերնդի

կենսաթոշակային ծախսերի ֆինանսավորմանը: Սա խաթարում է սերունդների միջև սոցիալական համերաշխության սկզբունքը և առաջացնում է արդարության հարցեր:

- **Նույն սերնդի ներսում կենսաթոշակային սխեմաների խզում:** Նույն տարիքային խմբի ներսում ձևավորվում են տարբեր կենսաթոշակային մեխանիզմներ. ֆորմալ զբաղվածության մեջ գտնվողները իրենց ապագա կենսաթոշակը ապահովում են համատեղ՝ պետության և սեփական հատկացումների միջոցով, մինչդեռ նույն սերնդի ոչ ֆորմալ զբաղվածները, գործազուրկները և տնտեսապես ոչ ակտիվները ապագայում կենսաթոշակ կստանան բացառապես պետական համակարգից: Սա ստեղծում է նույն սերնդի ներսում սոցիալական անհավասարություն:
- **Պետության վրա մնացող գերակշիռ բեռ:** Եթե ներկայիս միտումները պահպանվեն, ապա 40 տարի հետո 65 և ավելի տարեկանների միայն մոտ 42%-ը կլինի կուտակային համակարգի շահառու: Մնացած 58%-ի կենսաթոշակային բեռը ամբողջությամբ կընկնի պետության և հարկատուների վրա: Այսպիսով, կուտակային համակարգը պետական բյուջեի ծանրաբեռնվածությունը, միայն մասնակիորեն է թեթևացնելու:

165. Այսպիսով, Հայաստանի կենսաթոշակային համակարգը ներկայումս գտնվում է երկակի ճգնաժամի մեջ: Մի կողմից՝ կենսաթոշակների ներկայիս մակարդակը չի ապահովում արժանավայել կենսամակարդակ, ընդամենը հասնելով նրան, որ կենսաթոշակառուների զգալի մասն ուղղակի աղքատ չլինի: Կենսաթոշակների բարձրացումը նոր ընտրական պրոցեսների անմիջական նախաշեմին նշանակում է պետության ֆիսկալ բեռի նշանակալի ավելացում՝ առանց դրա ֆիսկալ կայունության հիմնավորման ու շարունակական ապահովման երաշխիքների: Մյուս կողմից՝ ապագա կենսաթոշակառուների համար ստեղծված կուտակային համակարգը չի ապահովում և չի ապահովելու ո՛չ պետության վրա ընկած բեռի գերակշիռ մասի թեթևացում, ո՛չ էլ այս համակարգով ստացվելիք կենսաթոշակների բարձր մակարդակ: Չնայած պարտադիր լինելուն, կուտակային համակարգը սահմանափակ ընդգրկում ունի՝ 2024 թ. 25–54 տարեկանների միայն 46%-ն է եղել կուտակային համակարգի մասնակից: Դա նշանակում է, որ այլ հավասար պայմաններում 40 տարի հետո 65+ տարեկանների միայն 42 տոկոսը կստանա կուտակային կենսաթոշակ, իսկ 58 տոկոսի կենսաթոշակային ապահովման բեռը ամբողջությամբ կկրի պետությունը: Միևնույն ժամանակ, ներկայիս ֆորմալ ոլորտում աշխատող և կուտակային համակագում ընդգրկված երիտասարդներն ունեն բարձր կրթամակարդակ և իրավունք ունեն ու ի վիճակի են ռացիոնալ որոշումներ կայացնել իրենց եկամուտների ծախսային և խնայողական մասերի վերաբերյալ: Մինչդեռ, նրանց եկամուտների՝ կուտակային համակարգում հավաքված մասն անձեռնմխելի է, ինչը սահմանափակում է այսօր նրանց տնտեսական ակտիվությանն ու կենսամակարդակի բարձրացմանն ուղղվելիք անհրաժեշտ ծախսերի հնարավորությունները:

Ի՞նչ ենք մենք անելու

- **Կենսաթոշակների բարձրացման հիմնավորված սխեմաների մշակում և կուտակային կենսաթոշակային համակարգի սկզբունքների վերանայում:**

166. Մենք վերանայելու և զգալիորեն բարելավելու ենք կենսաթոշակային համակարգի ներկայիս քաղաքականությունը: 2027 թվականից միջին կենսաթոշակը կբարձրացվի 12000 դրամով:

167. Կենսաթոշակների շարունակական և հետևողական բարձրացումը նոր մոտեցմամբ կթիրախավորի թոշակառուների արժանավայել կենսամակարդակը՝ պետության ֆիսկալ բեռի հստակ հաշվարկմամբ և ֆիսկալ կայունության հիմնավորմամբ, ինչն էլ կապահովի այս քաղաքականության շարունակականությունը:

168. Քննության կառնվելն գործող կուտակային համակարգի հիմնավորվածությունը ֆիսկալ, տնտեսական և սոցիալական ազդեցությունների տեսանկյունից և կդիտարկվեն համակարգի վերանայման հնարավորությունները:

3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

169. **Իրավիճակը և հիմնական խնդիրները:** Հայաստանում կրթությունը տասնամյակներ շարունակ հայտարարվել է որպես առաջին գերակայություն՝ թե՛ նախկին, թե՛ ներկա իշխանությունների կողմից: Այն ներկայացվել է որպես Հայաստանի զարգացման հիմնասյուն: Սակայն, իրական քաղաքականությունը մշտապես հակասել է այս հայտարարություններին:
170. Վերջին տարիներին կրթության ոլորտը **մշտապես թերաֆինանսավորվել է:** 2021–2024 թվականներին կրթության վրա պետական ծախսերը կազմել են միջինը շուրջ **2 տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ**, ինչը շուրջ **2.5 անգամ զիջում է եվրոպական երկրների միջին մակարդակին:** 2025–2026 թվականներին կրթության ծախսերը անվանական աճ են արձանագրել, հատկապես 2026 թվականի բյուջեով: Սակայն այդ աճի շուրջ **95 տոկոսը ուղղվել է կապիտալ ծախսերին**, հիմնականում, այսպես, կոչված «**300 դպրոցի և 500 մանկապարտեզի կառուցման**» ծրագրին:
171. Արդյունքում՝
- 2025–2026 թվականներին կրթության բյուջեի շուրջ **40 տոկոսը բաժին է հասել կապիտալ ծախսերին.**
 - ընթացիկ ծախսերը՝ ներառյալ ուսուցիչների աշխատավարձերը, **իրական արտահայտությամբ գրեթե չեն աճել.**
 - նույնիսկ այս պայմաններում կրթության պետական ծախսերը **չեն գերազանցել ՀՆԱ-ի 3 տոկոսը**, շարունակելով շուրջ **1.5 անգամ զիջել զարգացած երկրներին** (այսպես, օրինակ, կրթության ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ Ավստրալիայում և Հարավային Կորեայում կազմում են շուրջ 5 տոկոս, իսկ Ֆինլանդիայում՝ մոտ 6 տոկոս):
172. **Մասնագիտական կրթության ոլորտի ճգնաժամ:** Եթե հանրակրթությունը թերաֆինանսավորվում է եվրոպական մակարդակներից շուրջ երկու անգամ պակաս, ապա **մասնագիտական կրթության ոլորտում իրավիճակը ավելի խնդրահարույց է:**
173. Այսպես, արհեստագործական և միջին մասնագիտական (VET) կրթության բնագավառում պետական ծախսերը Հայաստանում ՀՆԱ-ի նկատմամբ կազմում են սոսկ 0.11 տոկոս, այն դեպքում, երբ եվրոպական երկրներում այդ ցուցանիշը մոտ է 0.6 տոկոսի՝ Հայաստանի համապատասխան ցուցանիշը գերազանցելով շուրջ 5 անգամ: Բարձրագույն կրթության ոլորտում Հայաստանի և եվրոպական երկրների պետական ծախսերի տարբերությունը ավելի մեծ է, շուրջ 10 անգամ՝ ՀՆԱ-ի նկատմամբ 0.1 տոկոս Հայաստանում և 1.1 տոկոս եվրոպական երկրներում: Այս տարբերությունները **5–10 անգամ են**, ինչը լուրջ սպառնալիք է Հայաստանի տնտեսական զարգացման համար:
174. **Ուսուցիչների համակարգի ճգնաժամ:** Հանրակրթության որակը հնարավոր չէ բարձրացնել առանց ուսուցչի: Ներկայումս ուսուցիչների միջին աշխատավարձը կազմում է **միջին աշխատավարձի մոտ 45 տոկոսը**, իսկ ներդրված ատեստավորման համակարգով աշխատավարձի բարձրացումը պայմանավորված է կամավոր ատեստավորմամբ:
175. Այս համակարգը ստեղծել է հակասական իրավիճակ: Ըստ փորձագիտական գնահատականների՝

- ատեստավորված են ուսուցիչների միայն **20–25 տոկոսը**,
- այսինքն՝ աշակերտների շուրջ **80–85 տոկոսին դասավանդում են ատեստավորում չանցած ուսուցիչներ:**

176. Սա ստեղծում է ոչ միայն մասնագիտական, այլև **սոցիալական անարդարություն:** Առավել ծանր վիճակում են այն ընտանիքները, որոնց երեխաները չեն սովորում ատեստավորված ուսուցիչների մոտ՝ չնայած նրանք վճարում են նույն հարկերը:
177. Արդյունքում՝ ԲՈՒՀ ընդունվողների շուրջ **90 տոկոսը օգտվում է մասնավոր կրկնուսույցներից**, կրթությունը փաստացի դառնում է վճարովի, իսկ սոցիալապես ոչ ապահով ընտանիքների երեխաների հնարավորությունները սահմանափակվում են:
178. **Ծանրաբեռնված ուսումնական պլաններ:** Հայաստանի հանրակրթական ծրագրերը շարունակում են մնալ գերծանրաբեռնված: Ֆինլանդիայի համեմատ՝ դասաժամերի և բովանդակության ծանրաբեռնվածությունը մոտ 30 տոկոսով ավելի է, սակայն արդյունքները՝ ավելի թույլ:
179. **Բարձրագույն կրթության մատչելիության խնդիր:** Այսօր նույնիսկ այն ընտանիքները, որտեղ երկու ծնողներն էլ աշխատում են բարձրագույն կրթության համակարգում, հաճախ չեն կարող ֆինանսավորել իրենց երեխաների կրթությունը: Միևնույն ժամանակ, պետական ԲՈՒՀ-երում աշխատավարձերը ցածր են, դոցենտների աշխատավարձը հաճախ չի գերազանցում 270 հազար դրամը, համակարգը չի կարող ապահովել բարձր որակ:
180. Այս պայմաններում նախաձեռնվել է **ակադեմիական քաղաքի ծրագիրը**, որի արժեքը որոշ գնահատականներով կազմում է **2–3 միլիարդ ԱՄՆ դոլար**, սակայն դրա ֆինանսատնտեսական հիմնավորումները հանրությանը չեն ներկայացվել: Ընդ որում, այդ ներդրումները կենտրոնացած են լինելու տարաբնույթ ենթակառուցվածքներում՝ առանց կրթական և գիտահետազոտական բաղադրիչների բովանդակային փոփոխությունների հստակ մատնանշման:

Ի՞նչ ենք մենք անելու

➤ Կրթության ֆինանսավորման արմատական աճ

Ուսուցիչների աշխատավարձերի արմատական բարձրացում. 2027թ-ից սկսած յուրաքանչյուր տարի ուսուցիչների աշխատավարձերը երևանում կաճեն տարեկան 20%-ով, իսկ մարզերում՝ տարեկան 25%-ով, և 2031ին ավելի քան կրկնապատկված կլինեն:

➤ Ուսումնական պլանների վերանայում

181. Մենք նախատեսում ենք.

- կրճատել դասաժամերի ծանրաբեռնվածությունը,
- վերանայել կրթական չափորոշիչները՝ դրանք համապատասխանեցնելով լավագույն կրթական արդյունքներ ապահովող երկրների չափորոշիչներին:

➤ Բարձրագույն կրթության մատչելիություն ապահովող նոր մոդելի ներդրում

182. Առաջնորդվելով առաջավոր փորձով՝ մենք ներդնելու ենք բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգ, որի հիմքում հետևյալ սկզբունքն է՝ **«Երիտասարդի կրթությունը չպետք է կախված լինի ծնողների եկամուտներից»:**

Պետությունը աջակցելու է ուսանողին, իսկ ուսանողը վերադարձնելու է այդ աջակցությունը միայն այն դեպքում, երբ.

- կստանա աշխատանք,
- կհասնի սահմանված եկամտի մակարդակի:

Այս մոդելը թույլ կտա ընդլայնել կրթության հասանելիությունը, բարձրացնել կրթության որակը, ապահովել համակարգի ֆինանսական կայունությունը:

➤ **Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության (VET) վերակառուցում**

183. Արհեստական բանականության զարգացման և մշակող արդյունաբերության ընդլայնման պայմաններում աշխատաշուկան արագ փոխվում է: Այդ պատճառով մենք մշակելու ենք **արհեստագործական և միջին մասնագիտական կրթության (VET) համակարգի վերակառուցման և ընդլայնման ազգային ռազմավարություն**, որը ներառելու է՝

- նոր մասնագիտությունների ներդրում,
- արտադրության հետ սերտ համագործակցություն,
- ժամանակակից տեխնոլոգիական ուսումնական կենտրոններ,
- արագ վերապատրաստման ծրագրեր:

Կրթությունը՝ ազգային անվտանգության հիմք

Մեր համոզմամբ՝ **կրթությունը ծախս չէ, այլ ներդրում:**

Եվ եթե Հայաստանը ցանկանում է ունենալ.

- զարգացած տնտեսություն
- բարձր արտադրողականություն
- մրցունակ արդյունաբերություն
- ուժեղ պետություն

ապա կրթությունը պետք է դառնա **իրական, ոչ թե ձևական առաջնահերթություն:**

4 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

184. **Իրավիճակը և հիմնական խնդիրները:** Հայաստանում առողջապահությունը երկար տարիներ մնացել է **թերաֆինանսավորված**, և վերջին տարիներին իրավիճակը ոչ միայն չի բարելավվել, այլ որոշ ցուցանիշներով նույնիսկ վատթարացել է: 2021–2025 թվականներին առողջապահության ոլորտում պետական ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ միջինում կազմել են շուրջ **1.7 տոկոս**, ինչը էականորեն զիջում է զարգացած երկրների համապատասխան ցուցանիշներին: Ավելին, այն դեպքում, երբ 2021 թվականին առողջապահության պետական ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են մոտ **2.2 տոկոս**, 2025 թվականին դրանք նվազել են՝ ՀՆԱ-ի նկատմամբ կազմելով մոտ **1.4 տոկոս**: Այսինքն՝ պետական ծախսերի հարաբերական մակարդակը **նվազել է շուրջ 60 տոկոսով**: Սա տեղի է ունեցել այն պայմաններում, երբ բնակչության առողջապահական պահանջարկը աճում է, բժշկական ծառայությունների արժեքը բարձրանում է, իսկ բնակչության ծերացման միտումները ավելացնում են համակարգի վրա ճնշումը:
185. *Զարգացած երկրների հետ համեմատականները* Հայաստանի օգտին չեն: Զարգացած երկրներում առողջապահությունը համարվում է ոչ միայն սոցիալական, այլև տնտեսական առաջնահերթություն: Եվրոպական երկրներում առողջապահության ընդհանուր ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ կազմում են միջինը մոտ 10 տոկոս, որից 70–75 տոկոսը ֆինանսավորվում է պետության կողմից: Այս ցուցանիշների համեմատ Հայաստանում առողջապահության ընդհանուր ծախսերը զգալիորեն ցածր են, պետական մասնակցությունը կազմում է սոսկ 22 տոկոս, իսկ հիմնական ծախսային բեռը կրում են քաղաքացիները:
186. Այսպես, 2025 թվականի պաշտոնական տվյալներով առողջապահության ընդհանուր ծախսերը կազմել են շուրջ 740 մլրդ դրամ, որից պետական ծախսերը կազմել են 165 մլրդ դրամ, այսինքն՝ ընդամենը 22 տոկոս: Սա նշանակում է, որ Հայաստանի քաղաքացիները իրենց առողջության հիմնական բեռը կրում են սեփական միջոցներով, ինչը խորացնում է սոցիալական անհավասարությունը և նվազեցնում բուժման հասանելիությունը:
187. *Համընդհանուր պարտադիր ապահովագրության նախաձեռնության խնդիրները:* 2026 թվականի նախընտրական տարվան ընդառաջ ներկայիս իշխանությունները հայտարարեցին համընդհանուր պարտադիր առողջապահական ապահովագրության համակարգի ներդրման մասին: Ըստ գնահատականների՝ պետական ծախսերը նախատեսվում է ավելացնել ՀՆԱ-ի նկատմամբ մոտ 0.7–0.8 տոկոսով: Սակայն, նույնիսկ այդ դեպքում պետական ֆինանսավորումը կարող է հասնել ընդամենը ընդհանուր ծախսերի 23–25 տոկոսին: Այսինքն՝ համընդհանուր ապահովագրական համակարգը իրականում ծածկելու է առողջապահական ծախսերի մոտ մեկ քառորդը, ինչը միջազգային փորձի համեմատ չափազանց թույլ ֆինանսավորված մոդել է:
188. Այն պարագայում, երբ երկրի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն մոտ 9000 ԱՄՆ դոլար է, իսկ առողջապահության պետական ծախսերը չեն գերազանցում ՀՆԱ-ի 2.5 տոկոսը, չի կարող և չպետք է ներդնի լիարժեք համընդհանուր պարտադիր ապահովագրություն՝ առանց բավարար ֆինանսական հիմքի:
189. *Առաջնային օղակի թուլությունը:* Առողջապահական համակարգի ամենաթույլ օղակներից մեկը մնում է **առաջնային բուժօգնությունը**: Ներկայումս, առաջնային օղակի վրա կատարվող ծախսերը կազմում են ընդամենը պետական առողջապահական ծախսերի մոտ 20 տոկոսը, այն դեպքում, երբ միջազգային փորձը ցույց է տալիս, որ առաջնային

օղակը ամենաարդյունավետ և ամենաէժան միջոցն է հիվանդությունների կանխարգելման և վաղ ախտորոշման համար: Առաջնային օղակի զարգացումը նվազեցնում է հիվանդությունների ծանր դեպքերը, հիվանդանոցային ծանրաբեռնվածությունը և, հետևաբար, ընդհանուր առողջապահական ծախսերը

190. *Բժիշկների աշխատավարձերի խնդիրը:* Առողջապահական համակարգի ամենամեծ խնդիրներից մեկը բժիշկների աշխատավարձերի մակարդակն է, հատկապես առաջնային օղակում: Այսօր Հայաստանում բժիշկների աշխատավարձերը հաճախ զգալիորեն զիջում են միջին աշխատավարձին, հատկապես առաջնային օղակի բժիշկների պարագայում աշխատավարձերը մնում են ցածր և ոչ մրցունակ, ինչը հակասում է միջազգային փորձին:
191. Զարգացած երկրներում բժիշկների աշխատավարձերը էականորեն գերազանցում են միջին աշխատավարձը, քանի որ բժիշկ դառնալու համար պահանջվում է առնվազն 7 տարվա բարձրագույն կրթություն, ինչը զգալիորեն ավելի երկար և բարդ է, քան այլ մասնագիտությունների մեծ մասի համար:
192. Արդյունքում, ցածր աշխատավարձերը հանգեցնում են մասնագիտական արտահոսքի, երիտասարդների կողմից բժշկական մասնագիտություններից հրաժարվելու, առաջնային օղակի թուլացման:
193. *Դեղերի շուկային վերաբերող խնդիրներ:* Դեղերը հանդիսանում են առողջապահական ծախսերի ամենամեծ բաղադրիչներից մեկը: Միջազգային տվյալները ցույց են տալիս, որ զարգացած երկրներում դեղերը կազմում են առողջապահական ընդհանուր ծախսերի մոտ 15–20 տոկոս, իսկ միջին եկամուտ ունեցող երկրներում այդ ցուցանիշը հասնում է մոտ 30 տոկոս: Հայաստանի պաշտոնական տվյալները ցույց են տալիս, որ դեղերը և բժշկական ապրանքները կազմում են շուրջ 23–25 տոկոս առողջապահական ծախսերի, իսկ բնակչության անձնական ծախսերի զգալի մասը ուղղվում է հենց դեղերի ձեռքբերմանը:
194. Միաժամանակ, Հայաստանում դեղերի գները մնում են զգալիորեն բարձր Վրաստանի համեմատ: Հայաստանում դեղերի բարձր գների պատճառներից մեկը դեղերի գրանցման բարդ համակարգն է: Այսօր նույնիսկ եվրոպական երկրներում գրանցված դեղերը պետք է կրկին փորձաքննություն անցնեն Հայաստանում: Սա սահմանափակում է մրցակցությունը, բարձրացնում է գները և դանդաղեցնում է նոր դեղերի մուտքը շուկա

Ի՞նչ ենք մենք անելու

195. Մեր առաջնային նպատակն է՝
 - **ամենաշատ օգտագործվող դեղերի գների շուրջ 20 տոկոսով նվազեցում:**
- **Դեղերի շուկայի ազատականացում**
196. Մենք նախատեսում ենք՝
 - ճանաչել եվրոպական և այլ զարգացած երկրների գրանցումները (FDA/EMA-approved products),
 - վերացնել կրկնվող փորձաքննությունները,
 - պարզեցնել շուկայի մուտքը նոր դեղերի համար:

Սա կնպաստի մրցակցության աճին, գների նվազմանը և բուժման արդյունավետության բարձրացմանը:

➤ **Առողջապահության ֆինանսավորման աճ**

197. Առողջապահությունը լինելու է մեր պետական ծախսային առաջնահերթություններից:

➤ **Առաջնային օղակի արմատական ուժեղացում**

Առողջապահական համակարգում գործող մեխանիզմների լավարկման շնորհիվ մենք նախատեսում ենք՝ 2027թ-ից սկսած յուրաքանչյուր տարի պետական համակարգում բուժաշխատողների աշխատավարձերը երևանում բարձրացնել տարեկան 20%-ով, իսկ մարզերում՝ տարեկան 25%-ով:

Առողջապահությունը և դեղագործությունը՝ որպես արտահանման խոստումնալից գերակա ոլորտ

198. Հայաստանի առողջապահական համակարգը ավանդաբար դիտարկվել է միայն որպես սոցիալական ծառայությունների ոլորտ: Սակայն ժամանակակից աշխարհում առողջապահությունը և դեղագործությունը դարձել են **բարձր ավելացված արժեք ստեղծող տնտեսական ոլորտներ**, որոնք ապահովում են բարձր վարձատրվող աշխատատեղեր, գիտելիքահեն տնտեսության զարգացում արտահանման կայուն եկամուտներ: Հայաստանը ունի բոլոր նախադրյալները այս ոլորտները վերածելու **արտահանման նոր շարժիչ ուժի**:

199. *Առողջապահական ծառայությունների արտահանման ներկա վիճակը:* Հայաստանում առողջապահական ծառայությունների արտահանումը ներկայումս ունի սահմանափակ ծավալ: 2025 թվականին առողջապահական ծառայությունների արտահանումը կազմել է մոտ 50 մլն ԱՄՆ դոլար՝ վերջին 7 տարիների ընթացքում նվազելով մոտ 3 անգամ: Այսօր արտահանման հիմնական ծառայություն է հանդիսանում ատամնաբուժությունը, որը գրեթե ամբողջությամբ իրականացվում է մասնավոր հատվածի կողմից: Սա վկայում է այն մասին, որ նույնիսկ սահմանափակ պետական աջակցությամբ մասնավոր հատվածը կարողացել է ստեղծել միջազգային պահանջարկ ունեցող ծառայություններ:

200. *Հայաստանի առողջապահական համակարգի ներուժը:* Չնայած ֆինանսական խնդիրներին, Հայաստանը ունի զգալի մասնագիտական և ինստիտուցիոնալ ներուժ: Այսօր Հայաստանում գործում է 119 հիվանդանոց, որոնցից 48-ը մասնավոր են: Մասնավոր հիվանդանոցները ապահովում են առողջապահական ծառայությունների կեսից ավելին: Ներկայումս առողջապահական համակարգում աշխատում է շուրջ 13,000 բժիշկ, 17,000 միջին բուժաշխատող, իսկ ոլորտում զբաղվածների ընդհանուր թվաքանակը կազմում է 50,000 մարդ: Բժիշկների հարաբերական թվաքանակով՝ 4.2 բժիշկ յուրաքանչյուր 1000 բնակչի հաշվով, Հայաստանը համադրելի է մի շարք եվրոպական երկրների հետ: Այսպես, այս ցուցանիշով Հայաստանը համադրելի է Չեխիայի հետ և գերազանցում է մի շարք արևելաեվրոպական երկրների ցուցանիշները:

201. *Կրթական ներուժը:* Բժշկական կրթության համակարգը ևս ապահովում է զգալի մասնագիտական հոսք: Այսօր. Հայաստանում գործում է 4 բժշկական բուհ, որոնցից 3-ը մասնավոր են: Այդ հաստատություններում տարեկան շրջանավարտների թվաքանակը կազմում է մոտ 1300 բժիշկ, իսկ միջին մասնագիտական ուսումնական

հաստատությունները տարեկան պատրաստում են շուրջ 1800 բուժաշխատող: Սա կարևոր հիմք է առողջապահական ծառայությունների արտահանման ընդլայնման համար:

202. **Դեղագործական արդյունաբերության ներկա վիճակը:** Հայաստանում դեղագործական արտադրությունը դեռևս ունի սահմանափակ ծավալներ: 2025 թվականին դեղագործական արտադրանքի արտադրությունը կազմել է շուրջ 37 մլն ԱՄՆ դոլար: Արտադրությունը հիմնականում ներառում է դեղագործական պատրաստուկներ և նյութեր: Սակայն, այս ծավալները զգալիորեն փոքր են այն երկրների համեմատ, որոնք դարձել են դեղագործական կենտրոններ (օրինակ՝ Չեխիա, Լեհաստան, Հունգարիա): Այս երկրները կարողացել են ձևավորել դեղագործական արտադրության հզոր արդյունաբերություն՝ ներգրավելով միջազգային ընկերությունների:

➤ **Ինչու՞ Հայաստանը կարող է հաջողել**

203. Հայաստանը ունի մի շարք կարևոր **մրցակցային առավելություններ՝**

▪ **Մարդկային կապիտալ**

Հայաստանում բժիշկների թվաքանակը բարձր է, կրթական համակարգը ապահովում է մասնագետների կայուն հոսք, իսկ բժշկական կրթության արժեքը համեմատաբար ցածր է: Սա ստեղծում է որակյալ և համեմատաբար մատչելի աշխատուժ:

▪ **Մասնավոր հատվածի զարգացում**

Մասնավոր հիվանդանոցները ներկայումս արդեն իսկ ապահովում են ծառայությունների կեսից ավելին, ինչը վկայում է կառավարման ճկունության, ներդրումային փորձի և մրցունակության մասին:

▪ **Տարածաշրջանային դիրք**

Հայաստանը կարող է դառնալ միջազգային բժշկական ծառայությունների կենտրոն, դեղագործական արտադրության տարածաշրջանային հարթակ:

204. **Սահմանափակումները և խնդիրները:** Չնայած առկա ներուժին՝ կան մի շարք լուրջ սահմանափակումներ:

▪ **Կարգավորումների բարդություն**

Դեղագործական և բժշկական ոլորտներում առկա են բարդ գրանցման գործընթացներ, թույլտվությունների ստացման երկարատև գործընթացներ և ավելորդ վարչարարություն, ինչը նվազեցնում է ներդրումների գրավչությունը:

▪ **Շուկայի փոքրություն**

Հայաստանի ներքին շուկան սահմանափակ է: Ուստի, ոլորտի զարգացումը հնարավոր է միայն արտահանման վրա հիմնված մոդելով:

▪ **Ներդրումային խթանների պակաս**

Այսօր միջազգային դեղագործական ընկերությունների համար Հայաստանը դեռևս չի հանդիսանում առաջնային ներդրումային ուղղություն:

Ի՞նչ ենք մենք անելու

➤ **Բժշկական ծառայությունների արտահանման ընդլայնում**

205. Մենք նախատեսում ենք ձևավորել **բժշկական ծառայությունների արտահանման ազգային ծրագիր**, որը կներառի՝ բժշկական տուրիզմի զարգացումը, օտարերկրյա հիվանդների ներգրավումը, որակի միջազգային սերտիֆիկացումը, օտարերկրյա ապահովագրական համակարգերի հետ համագործակցությունը: Առաջնային ուղղություններ են հանդիսանալու՝

- ատամնաբուժությունը,
- վերականգնողական բժշկությունը,
- վիրաբուժությունը,
- ախտորոշիչ ծառայությունները:

➤ **Միջազգային բժշկական կենտրոնների զարգացում**

206. Մենք նախատեսում ենք՝

- խթանել մասնավոր ներդրումները,
- ստեղծել միջազգային մակարդակի հիվանդանոցներ,
- ապահովել միջազգային հավատարմագրումը:

Սա թույլ կտա ներգրավել արտասահմանյան հիվանդներ և բարձրացնել արտահանման ծավալները:

➤ **Ղեղազործական արտադրության ընդլայնում**

207. Մենք նախատեսում ենք ձևավորել՝

- **ղեղազործական արդյունաբերության զարգացման հատուկ ծրագիր**, որը կներառի՝
 - ղեղազործական արտադրական գոտիները,
 - հարկային խթանները,
 - արտահանման աջակցությունը,
 - գիտահետազոտական համագործակցությունը:

➤ **Միջազգային ընկերությունների համար գրավչության բարձրացում**

208. Արևելյան Եվրոպայի փորձը ցույց է տալիս, որ միջազգային ղեղազործական ընկերությունները ընտրում են այն երկրները, որտեղ կան պարզ և կանխատեսելի կանոններ, կա որակյալ աշխատուժ, գործում են հարկային խթաններ և ապահովված է շուկայի հասանելիությունը:

209. Մենք նախատեսում ենք՝

- ներդնել **մեկ պատուհան** սկզբունքով ներդրումային համակարգ,

- արագացնել թույլտվությունների գործընթացները,
- ճանաչել միջազգային սերտիֆիկացումները,
- ապահովել արտահանման ուղղված ենթակառուցվածքներ:

Ի՞նչ արդյունքների ենք ձգտելու

210. Մեր նպատակն է լինելու՝

- բազմապատկել առողջապահական ծառայությունների արտահանումը,
- զարգացնել դեղագործական արտադրությունը,
- ստեղծել բարձր վարձատրվող աշխատատեղեր,
- ձևավորել գիտելիքահեն տնտեսություն:

Ռազմավարական տեսլական

Առողջապահությունը և դեղագործությունը կարող են դառնալ Հայաստանի համար այնպիսի ոլորտներ, ինչպիսին տեղեկատվական տեխնոլոգիաներն են այսօր:

Սա ոչ միայն առողջապահական, այլ տնտեսական ռազմավարություն է:

5 ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՊՈՇՏՈՒՄԸ

5.1 Արդյունահեն հանրային կառավարման համակարգ

211. **Իրավիճակը և հիմնական խնդիրները:**

212. *Կենտրոնացված կառավարում, լրոզված պատասխանատվություն:* Հայաստանի պետական կառավարման համակարգը շարունակում է մնալ **խիստ կենտրոնացված**, ինչը հանգեցնում է որոշումների ընդունման դանդաղեցման, պատասխանատվության լրոզման և մասնագիտական մոտեցումների թուլացման:

213. Չնայած վերջին տարիներին իրականացված ծրագրային բյուջետավորման և պետական գնումների օրենսդրության որոշակի բարեփոխումներին, **նախարարությունների և գործակալությունների կողմից որոշումներ ընդունելու իրավասությունները շարունակում են մնալ խիստ սահմանափակ:**

214. Այս իրավիճակը հանգեցնում է մի շարք բացասական հետևանքների՝ որոշումների ընդունման **անդեմություն**, պատասխանատվության **լրոզում**, քաղաքական դրդապատճառներով որոշումների ընդունում՝ **մասնագիտական հիմնավորումների փոխարեն**, պետական կառավարման արդյունավետության նվազում:

215. *Պետական ծառայության համակարգի խնդիրները:* Վերջին տարիներին պետական ծառայողների աշխատավարձերը որոշ չափով ավելացել են, սակայն համակարգում շարունակում է գործել **պարզևավճարների խիստ սուբյեկտիվ համակարգ**, որը հաճախ օգտագործվում է ոչ թե արդյունքների գնահատման, այլ անձնական կամ քաղաքական մոտիվացիաների համար: Միաժամանակ պետական ծառայությունը շարունակում է գործել **հին, փակ և ոչ արդիական համակարգով**, որի պայմաններում՝

- իրենց չարդարացրած պետական ծառայողները հաճախ **չեն հեռացվում համակարգից**,
- նոր մասնագետների մուտքը համակարգ **խիստ սահմանափակ է**,
- մրցակցությունը պետական համակարգում **գործնականում բացակայում է:**

Արդյունքում, աա հանգեցնում է պետական կառավարման որակի աստիճանական անկման:

216. *Տեսչական մարմինների և կարգավորումների խնդիրները:* Հայաստանում տեսչական մարմինների քանակը **արտառոց մեծ է**, իսկ դրանց գործառույթները հիմնականում կրում են **պատժողական և քաղաքականացված բնույթ**: Տեսչական համակարգը հաճախ չի գործում որպես կանխարգելիչ, խորհրդատվական և/կամ աջակցող կառույց: Այն ավելի շատ գործում է որպես **ճնշման գործիք**, ինչը խոչընդոտում է բիզնեսի զարգացմանը և ներդրումային միջավայրի բարելավմանը:

217. Միաժամանակ **անհարկի կարգավորումները և պարտադիր վճարները շարունակաբար ավելանում են**, հաճախ առանց որևէ ֆինանսատնտեսական և ֆիսկալ հիմնավորման՝ հանգեցնելով բիզնեսի ծախսերի, վարչարարական բեռի և սովերային տնտեսության ռիսկերի ավելացմանը:

218. *Անկախ կարգավորող մարմինների կախվածությունը:* Հայաստանում ձևականորեն անկախ կարգավորող մարմինները փաստացի գտնվում են կառավարության ազդեցության ներքո: Դրա վկայությունն են հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) որոշումները էլեկտրաէներգիայի և գազի սակագների հաստատման մասով, էլեկտրաէներգիայի շուկայի սահմանափակումների վերաբերյալ որոշումները, էներգետիկ ոլորտի կարգավորումների քաղաքականացված բնույթը: Հարցեր, որոնց մանրամասն անդրադարձ է կատարվում նաև մեր ծրագրի այլ բաժիններում:
219. *Թափանցիկության և հաշվետվողականության խնդիրները:* Պետական կառավարման համակարգը շարունակում է մնալ **ոչ թափանցիկ:** Այսօր գործնականում անհնար է ստանալ ամբողջական տեղեկատվություն կրթության, առողջապահության, մշակույթի և այլ ոլորտների պետական հիմնարկներում աշխատողների թվաքանակի, աշխատավարձերի և ֆինանսական բաշխումների վերաբերյալ: Միաժամանակ կառավարության ֆինանսական հաշվետվությունները շարունակում են հրապարակվել **հնացած ձևաչափով**, որը չի համապատասխանում պետական ֆինանսների կառավարման ժամանակակից չափորոշիչներին:
220. *Կապիտալ ծախսերի կառավարման խնդիրները:* Պետական կապիտալ ներդրումները հաճախ իրականացվում են **առանց պատշաճ ֆինանսատնտեսական և ֆիսկալ գնահատականների:** Դրա օրինակներն են՝ ակադեմիական քաղաքի ծրագիրը, «Հյուսիս–Հարավ» ճանապարհային միջանցքը, «300 դպրոց և 500 մանկապարտեզ» ծրագիրը:
221. Այս ծրագրերի մեծ մասը չի ուղեկցվում ծախս-օգուտ գնահատականներով, երկարաժամկետ բյուջետային ազդեցության հաշվարկներով ու շահագործման և պահպանման ծախսերի գնահատմամբ, ինչն, իր հերթին, վտանգում է պետական ֆինանսների կայունությունը:
222. *Ֆիսկալ կառավարման ոչ պրոֆեսիոնալ որոշումները:* 2026 թվականի բյուջետային գործընթացը դարձավ **անհաշվենկատ և ոչ պրոֆեսիոնալ կառավարման հստակ օրինակ:** 2026 թվականի պետական բյուջեն հաստատելուց հետո, 2026 թվականի փետրվարին, ՀՀ Ազգային ժողովի ընտրություններից ընդամենը մի քանի ամիս առաջ, կառավարությունը ընդունեց **կենսաթոշակների շուրջ 80 մլրդ դրամով ավելացման և պարտադիր առողջապահական ապահովագրության ներդրման մասին:**
223. Այս քայլերը չունեն բավարար տնտեսական և ֆիսկալ հիմնավորում և կրում են ակնհայտ **նախընտրական բնույթ:** Որպես հիմնավորում ներկայացվում է այն փաստը, որ տնտեսական աճը եղել է բյուջեով նախատեսվածից **երկու տոկոսային կետով ավելի բարձր:** Սակայն, նույն տրամաբանությամբ, **2022 թվականին տնտեսական աճը եղել էր շուրջ 4 տոկոսային կետով ավելի բարձր**, բայց **2023 թվականի** բյուջեում **ոչ կենսաթոշակները, ոչ առողջապահության ծախսերը չեն ավելացվել:** Նման բացատրություններ կարող են տալ միայն այն մարդիկ, որոնք չեն հասկանում ֆիսկալ կառավարման հիմունքները:
224. Միաժամանակ, պետք է ցավով արձանագրել, որ նման որոշումների հետևանքների հետադարձը ապագա իշխանությունների համար լինելու է **շատ դժվար, եթե ոչ անհնար:**

Ի՞նչ ենք մենք անելու

➤ Արդյունահետ և պատասխանատու կառավարում

225. Մենք իրականացնելու ենք պետական կառավարման **համակարգային վերափոխում**, որի հիմքում լինելու է արդյունքների վրա հիմնված կառավարումը՝ նպատակ հետապնդելով ապահովել կարգավորումների ապաքաղաքականացումը, դրանց հստակեցումը, պարզեցումը և կրճատումը:

➤ Որոշումների ապակենտրոնացում և պատասխանատվության հստակեցում

226. Մենք նախատեսում ենք ընդլայնել նախարարությունների և գործակալությունների որոշումների ընդունման իրավասությունները, սահմանել հստակ պատասխանատվություն յուրաքանչյուր որոշման համար և ներդնել արդյունքների գնահատման գործուն համակարգ

227. Յուրաքանչյուր ղեկավար պատասխանատու կլինի **ոչ թե գործընթացի, այլ արդյունքի համար**:

➤ Պետական ծառայության բաց և մրցակցային համակարգ

228. Մենք իրականացնելու ենք պետական ծառայության արմատական բարեփոխում: Կներդրվի բաց մրցակցային ընդունման համակարգ, պարբերական արդյունքային գնահատում, իրենց գործառույթներին չհամապատասխանող ծառայողների համակարգից դուրսբերման արդյունավետ մեխանիզմներ, ինչպես նաև նոր մասնագետների ներգրավման բաց համակարգ

229. Պարզևավճարները կդառնան **ոչ թե սուբյեկտիվ, այլ արդյունքների վրա հիմնված**:

➤ Տեսչական մարմինների կրճատում և վերափոխում

230. Մենք նախատեսում ենք տեսչական մարմինների քանակի էական կրճատում, շատ ղեկավարում գործառույթների միավորում և պատժողական մոտեցումից անցում խորհրդատվական մոտեցման

231. Տեսչական մարմինները պետք է լինեն **բիզնեսի գործընկեր, ոչ թե ճնշման գործիք**:

➤ Անկախ կարգավորող մարմինների իրական անկախություն

232. Մենք ապահովելու ենք կարգավորող մարմինների լիարժեք անկախությունը, քաղաքական միջամտությունների բացառումը և սակագնային որոշումների մասնագիտական հիմքով ընդունումը:

➤ Կարգավորումների պարզեցում և կրճատում

233. Մենք իրականացնելու ենք կարգավորումների **համատարած վերանայում**՝ նպատակ հետապնդելով վերացնել ավելորդ կարգավորումները, նվազեցնել վարչարարական բեռը, պարզեցնել բիզնես միջավայրը:

234. Նոր կարգավորում չի ընդունվի **առանց ֆինանսատնտեսական հիմնավորման**:

➤ Թափանցիկության ամբողջական ապահովում

235. Մենք ապահովելու ենք պետական բոլոր հիմնարկների ֆինանսական տվյալների, աշխատողների թվաքանակի և աշխատավարձերի հրապարակայնությունը, ինչպես նաև բյուջետային ծախսերի ամբողջական թափանցիկությունը:

236. Պետությունը պետք է լինի **լիովին բաց քաղաքացիների համար**:

➤ **Կապիտալ ծախսերի պարտադիր գնահատում**

237. Պետական կապիտալ ծախսերի յուրաքանչյուր խոշոր նախագիծ իրականացվելու է միայն «ծախս-օգուտ» գնահատումից, ֆինանսական կայունության վերլուծությունից և երկարաժամկետ բյուջետային հաշվարկներից հետո միայն:

238. Առանց այս գնահատականների **ոչ մի խոշոր ծրագիր չի սկսվելու:**

Վերջնական սկզբունք

Պետությունը պետք է լինի արդյունավետ, պատասխանատու և հաշվետու:

Ոչ թե մեծ, այլ խելացի:

Մեր նպատակը պարզ է.

Կառավարել ոչ թե գործընթացները, այլ արդյունքները:

Մենք դա արել ենք մասնավոր հատվածում և կհաջողենք նաև պետական հատվածում:

5.2 Տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման համակարգերի բարեփոխումները

239. **Իրավիճակը և հիմնական խնդիրները:** Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման համակարգերը ձևավորվել են 1995 թվականի Սահմանադրության ընդունումից հետո՝ 1996 թվականին իրականացված վարչատարածքային բարեփոխումների արդյունքում: Ստեղծվեցին մարզերը և համայնքները՝ որպես հանրային կառավարման երկու փոխկապակցված միավորներ:
240. 2015 թվականից սկսված վարչատարածքային բարեփոխումների արդյունքում իրականացվեց համայնքների խոշորացման լայնածավալ գործընթաց, որի արդյունքում համայնքների թիվը 915-ից կրճատվեց մինչև 70: Այս գործընթացը ստեղծեց նոր ինստիտուցիոնալ միջավայր՝ ապահովելով մասշտաբի էֆեկտ, սակայն միաժամանակ առաջ բերեց կառավարման նոր բարդություններ և պահանջներ:
241. Մարզերում իրականացվում է տարածքային կառավարում, որն իրականացվում է տարածքային կառավարման մարմինների՝ մարզպետների միջոցով: Տարածքային կառավարման գլխավոր նպատակը, պետության տարածքների, Հայաստանի դեպքում՝ մարզերի և համայնքների համաչափ զարգացման ապահովումն է: Տարածքային կառավարումը չի տարանջատվում հանրային կառավարման համակարգում, այն իրացնում է տարածքային մակարդակում պետական կառավարումը:
242. Տարածքային կառավարման համակարգը, ի դեմս մարզպետների և նրանց աշխատակազմերի, հանդիսանում է պետական քաղաքականության իրականացման գործիք մարզային մակարդակում: Այն պետք է ապահովի համայնքների և կենտրոնական իշխանության միջև կապը, ինչպես նաև նպաստի տարածքային համաչափ զարգացմանը:
243. Սակայն գործող մոդելը չի ապահովում արդյունավետ համագործակցություն և քաղաքականությունների համադրելիություն: Մարզպետարանները հիմնականում իրականացնում են վարչարարական գործառույթներ՝ սահմանափակ մասնակցությամբ զարգացման ծրագրերի համակարգմանը: Մեծ հաշվով, կարելի է փաստել, որ մարզպետարանների գործառույթները չեն համապատասխանում նոր վարչատարածքային իրողություններին: Դրանք չեն իրականացնում տարածքային զարգացման համակարգողի լիարժեք դեր:
244. ՀՀ տնտեսական զարգացման առանցքային խնդիրներից է շարունակում մնալ *տարածքային զարգացման անհամաչափությունների խորացումը*: Մարզերի զարգացման տեմպերը էականորեն տարբերվում են միմյանցից: Անկախության տարիներին, տարբեր ժամանակաշրջաններում արձանագրված տարբեր տեմպերով, ընդհանուր առմամբ, դրական տնտեսական աճի պարագայում, այնուամենայնիվ, սոցիալ-տնտեսական զարգացման տարածքային անհամաչափությունները շարունակում են մնալ առկա կարևորագույն խնդիրների շարքում:
245. Տարածքային անհամաչափությունները արձանագրող հիմնական ցուցանիշներից մեկը համախառն ներքին արդյունքը բնակչության մեկ շնչի հաշվով՝ Հայաստանի Հանրապետության միջին ցուցանիշի նկատմամբ հարաբերակցությունն է: Ըստ այդմ՝
- *ցուցանիշի 40 տոկոսից ցածր մակարդակը համարվում է ծայրահեղ անհամաչափություն*. 2023 թվականին երկու մարզերի պարագայում՝ Գեղարքունիքի և Լոռիի, այդ ցուցանիշը եղել է միջինի համեմատ 40 տոկոսից ցածր՝ այն դեպքում,

երբ 2017թ. որևէ մարզ չի արձանագրել միջինի նկատմամբ 40 տոկոսից ցածր ցուցանիշ.

- *ցուցանիշի 50 տոկոսից ցածր մակարդակը համարվում է զգալի անհամաչափություն.* 2023 թվականին հինգ մարզերի պարագայում՝ Գեղարքունիք, Լոռի, Տավուշ, Շիրակ և Արագածոտն, ցուցանիշը եղել է միջինի համեմատ 50 տոկոսից ցածր՝ այն դեպքում, երբ 2017 թվականին որևէ մարզ չի արձանագրել ցուցանիշի միջինից 50 տոկոսից ցածր մակարդակ.
- *ցուցանիշի 60 տոկոսից ցածր մակարդակը գնահատվում է որպես զգալի անհամաչափություն,* եթե վերաբերվում է տարածքների գերակշիռ մեծամասնությանը: 2023 թվականին << 10 մարզից 8-ը գրանցել են միջինի համեմատ ցուցանիշի 60 տոկոսից ցածր մակարդակ՝ այն դեպքում, երբ 2017 թվականին նման մարզերի թիվը երեքն էր՝ Տավուշ, Գեղարքունիք և Շիրակ:

246. Ըստ գնահատականների՝ 2024-2025 թթ. իրավիճակն ավելի է վատթարացել՝ հաշվի առնելով տնտեսական աճի կառուցվածքը՝ առաջանցիկ աճել են այն ճյուղերը որոնք գերազանցապես վերաբերում են Երևանին, որոշ առումով նաև Կոտայքի և Սյունիքի մարզերին՝ շինարարություն, հանքագործություն, ծառայություններ և, հատկապես, ֆինանսական միջնորդություն:

247. Այլ կերպ ասած, տնտեսական աճը կենտրոնացած է հիմնականում մայրաքաղաքում և առանձին մարզերում, մինչդեռ մարզերի մեծ մասը զգալիորեն հետ է մնում: Այդ տարբերությունները հիմնականում բացատրվում են՝

- մի շարք մարզերում գյուղատնտեսության բարձր մասնաբաժնով պայմանավորված աշխատանքի արտադրողականության տարբերություններով,
- ենթակառուցվածքների անհավասար զարգացմամբ,
- մարդկային կապիտալի սահմանափակումներով:

248. *Ապակենտրոնացման անբավարար իրացում:* Համայնքների միավորման արդյունքում ձևավորվել են մինչև 80.000 բնակչություն ունեցող համայնքներ, սակայն այդպես էլ այդ մասշտաբի պարագայում, համայնքները չեն ստացել բավարար լիազորություններ և գործիքակազմ՝ հանրային նշանակության խնդիրների լուծման և համայնքների կայուն զարգացման համար:

249. Չնայած քաղաքական հանձնառություններին՝ լիազորությունների իրական ապակենտրոնացումը չի իրականացվել: «Թղթի վրա» է մնացել լիազորությունների ապակենտրոնացման ռազմավարության նախագիծը, որն այդպես էլ չի ընդունվել Կառավարության կողմից: Ավելին, մի շարք ոլորտներում նկատվում են հակառակ միտումներ (օրինակ՝ առողջապահություն, կրթություն, ՔԿԱԳ ծառայություններ)՝ կենտրոնացման ուժեղացում:

250. *Ֆինանսական սահմանափակ կարողություններ:* Համայնքների ֆինանսական ինքնուրույնությունը մնում է ցածր: Համայնքային բյուջեների մասնաբաժինը համախմբված բյուջեում չի գերազանցում 10 տոկոսը, ինչը սահմանափակում է զարգացման ծրագրերի իրականացումը և ծառայությունների որակի բարձրացումը: Համայնքների բյուջեների եկամուտների կառուցվածքում սեփական եկամուտների մասնաբաժինը կազմում է մոտ 40 տոկոս:

251. Համայնքների ֆինանսական ցածր կարողությունների պարագայում, պետությունը շարունակաբար ուժեղացնում է նպատակային դրամաշնորհների միջոցով համայնքային

ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված ծրագրերը: Այդ ծրագրերին պետական մասնակցության որոշումները հաճախ չեն առաջնորդվում պետության գերակայություններով, համայնքային ընդհանուր խնդիրներով, զարգացման համաչափության ապահովման անհրաժեշտությամբ, իսկ այդ որոշումների կայացումը հաճախ խնդրահարույց է, ինչպես թափանցիկության, այնպես էլ կանխատեսելիության առումով:

252. *Համայնքների ինստիտուցիոնալ կարողությունների սահմանափակություն:* Չնայած խոշորացման արդյունքում առաջացած հնարավորություններին, համայնքների կառավարման կարողությունները շարունակում են մնալ տարբեր մակարդակներում: Առկա են մասնագիտական ռեսուրսների և կառավարման հմտությունների պակաս:
253. *Քաղաքական միջամտություններ և ինքնուրույնության սահմանափակում:* ՏԻՄ-երի գործունեության վրա նկատվում է կենտրոնական իշխանության ազդեցություն, այդ թվում՝ ընտրական գործընթացներում և կառավարման որոշումներում: Ընտրական և ՏԻՄ-երի լիազորությունների ստանձման գործընթացներին պետության միջամտությունը ակնհայտ էր ինչպես վերջերս միավորված Վաղարշապատ համայնքում, այնպես էլ Վանաձոր, Ալավերդի, Թալին և Վարդենիս համայնքներում: Պետությունը, անխոչընդոտ ձևով ՏԻՄ-երի ընտրություններին ընդառաջ՝ ոլորտը համակարգող նախարարի և համապատասխան մարզպետի միջոցով ներգրավվում է նախընտրական գործընթացներին: Այս արատավոր պրակտիկան գալիս է փաստելու, որ Կառավարությունը չի ապահովում Սահմանադրությամբ և օրենքներով ՏԻՄ-երի ձևավորման և գործունեության ինքնուրույնությունն ու անկախությունը:

Ջարգացման մեր տեսլականը և մեր անելիքները

254. Մինչև 2031 թվականը նախատեսվում է ձևավորել արդյունավետ, ապակենտրոնացված և պատասխանատու տեղական ինքնակառավարման համակարգ, որը՝
- կունենա բավարար ինքնուրույնություն՝ հանդիսանալով ժողովրդավարության խթանման և ամրապնդման հիմքերից մեկը,
 - կունենա բավարար լիազորություններ և ռեսուրսներ,
 - կնպաստի տարածքային համաչափ զարգացմանը,
 - կնպաստի տնտեսական ակտիվության աճին մարզերում,
 - կգործի բարձր վստահության և հաշվետվողականության պայմաններում:
255. Տարածքային կառավարման համակարգը պետք է վերափոխվի՝ դառնալով տարածքային զարգացման համակարգող և ռազմավարական դերակատար:

➤ Տարածքային կառավարման համակարգի վերափոխումը

256. Մենք քայլեր ենք ձեռնարկելու՝ ապահովելով տարածքային կառավարման համակարգի վարչարարական մոդելից անցումը դեպի տարածքային զարգացման մոդել:
257. Տարածքային կառավարման համակարգի բնութագիրը, դրանով պայմանավորված մարզպետի աշխատակազմի (մարզպետարանի) դերը միանգամայն տարբեր էր, երբ համայնքների թիվը 930 էր: Թվով 70 համայնքի պարագայում, փոխվել են համակարգի առջև ծառայած մարտահրավերները, հետևաբար և թիրախները: Մարզպետների շատ լիազորություններ ու գործառույթներ պետք է փոխանցվեն համայնքներին՝ համայնքներն արդեն իսկ ունեն դրանք արդյունավետ իրացնելու բավարար կարողություններ կամ դրանք կարճ ժամկետում ձևավորելու ունակություններ:

258. Մարզպետարանների գործառույթների վերանայման արդյունքում դրանց գործառույթներում հիմնական շեշտադրումը լինելու է՝

- տարածքային զարգացման ծրագրերի մշակումը և դրանց իրացման համակարգումը,
- պետական և համայնքային քաղաքականությունների համադրության ապահովմանը նպաստումը:

➤ **Տարածքային համաչափ տնտեսական զարգացումը**

259. Այս մասով մեր գործողությունները ուղղակիորեն փոխկապակցված են լինելու զբաղվածության ընդլայնման (մասնավորապես մշակող արդյունաբերության ոլորտում) ուղղությամբ մեր կողմից ձեռնարկվելիք նախաձեռնությունների հետ, որոնք հանգեցնելու են տարածքային կտրվածքով տնտեսական ակտիվության բարձրացմանը, բնակչության եկամուտների ավելացմանը և բարեկեցության բարելավմանը:

260. Մեր գործողությունների թիրախում է լինելու նաև՝

- համայնք-մասնավոր համագործակցության խթանումը,
- ներդրումային ծրագրերի աջակցությունը,
- միջհամայնքային համագործակցությանը նպաստող մեխանիզմների ներդրումը
- մասնավոր հատվածի հետ համագործակցության շնորհիվ յուրաքանչյուր մարզ ունենալու է մարզամշակութային կենտրոն, որտեղ երիտասարդները և մարզի մյուս բնակիչները հնարավորություն կունենան անվճար հիմունքներով զբաղվել սպորտով, մշակույթով և նեգրավվել հանրային ժամանցային միջոցառումներին

➤ **Լիազորությունների ապակենտրոնացում**

261. Ժողովրդավարության հիմքերից մեկը կայացած տեղական ինքնակառավարումն է, հատկապես, երբ այն ունի մեծ դերակատարում հանրային կառավարման համակարգում: Տեղական ինքնակառավարման համակարգի դերակատարման բարձրացման նպատակով մենք հետևողականորեն իրականացնելու ենք լիազորությունների ապակենտրոնացման քաղաքականություն: Վարչական միավորների խոշորացումը՝ համայնքների միավորումը, ստեղծել է անհրաժեշտ նախապայմաններ ապակենտրոնացման գործընթացի իրականացման համար:

262. Մենք նախատեսում ենք ապակենտրոնացման խորացումն ապահովել փուլային մոտեցմամբ՝ հանրային ծառայությունների հետևյալ ուղղություններով՝

- տեղական ճանապարհների շահագործում և պահպանում,
- հանրակրթական դպրոցների վարչատնտեսական կառավարում,
- սոցիալական ծառայությունների առանձին տեսակներ:

➤ **Ֆինանսական ապակենտրոնացումը**

263. Վարչական ապակենտրոնացմանը զուգընթաց մենք գործուն քայլեր ենք ձեռնարկելու ֆինանսական ապակենտրոնացումը խորացնելու ուղղությամբ: Մենք ներդնելու ենք այնպիսի հարկաբյուջետային գործիքներ ու մեխանիզմներ, առաջնորդվելով այն տրամաբանությամբ, որ համայնքը պետք է շահագրգռված լինի համայնքում տնտեսական ակտիվության մեծացման հարցում:

264. Մենք նախատեսում ենք՝

- մինչև 2031 թ. համայնքային բյուջեների եկամուտների մասնաբաժինը հասցնել համախմբված բյուջեի եկամուտների առնվազն 15 տոկոսին,
- ներդնել նոր եկամտային աղբյուրներ և/կամ կիրառել գործող եկամտատեսակներից մասհանման մեխանիզմներ,
- ապահովել պետական բյուջեից համայնքներին ընդհանուր բնույթի և նպատակային նշանակության ֆինանսական փոխանցումների արդյունավետ մեխանիզմներ:

➤ **Տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների հզորացում**

265. Համայնքների կարողությունների ամրապնդման նպատակով նախատեսվում է՝

- ապահովել համայնքային ծառայողների մասնագիտական առաջխաղացման և սոցիալական երաշխիքների ամբողջական իրացումը օրենսդրական մակարդակում.
- համայնքային ծառայողների և տեղական ինքնակառավարման պաշտոնատար անձանց մասնագիտական վերապատրաստումների միասնական հայեցակարգի սահմանում, որը ձևավորվելու է տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված իրական կարիքների վրա:

➤ **Տեղական ինքնակառավարման մարմինների անկախության և հաշվետվողականության ամրապնդում**

266. Մենք հանձնառություն ենք ստանձնում օրենսդրական և իրավակիրառական մակարդակներում, ոչ թե սահմանափակելու, այլև արգելելու տարածքային կառավարման բնագավառի նախարարության պաշտոնատար անձանց և մարզպետների հնարավոր ներգրավումը ՏԻՄ-երի նախընտրական գործընթացներում՝ բացառությամբ, օրենսդրությամբ իրենց վերապահված գործառույթների պատշաճ իրականացման:

267. Համայնքային ծառայության համակարգը ինստիտուցիոնալ և կիրառական մակարդակներում ամբողջությամբ երաշխավորված և ապահովագրված է լինելու ցանկացած վարչական բարեփոխումների արդյունքում, համայնքի վերակազմակերպման կամ լուծարման գործընթացներում, քաղաքական վերադասավորումների արդյունքում միջամտություններից և հնարավոր ռիսկերից:

268. Մենք նախատեսում ենք իրականացնել միջոցառումներ, որոնք ուղղված են լինելու՝

- քաղաքական միջամտությունների սահմանափակմանը,
- ընտրական գործընթացների թափանցիկությանը,
- ՏԻՄ-երի նկատմամբ հանրային վստահության բարձրացմանը:

➤ **Կառավարման թվայնացում**

269. Մենք առանձնահատուկ կարևորում ենք տեղական ինքնակառավարման մակարդակում ժամանակակից տեխնոլոգիական լուծումների ներդրումը և մատուցվող ծառայությունների թվայնացման արագացումը:

270. Մասնավորապես, մենք գործուն քայլեր ենք ձեռնարկելու՝

- համայնքային ծառայությունների թվայնացման շեշտակի ընդլայնման,
- տվյալահենք կառավարման համակարգերի ներդրման և
- վարչարարական արդյունավետության բարձրացմանը նպաստելու և աջակցելու ուղղությամբ:

➤ Ակնկալվող արդյունքները

271. Այս ուղղությամբ մեր կողմից վարվող քաղաքականությունը և գործողությունների իրականացումը կհանգեցնեն՝

- տարածքային զարգացման անհամաչափությունների նվազմանը,
- համայնքների ֆինանսական և ինստիտուցիոնալ կարողությունների աճին,
- տեղական ինքնակառավարման իրական ինքնուրույնության ապահովմանը,
- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի արդյունավետ փոխգործակցությանը,
- հանրային ծառայությունների որակի և մատչելիության բարձրացմանը:

Ամփոփիչ եզրահանգում

Տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման համակարգերի զարգացումը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության **կայուն և ներառական զարգացման հիմնասյուններից մեկը:**

Վարչատարածքային բարեփոխումների արդյունքում ձևավորված նոր իրողությունները ստեղծել են բավարար հիմքեր՝ **ապակենտրոնացման խորացման և տարածքային զարգացման նոր մոդելի ներդրման համար:**

Մինչև 2031 թվականը նախատեսվող բարեփոխումների հետևողական իրականացումը հնարավորություն կտա ձևավորել **արդյունավետ, ինքնուրույն, անհարկի միջամտություններից զերծ և հաշվետու տեղական ինքնակառավարման համակարգ՝** նպաստելով հանրային կառավարման ընդհանուր արդյունավետության բարձրացմանը:

5.3 Սահմանադրաիրավական անհետաձգելի քայլերը, դատական իշխանության իրական անկախության ապահովումը և դատաիրավական համակարգի բարեփոխումները

272. Սահմանադրության 148-րդ հոդվածում անհրաժեշտ ենք համարում ամրագրել Կառավարության անդամին ներկայացվող առավել գործնական և իրատեսական պահանջներ՝ դրանք հստակ տարանջատելով Ազգային ժողովի, որպես ներկայացուցչական սահմանադրական մարմնի, պատգամավորին ներկայացվող պահանջներից: Գործադիր իշխանության կազմի նկատմամբ մեր դիրքորոշումը միանշանակ համապատասխանում է միջազգային լավագույն փորձին և նպատակ ունի բացառել պետական կառավարման համակարգում մասնակցության արհեստական սահմանափակումները, ապահովել ավելի ներառական ու ճկուն իրավակարգավորում:

273. Հայաստանի քաղաքացիների մեծ մասի անվստահությունը դատական համակարգի նկատմամբ ոչ միայն իրավական, այլև տնտեսական և պետական անվտանգության խնդիր է: Առանց անկախ դատական համակարգի հնարավոր չէ ունենալ պաշտպանված սեփականություն, ներդրումային գրավչություն և սոցիալական արդարություն: Մենք հանձն ենք առնում ստեղծել անկախ և հիրավի քաղաքացիների իրավունքների պաշտպանությանը կոչված արդարադատության համակարգ, որը համադրելի կլինի միջազգային իրավական լավագույն չափանիշներին:

274. **«Դատական իշխանության անկախություն և հաշվետողականություն ժողովրդի առջև».** այս թեզը հռչակվելու է որպես դատաիրավական բարեփոխումների առանցք, որի հենքով արմատապես կվերանայվի ողջ դատաիրավական համակարգը:

275. Դատական իշխանության բարեփոխումների ծրագրային հայեցակարգն ընդգրկում է երկու խոշոր հատված՝

- գործող Սահմանադրության հիմքով նախատեսված անհետաձգելի քայլեր.
- խորքային սահմանադրական բարեփոխումներ:

276. **Անհետաձգելի ծրագրային քայլերն ուղղված են լինելու՝**

- դատական իշխանության իրական անկախության երաշխավորմանը,
- մատչելի և հասանելի արդարադատության ապահովմանը,
- դատարանների ծանրաբեռնվածության էական նվազեցմանը և դատաքննության ողջամիտ ժամկետների երաշխավորմանը,
- ժողովրդի առջև դատական իշխանության հաշվետվողականության ապահովմանը:

277. **Դատական իշխանության իրական անկախության երաշխավորման մեր հիմնական սկզբունքներն ու ուղղություններն են՝**

- քաղաքական չեզոքությունը՝ վերջին 5 տարվա ընթացքում որևէ կուսակցության անդամ կամ քաղաքական պաշտոն զբաղեցրած անձ չի կարող ընտրվել Սահմանադրական դատարանի, Բարձրագույն դատական խորհրդի և Վճռաբեկ դատարանի կազմում.

- նյութական և ֆինանսական ապահովվածությամբ կբացառվի հավելավճարների անվան տակ գործադիր իշխանությունից անմիջական կախվածության հանգեցնող պարգևավճարների հատկացումը՝ այս արատավոր համակարգը փոխարինելով օրենսդրոտեն թափանցիկ նախապես բարձր աշխատավարձերի ամրագրմամբ: Դատական գործընթացների իրական ծանրաբեռնվածությունը կրում են նաև միջին օղակի աշխատակիցները (դատավորների օգնականներ, նիստերի քարտուղարներ և այլն), որոնց ցածր վարձատրությունը հաճախ

հանգեցնում է որակյալ կադրերի արտահոսքի, մասնագիտական բազում սխալների և կոռուպցիոն ռիսկերի.

- *դատավորների ընտրության և նշանակման համակարգի արմատական վերանայումը՝* դատավորների ընտրության գործընթացը հիմնվելու է բացառապես մասնագիտական և բարեվարքության չափանիշների վրա: Մասնավորապես՝ հակակոռուպցիոն մարմինների եզրակացությունները ձեռք են բերելու իրական իրավական նշանակություն, որպեսզի ակնհայտ բացասական եզրակացությունների պայմաններում բացառվեն քաղաքական կամ անձնական հավատարիմ կադրերի նշանակման դեպքերը.

- *դատավորների մասնագիտական անկախության պաշտպանությունը՝* դատավորի անկախությունը պետք է պաշտպանված լինի ոչ միայն քաղաքական, այլև ներքին համակարգային և կարգապահական ճնշումներից: Օրենսդրությամբ կհստակեցվի քաղաքական գսավածության սկզբունքի բովանդակությունը՝ բացառելով խոսքի ազատությունից ողջամիտ սահմաններում օգտվող դատավորների նկատմամբ անհիմն հետապնդումները, կներդրվեն այնպիսի իրավական կարգավորումներ, որոնք կբացառեն հայեցողական որոշումներ կայացրած դատավորներին միայն որոշման բովանդակության հիմքով կարգապահական պատասխանատվության ենթարկելու պրակտիկան, կնդլայնվեն դատավարություններում դատավորների հայեցողության սահմանները՝ հընթացս սահմանափակելով դատախազների այն լիազորությունները, որոնք, ըստ էության, աղերս չունեն դատախազական հսկողության սահմանադրական հիմնադրույթների հետ և գործնականում հանգեցնում են դատարանների նկատմամբ քողարկված վերահսկողություն հաստատելուն.

- *դատավորների իրավաչափ պատասխանատվության խստացումը՝* դատական իշխանության անկախությունը զուգորդվելու է դատավորների բարձր պատասխանատվությամբ: Էապես խստացվելու է դատավորների պատասխանատվությունը մեղադրյալների և դատավարության այլ մասնակիցների նկատմամբ ակնհայտ անհիմն դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման թույլտվություն տալու համար, առանձնապես խիստ պատասխանատվություն կսահմանվի կալանքը որպես խափանման միջոց անհիմն կիրառելու դեպքերում, քանի որ դա անմիջականորեն առնչվում է մարդու հիմնարար իրավունքների պաշտպանությանը չարաշահելու պարագայում հանգեցնում է այն որպես պատիժ ընկալելու արատավոր պրակտիկայի: Ուժը կորցրած կճանաչվեն Ազգային ժողովի բոլոր այն օրենսդրական ակտերը, որոնք հանգեցրել են, այսպես կոչված՝ «կալանք նշանակող» և գործադիր իշխանության անմիջական վերահսկողության ներքո գործող տարաբնույթ այլ դատավորների նշանակման և ուղղորդվող գործունեությունը հնարավոր դարձրած մյուս ինստիտուտների ներդրմանը.

- *գործառույթային տարանջատումը՝* ԲԴԽ-ն պետք է զբաղվի բացառապես դատավորների անկախության երաշխավորման հետ կապված հարցերով, իսկ դատական դեպարտամենտը՝ դատարանների վարչական սպասարկմամբ: Կվերականգնվի դատական իշխանությանն առնչվող հարաբերությունների կարգավորումը Բարձրագույն դատական խորհրդին վերապահելու սահմանադրական հիմնադրույթի կենսագործումը: ԲԴԽ անդամների ընտրությունն կիրականացվի փոխատեղման (ռոտացիոն) կարգով՝ յուրաքանչյուր երկու տարին մեկ կթարմացվի անդամների մի մասը, ինչը կապահովի համակարգի կայունությունն ու գործունեության շարունակականությունը:

278. Մատչելի և հասանելի արդարադատության ապահովման ուղղությամբ մենք նախատեսում ենք՝

- Էապես նվազեցնել վերջին տարիներին ներդրված դատական տուրքերի անբնական և արդարադատության մատչելիությունը խաթարող չափերը.

- համալիր պարզեցնել դատարան դիմելու ընթացակարգերը.

- անհապաղ ուժը կորցրած ճանաչել փաստաբանական ծառայության մատչելիության նվազեցմանը հանգեցրած փաստաբաններից գանձվող հարկերի կտրուկ բարձրացմանն առնչվող օրենսդրական ակտերը, զորացնել հանրային պաշտպանի ինստիտուտը.

- առանց ձգձգումների ներդնել արդարադատության թվային միասնական արդիական համակարգ (e-Justice), որի արդյունքում՝

ա) ամբողջությամբ կթվայնացվեն դատական գործերը.

բ) կապահովի գործերի ավտոմատացված պատահականության սկզբունքով բաշխումը և կբացառի մարդկային գործոնի հնարավոր միջամտությունը.

գ) հնարավորություն կտա կողմերին առցանց հետևելու իրենց առնչվող գործի ընթացքին.

դ) ինքնաշխատ կերպով կձևավորեն և կիրառարակեն դատարանների արդյունավետության վիճակագրական ցուցանիշները:

Նախնական հաշվարկներով՝ հիշյալ բարեփոխումը, այդ թվում՝ արդարադատության թվային միասնական համակարգի ներդրումը կպահանջի 10-15 մլրդ դրամի կապիտալ ներդրում և շուրջ 1.5 մլրդ դրամի տարեկան շահագործման ծախս:

279. Դատարանների ծանրաբեռնվածության էական նվազեցումը և դատաքննության ողջամիտ ժամկետների երաշխավորումը կընդգրկի հետևյալ ծրագրային քայլերը՝

- դատավարության օրենսգրքերից կհանվեն բոլոր այն վարույթները, որոնք աղերս չունեն արդարադատության էության հետ (օրինակ՝ վարչական պատասխանատվության վարույթները և այլն).

- կներդրվի պարտադիր արտադատական վարչական բողոքարկման ինստիտուտը.

- հայցերը վարույթ ընդունելու, վերադարձնելու լիազորությունը կվերապահվի դատարանների աշխատակազմին, դրանց որոշումները բողոքարկելու վերապահմամբ.

- կներդրվեն իրատեսական և կանխատեսելի արագացված դատաքննության ինստիտուտներ, որոնցից խուսափելը կդիտվի իբրև կարգապահական պատասխանատվության հիմք.

- Էապես կպարզեցվեն դատաքննության կարգերը.

- կներդրվեն գործնական արժեք ու նշանակություն ունեցող հաշտարար և միջնորդ դատարանները.

- կվերանայվեն վերաքննության և վճռաբեկության կանոններն այն նկատառումով, որ վերջիններս միտված լինեն իրավունքի զարգացմանը, միասնական դատական պրակտիկայի ձևավորմանը.

- ըստ այդմ՝ կներդրվի նաև մասնակի նախադեպային իրավունքը, ինչը կբացառի Վճռաբեկ դատարանի կողմից նույնաբնույթ բազմաթիվ գործերով մեծ ժամանակ խլող և անհարկի ծախսատար քննությունները:

280. Արդարացի քրեական հետապնդման արդյունավետության բարելավման համատեքստում

- առաջնահերթ համարել կալանքի 1 ազատազրկման օրը որպես 2 օր, ինչպես նաև տնային կալանքի մեկ ազատազրկման օրը 1,5 օր հաշվարկի ներդրումը

- տնտեսվարողների նկատմամբ ուղղորդված հետապնդումները բացառելու նպատակով վերանայել հարկերից չարամտորեն խուսափելու հանցակազմերով քրեական պատասխանատվության հիմքը՝ մասնավորապես խոշոր չափ համարել 50 միլիոն, իսկ առանձնապես խոշոր չափ համարել՝ 100 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գումարը

- ներդրողների և ներդրումների պաշտպանության նպատակով կանխատեսելի և հուսալի կարգավորումների ներդրում

281. **Ժողովրդի առջև** դատական իշխանության հաշվետվողականությունը անհրաժեշտ է ինչպես օրենսդիր և հատկապես՝ գործադիր իշխանությունից դատական իշխանության անկախությունը լիարժեք երաշխավորելու, այնպես էլ իշխանության այս ճյուղը ժողովրդի հաշվետվողականության հենքով վերակառուցելու համար:

282. **Այս ուղղությամբ մենք նախատեսում ենք՝**

- յուրաքանչյուր տարի նախաձեռնել բացառապես անկախ փորձագետների կողմից միջազգային իրավունքի նորմերով ճանաչված մեթոդաբանությամբ դատարանների և կոնկրետ դատավորների նկատմամբ վստահության աստիճանը որոշելու գործընթաց՝ ցածր ցուցանիշների արձանագրումը փոխկապակցելով որոշակի բացասական իրավական հետևանքների հետ, հատկապես՝ առաջխաղացման համատեքստում.

- օրենքով արգելել իշխանության այլ ճյուղերի ներկայացուցիչներին ոչ միայն դատարանների և դատավորների հասցեին վիրավորական և զրպարտչական արտահայտություններ անելը, այլև ժողովրդի կողմից վստահության աստիճանի մասին սուբյեկտիվ դատողություններ հնչեցնելը.

- ընդլայնել հրապարակայնության սկզբունքի կիրառման իրավական հիմքերը:

283. **Մարդասիրական, համաչափ և արդարացի համաներում նախաձեռնելու, ինչպես նաև ներման ինստիտուտի խորքային բարելավում իրականացնելու նկատառումով անհրաժեշտ կլինի՝**

- նորընտիր Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնել լայն ընդգրկվածությամբ մարդասիրական և հիրավի արդարացի համաներման նախագիծ, նախապատվությունը տալով ազգային ազատագրական մարտերի, ռազմական գործողությունների մասնակիցներին, այդ մարտերի ընթացքում զոհված կամ անհայտ կորած անձանց զավակներին, առաջին անգամ հանցագործություն կատարած, բազմազավակ ծնողների, անչափահասների, ինչպես նաև հանցագործությամբ պատճառված վնասը փոխհատուցած անձանց և այլն.

- ներդնել դատապարտյալների նկատմամբ անհատական մոտեցմամբ և արդարադատության սկզբունքներին խիստ համապատասխան ներման ինստիտուտ, բացառելով Սահմանադրության ոգուն առերևույթ հակասող վարչապետի և կառավարության միջամտության բոլոր դրսևորումները: Ըստ այդմ էլ օրենքով բացառվելու է ներման հանձնաժողովի կազմի և գործունեության նկատմամբ նաև որևէ ուղղորդված վերահսկողություն գործադիր իշխանության կողմից:

284. **Սահմանադրական բարեփոխումներին առնչվող դատական իշխանության անկախության հիմնադրույթները ներառում են՝**

- բարձրագույն դատական խորհրդի ձևավորման և իրավասության սահմանադրական հիմքերի արմատական վերանայումը.

- Սահմանադրական դատարանի, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի կազմավորման և գործունեության այնպիսի հիմքերի ամրագրումը, որոնք կբացառեն նշված առանցքային դատական ատյանների կախվածությունը հանրային իշխանությունից.

- ինքնաբացարկի, բացարկի կամ օբյեկտիվ պատճառներով կոլեգիալ դատական ատյանների գործունեության ձախողումները բացառելու նկատառումով ներդրվելու է փոխարինողների ինստիտուտ: Նախապես կընտրվեն համապատասխան փոխարինողներ՝ փաստաբանների, իրավաբան գիտնականների և այլ մասնագիտական շրջանակներից, որոնք կոնկրետ վարույթներում կփոխարինեն Սահմանադրական դատարանի, Բարձրագույն դատական խորհրդի և Վճռաբեկ դատարանի բացակա անդամներին՝ ապահովելով այդ ատյանների բնականոն գործունեությունը.

- դատական պրակտիկայից սահմանադրական հարթությամբ դուրս է մղվելու այն արատավոր մոտեցումը, երբ, օրինակ, Սահմանադրական դատարանում քվեարկության արդյունքներով դատավորների ձայների հավասարության պայմաններում վարույթը համարվում է կարճված՝ ի վնաս դիմողի, ինչը փաստացի խաթարում է արդար դատաքննության և արդյունավետ իրավական պաշտպանության սկզբունքները.

- ներդրվելու է բարձրաստիճան պաշտոնյաների քրեական գործերով, այսպես կոչված՝ հատուկ դատախազի ինստիտուտը: Այդ կարգավիճակը կվերապահվի այնպիսի հստակ ընթացակարգերով ընտրված անձի, որը որևէ կերպ առնչություն չի ունենալու քաղաքական գործունեության և հանրային իշխանության հետ և գործելու է լիարժեք անկախության պայմաններում: Վերջինիս կվերապահվի նաև գործադիր իշխանության ակնհայտ ապօրինի հրահանգները կատարելու մեջ կասկածվող դատավորների նկատմամբ քրեական վարույթ նախաձեռնելու և դրանցով մինչդատական վարույթների նկատմամբ հսկողություն իրականացնելու իրավասություն.

- կներդրվի դոկտրինալ մեկնաբանությունների կիրառման ինստիտուտ, որպեսզի առավել խնդրահարույց հարցերով բացառվեն կամայականությունները, առնվազն խորհրդատվական ասպեկտով ներգրավված լինեն իրավունքի ոլորտում անվիճելի հեղինակություն վայելող իրավագետները:

Մենք վերականգնում ենք մեր պետությունը իրավունքի գերակայությամբ, արդարությամբ և ճշմարտությամբ: Հայաստանը պետք է դուրս գա անարդարության և անվստահության այս արատավոր շրջանից: Մենք առաջարկում ենք հստակ ճանապարհ՝

դեպի ուժեղ, արդար և իրավական Հայաստան

6 ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

- Արագ փոփոխվող աշխարհում Հայաստանի Հանրապետության անհրաժեշտ է հետևողականորեն իրականացնել ճկուն, բայց և հստակ սկզբունքների վրա հիմնված արտաքին քաղաքականություն: Հայաստանը հանձնառու է դառնալ մարդու հիմնարար իրավունքների, ժողովրդավարական կառավարման և միջազգային իրավունքի պաշտպանության առաջամարտիկ՝ դիտարկելով դրանք որպես վստահելի և կայուն միջազգային կարգի հիմնասյուներ: Արտաքին քաղաքականությունը պետք է միտված լինի ծառայելու պետական և ազգային շահերի անսակարկելի պաշտպանությանը, ինչպես նաև անվտանգության և խաղաղության հաստատմանն ու անշեղ պահպանմանը: Այս նպատակների իրականացման համար պետք է հռչակագրային մոտեցումներից անցում կատարել կառուցողական ներգրավվածությանն ու հստակ ծրագրերի մշակմանն ու կյանքի կոչմանը: Վերոնշյալի արդյունավետ իրականացման արդյունքում արտաքին քաղաքականությունն ուղղակիորեն կնպաստի պետականության հիմքերի ամրապնդմանը, ինչպես նաև երկրի տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական և այլ ոլորտների կայուն զարգացմանն ու հայ ժողովրդի բարեկեցության մակարդակի շարունակական բարձրացմանը:
- **Արտաքին քաղաքականության ռազմավարական ուղղություններն են՝**
 285. Երաշխավորված և հարատև խաղաղություն՝ որպես տարածաշրջանային կայունության կարևոր բաղադրիչ,
 286. Հարաբերություններ հարևան պետությունների հետ
 287. Երկկողմ և բազմակողմ հարաբերություններ միջազգային դերակատարների հետ
 288. ՀՀ քաղաքացիների և ազգությամբ հայերի իրավունքների պաշտպանություն աշխարհի ցանկացած վայրում
 289. Արտաքին տնտեսական քաղաքականություն
 290. Հայկական սփյուռք սփյուռքը որպես կամուրջ, փոխադարձ պատասխանատվությունը որպես համապարփակ ներգրավվածության սկզբունք
 - **Երաշխավորված և հարատև խաղաղություն՝ որպես տարածաշրջանային կայունության կարևոր բաղադրիչ**
 291. Երաշխավորված և հարատև խաղաղությունը հնարավոր է միայն բարձր իրավաբանական ուժ ունեցող և փոխլրացնող պայմանագրերի առկայության դեպքում: Հայաստանի Հանրապետությունը երկկողմ և բազմակողմ հարաբերությունների զարգացման ճանապարհին կառաջնորդվի իրավական որոշակիության սկզբունքի անշեղ պահպանմամբ, ինչի պարագայում հստակ կլինի միջազգային բոլոր սուբյեկտների հետ պարտավորությունների և իրավունքների ամբողջական շրջանակը:
 292. Ադրբեջանի հետ երաշխավորված կայուն խաղաղության հաստատումը հրամայական է, ինչը պետք է ապահովվի մեկից ավելի երաշխավորների ներգրավմամբ: Երաշխավորները, իրենց հերթին, պետք է ունենան հստակ սահմանված պայմանագրային պարտավորություններ և իրավունքներ: Վերջնական, իրավաբանական ուժ ունեցող պայմանագիրը պետք է հիմնված լինի առնվազն ինքնիշխանության, տարածքային

ամբողջականության, ներքին գործերին չմիջամտելու, փոխադարձության, ինչպես նաև ուժի կիրառման և դրա սպառնալիքի բացառման սկզբունքների վրա: Մեկից ավելի երաշխավորների, ինչպես նաև երաշխավորման գործուն մեխանիզմների կարիքը ողջամտորեն առկա է երկարատև հակամարտության և ներկա պահին ռազմական ուժերի անհավասարակշռության պայմաններում:

293. Խաղաղությունն ամրագրող պայմանագրի երաշխավորների բացակայությունը կամ միայն մեկ երաշխավորի առկայությունը խոցելի կդարձնի խաղաղության հարատևությունը: Երաշխավորների բացակայությունը կարող է հանգեցնել Ադրբեջանի կողմից բազմիցս հայտարարված ծավալապաշտական մոտեցումները կյանքի կոչելուն ուղղված անկաշկանդ գործողությունների և ուժի կիրառման սպառնալիքի նորքո շարունակական զիջումների կորզմանը:

294. Մեկ երաշխավորի առկայությունը նույնպես ռիսկային ենք համարում, հաշվի առնելով այն հավանականությունը, որ առանձին դեպքերում միակ երաշխավորի առաջնահերթությունները կարող են գերակայել պայմանագրային պարտավորություններին:

▪ **Հարաբերությունները հարևան պետությունների հետ**

295. Հարևան երկրների հետ հարաբերությունների զարգացման հիմնական առաջնահերթություններն են տարածաշրջանային կայունությունը, խաղաղության ապահովումը, ինչպես նաև բաց սահմաններն ու հաղորդակցային փոխկապակցվածությունը:

296. Տարածաշրջանային վստահելի հանգույց. ձգտել Հայաստանի փակ սահմանների բացմանը և Հայաստանի աշխարհաքաղաքական ու տնտեսական դերի բարձրացմանը՝ որպես տարածաշրջանային խաղաղության, ինչպես նաև միջազգային հաղորդակցության ու առևտրի հուսալի հանգույց:

297. Բաց սահմաններն ու ճանապարհների ապաշրջափակումը պետք է իրականացվեն՝ անշեղորեն պահպանելով Հայաստանի տարածքային ամբողջականության և ինքնիշխանության սկզբունքները, ինչպես նաև ապահովելով հայրենական տնտեսության պաշտպանության բավարար մեխանիզմներ:

298. Արդեն իսկ գոյություն ունեցող և նոր նախատեսվող ենթակառուցվածքները ամբողջությամբ պետք է համապատասխանեն միջազգային լավագույն ստանդարտներին և դառնան բեռնափոխադրման համար նախընտրելի և մրցակցային այլընտրանք: Անմիջական հարևան պետությունների հետ լոգիստիկ կապուղիների առկայությունը կարևոր է ոչ միայն կայուն տնտեսական աճ ապահովելու, այլև Հայաստանը տարածաշրջանային և միջտարածաշրջանային արժեշղթաներում առավել ամուր դիրքավորելու համար:

299. Վրաստանի Հանրապետության հետ հարաբերություններում նպատակ ունենք խորացնել ռազմավարական հարաբերությունները և ավանդական երկկողմ հարաբերությունները տեղափոխել ավելի խոր գործառնական մակարդակ: Այս մոտեցումը բխում է ոչ միայն աշխարհագրական իրողություններից, այլև Հարավային Կովկասում առկա համատեղ շահերից՝ հիմք ընդունելով տրանսպորտային կապուղիների և լոգիստիկ անվտանգության, տնտեսական բազմազանության, պատմամշակութային բարեկամության և տարածաշրջանային ինտեգրման ուղղությունները:

300. Իրանի Իսլամական Հանրապետության հետ անհրաժեշտ ենք համարում զարգացնել երկարամյա գործընկերությունը ռազմավարական մակարդակի՝ հիմք ընդունելով տարածաշրջանային անվտանգության ու կայունության, սահմանների անխախտելիության, լոգիստիկ ու էներգետիկ փոխկապակցվածության և այլ ռազմավարական հարցերում փոխադարձ շահերն ու առաջնահերթությունները:
301. Ադրբեջանի Հանրապետության հետ հարաբերություններում, ինչպես նշվեց, գերակա նպատակ է հակամարտության արդար կարգավորման արդյունքում ուժեղ ու հարատև խաղաղության հաստատումը՝ հիմնված ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, ներքին գործերին չմիջամտելու, փոխադարձության, ինչպես նաև ուժի կիրառման և դրա սպառնալիքի բացառման սկզբունքների վրա: Հարավային Կովկասում կայունությունը պահանջում է ոչ միայն ռազմական գործողությունների դադար, այլև կանխատեսելի և ինստիտուցիոնալացված հարաբերությունների ձևավորում:
302. Թուրքիայի Հանրապետություն. Հայաստանը նպատակ ունի հասնել Թուրքիայի հետ հարաբերությունների լիարժեք կարգավորման՝ ներառյալ դիվանագիտական հարաբերությունների հաստատում, առանց նախապայմանների: Կարևոր նպատակ ենք համարում սահմանների բացումը՝ հիմնվելով միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների վրա, բացառելով պատմական ճշմարտության ու ազգային արժանապատվության զիջումը: Տնտեսական ազդեցությունից զատ, այն կնպաստի նաև ժողովուրդների միջև շփումների ակտիվացմանը՝ աստիճանաբար վերականգնելով երկու հասարակությունների միջև վստահության մթնոլորտը:

▪ **Երկկողմ և բազմակողմ հարաբերություններ միջազգային դերակատարների հետ**

303. Հայաստանի արտաքին հարաբերությունները միջազգային կենտրոնների հետ պետք է ձևավորվեն բացարձակ վստահության մթնոլորտում՝ հավասարակշռված, կանխատեսելի և բազմավեկտոր քաղաքականության հիման վրա, ուղղված Հայաստանի երկարաժամկետ շահերի ապահովմանը:
304. Այս համատեքստում կարևոր տեղ է զբաղեցնում Եվրասիական տնտեսական միությունը, որի շրջանակներում Հայաստանը պետք է առավելագույնս օգտագործի տնտեսական փոխգործակցության հնարավորությունները՝ արտահանմանն ուղղված տնտեսական զարգացման համար խորացնելով շուկաների հասանելիությունը, ընդլայնելով ապրանքաշրջանառությունը Միության բոլոր անդամ երկրների հետ ու գրավելով նոր շուկաներ, ինչպես նաև բարելավելով ՀՀ ներդրումային միջավայրը, այդ թվում՝ Միության տնտեսական սուբյեկտների նրգրավման համար: Այս համագործակցությունը կարող է ծառայել որպես տնտեսական կայունության և զարգացման կարևոր հենասյուն:
305. Ռուսաստան Դաշնության հետ ռազմավարական համագործակցությունը պետք է շարունակաբար զարգանա՝ հիմնվելով փոխադարձ շահերի, անվտանգային համակարգերի և պատմական կապերի վրա՝ միաժամանակ հարմարեցվելով նոր աշխարհաքաղաքական իրողություններին:
306. Հայաստանը պետք է խորացնի իր հարաբերությունները Եվրոպական Միության հետ: Ժողովրդավարական արժեքների իրական ներդրումը կառավարման համակարգում և հասարակության կյանքում բացարձակ առաջնահերթություն է, և այս համատեքստում Եվրոպական լավագույն փորձի տեղայնացումը համարում ենք զարգացման կարևորագույն բաղադրիչ: Հայաստանը կենտրոնանալու է համապարփակ և ընդլայնված գործընկերության վրա՝ փաստացի և ամբողջ ծավալով իրականացնելով ստանձնած բարեփոխումների

օրակարգը անվտանգային և ճգնաժամային համագործակցությունից մինչև առևտուր և շուկայական կարգավորումներ, անկախ և պրոֆեսիոնալ արդարադատության հանմակարգից ու կուռուպցիայի դեմ Օ հանդուժողականությունից մինչև ազատ և արդյունավետ քաղաքացիական հասարակություն, շրջակա միջավայրից մինչև կրթություն և այլն:

307. Նույն տրամաբանությամբ, ԱՄՆ-ի հետ համագործակցությունը պետք է զարգանա ժողովրդավարության ամրապնդման, անվտանգության և ներդրումային միջավայրի բարելավման, նորարարության, գիտության և տեխնոլոգիաների ոլորտներով, ինչի համար բոլոր ուղղություններով գործարկվելու են նոր ծրագրերի մշակման ներուժի բացահայտման և դրանք գործնականում իրականացնելու քայլերը: Իսկ արդեն իսկ գոյություն ունեցող նախագծերն անհրաժեշտ է լավարկել, հասցնել փոխշահավետ ավարտուն տեսքի և դրանք կյանքի կոչել:

308. Միաժամանակ, Հայաստանը պահպանելու է բաց և նախաձեռնողական քաղաքականություն այլ միջազգային դերակատարների և ազդեցիկ կենտրոնների նկատմամբ՝ ձգտելով ձևավորել փոխշահավետ համագործակցային հարաբերություններ տարբեր կենտրոնների հետ: Հայաստանի ռազմավարական նպատակը պետք է լինի ոչ թե դառնալ աշխարհաքաղաքական շահերի բախման կետ, այլ վերածվել համագործակցության հարթակի, որտեղ տարբեր ուժային կենտրոններ կարող են գտնել համագործակցության առարկայական հնարավորություններ: Արդյունքում, արտաքին քաղաքականության առանցքային ուղղություններից մեկը պետք է լինի նոր գործընկերների ձեռքբերումը՝ ընդլայնելով համագործակցության աշխարհագրությունը և ձևավորելով բազմազան ու կայուն միջազգային կապերի ցանց:

309. Անվտանգային և պաշտպանական կարողությունների համակողմանի զարգացման նպատակով անհրաժեշտ է էականորեն բարձրացնել միջազգային կառույցների, այդ թվում՝ Հավաքական Անվտանգության Պայմանագրի Կազմակերպության հետ համագործակցության արդյունավետությունը, ապահովելով առկա գործիքակազմի լիարժեք կիրառումը և ներուժի ամբողջական իրացումը: Միաժամանակ, պետք է նպատակաուղղված քայլեր ձեռնարկել նոր գործընկերային հարաբերությունների ձևավորման և խորացման ուղղությամբ, ինչը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում առավել կանխատեսելի, կայուն և երաշխավորված անվտանգային համակարգի կայացմանը:

▪ **«Քաղաքացիների և ազգությամբ հայերի իրավունքների պաշտպանություն աշխարհի ցանկացած վայրում»**

310. Հայաստանի Հանրապետության ռազմավարական դիրքավորումը պետք է լինի որպես մարդու իրավունքների պաշտպանության տարածաշրջանային առաջատար կենտրոն՝ հիմնված արդյունավետ ինստիտուցիոնալ համակարգի զարգացման, իրավական պետության սկզբունքների լիարժեք ամրապնդման և միջազգային համագործակցության նպատակային ու հետևողական խորացման վրա: Այս գործընթացը ներառում է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում բարձր չափանիշների ներդրում և կիրարկում, մասնագիտական ներուժի զարգացում, ինչպես նաև լավագույն միջազգային փորձի տեղայնացում:

311. Հայաստանը պետք է դառնա մարդու իրավունքների պաշտպանության վստահելի երաշխավոր՝ ապահովելով բարձր չափանիշներ թե՛ երկրի ներսում, թե՛ միջազգային հարթակներում:

312. Աշխարհի ցանկացած վայրում Հայաստանի քաղաքացիների իրավունքների խախտումների արձանագրման, պաշտպանության, ինչպես նաև ազգությամբ հայերի շահերի առաջ մղման մեխանիզմների ստեղծումը և համապատասխան հստակ օրակարգի ձևավորումը պետք է դառնա պետական քաղաքականության առանցքային ուղղություններից մեկը՝ ապահովելով ակտիվ և հետևողական ներգրավվածություն միջազգային բոլոր հնարավոր հարթակներում: Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցների համար օրակարգային է ձևավորել Հայաստանի Հանրապետությունում համապատասխան սոցիալ-տնտեսական և մշակութային միջավայր՝ Հայաստանի Հանրապետությունում լիարժեք ինտեգրման համար: Միաժամանակ, առաջնահերթ է նրանց միջազգայնորեն վերապահված իրավունքների լիարժեք վերականգնմանը միտված շարունակական և համակարգված քաղաքականություն վարելը: Արցախում, ինչպես և ամբողջ աշխարհում, հայ ազգային մշակութային, կրոնական և պատմական ժառանգության պահպանումը ոչնչացումից պետք է հանդիսանա ամենօրյա քաղաքականության մաս՝ միջազգային կառույցների հետ ակտիվ ներգրավմամբ:

313. Հայաստանի Հանրապետության և Արցախի դեմ կատարված միջազգային հանցագործությունների համապարփակ արձանագրումը և դրանց շուրջ միջազգային օրակարգը անհրաժեշտ է ոչ միայն ճշմարտության վերականգնման համար, այլև մարդկանց հասարակությունների մեջ կորսված վստահությունը վերականգնելու, համերաշխություն ստեղծելու և իրական հաշտության հիմքեր ձևավորելու համար: Միայն անցյալի իրողությունները արժանապատիվ կերպով բարձրաձայնելու և հասցեագրելու միջոցով է հնարավոր հասնել կայուն խաղաղության և փոխըմբռնման:

▪ **Արտաքին տնտեսական քաղաքականություն**

314. ԵԱՏՄ շրջանակներում ապրանքաշրջանառության ավելացվում, դրան զուգահեռ նոր շուկաներում ինտեգրում, տնտեսական կախվածությունը որևէ ուղղությունից բացառելու համար:

315. ՀՀ դեսպանատները հանդիսանալու են տնտեսական զարգացման գործիքակազմի անբաժանելի և կարևորագույն բաղադրիչներից: Արտերկրում հայկական արտադրանքի վաճառքի խթանման գործում պետք է ունենան նշանակալի ներդրում:

316. Էներգետիկ անվտանգություն և պարենային ինքնաբավություն

317. Արտաքին ներդրումների խթանմանն ուղղված քաղաքականություն

318. Տարանցիկ առևտրի գոտի ու լրգիստիկ հանգույց

▪ **Հայկական սփյուռք սփյուռքը որպես կամուրջ, փոխադարձ պատասխանատվությունը որպես համապարփակ ներգրավվածության սկզբունք**

319. Ստեղծված իրավիճակում Սփյուռքի հետ գործակցության նոր մոտեցումների և օրակարգի (Հայրենիքը Սփյուռքի համար և Սփյուռքը՝ Հայրենիքի համար) ձևավորում՝ փոխադարձ պատասխանատվության մոդելի ներդրման միջոցով,

320. Տարբեր բնագավառներում Սփյուռքի մասնագիտական ներուժի ներգրավվածության աստիճանի բարձրացում և ընդլայնում
321. "Հայաստան" համահայկական հիմնադրամի հայեցակարգային փոփոխությունների մշակում՝ հիմնական շեշտադրումը տեղափոխելով զարգացման ծրագրերի դաշտ, այդ թվում՝ վստահության վերականգման ուղղությամբ վերահսկման նոր գործիքակազմի ապահովում,
322. Պետության կողմից հայապահպանությանն ուղղված աջակցության նոր ու ժամանակակից ծրագրերի մշակում և իրականացում սփյուռքյան տարբեր համայնքներում,
323. Ազգային օրակարգի շուրջ սփյուռքյան համախմբվածության ապահովման ուղղությամբ ակտիվ աշխատանք՝ ՀԱԵ, ավանդական կառույցների, կազմակերպությունների, միությունների, ինչպես նաև անհատների ներգրավմամբ,
324. Երկուստեք աջակցության նորարարական ծրագրերի մշակում և տեղայնացում, բարեգործությանը զուգահեռ զարգացման տարաբնույթ նախագծերի ներկայացում և համատեղ իրականացման գործիքակազմի ներդրում,
325. Համահայկական օրակարգի հստակեցում և վերաիմաստավորում,
326. Սփյուռքյան համայնքները պետք է լինեն պետության մշտական ուշադրության և հոգածության կենտրոնում,
327. Հայրենիքի հետ կապն անխզելի դարձնելու ուղղությամբ համապատասխան ծրագրերի, տարաբնույթ նախաձեռնությունների իրականացում,
328. Սփյուռքի մասնագիտական լայն շրջանակների հետ համատեղ՝ Հայրենադարձությանն ուղղված արդի ժամանակներին համահունչ համապարփակ նոր հայեցակարգի և ռազմավարության մշակում,
329. Կառավարության անդամին ներկայացվող ինքնուրույն իրավական պահանջների ամրագրում Սահմանադրության 148-րդ հոդվածում՝ պատգամավորին ներկայացվող պահանջներից տրոհմամբ՝ որպես ելակետ դիտարկելով Սփյուռքի մեր հայրենակիցների պետական կառավարմանն անմիջական մասնակցելու արհեստական խոչընդոտների վերացումը:

7 ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՐ

330. Հայաստանի Հանրապետության անվտանգության հայեցակարգը սահմանում է այն սկզբունքները, նպատակները և գործիքակազմը, որոնց միջոցով հայկական պետությունն ապահովում է իր արժեքների ու շահերի պաշտպանությունը՝ անկախությունը, ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը, սահմանադրական կարգը, ինչպես նաև՝ մարդու անօտարելի արժանապատվությունը, հիմնարար իրավունքները, անվտանգությունն ու բարեկեցությունը:

331. Ռազմավարական նպատակները կյանքի են կոչվում համակարգված, հետետողական, շարունակական աշխատանքի արդյունքում: Նպատակները եւ դրանց հետ կապված խնդիրների կատարման ընթացքը վերանայվելու են յուրաքանչյուր տարի, անհրաժեշտության դեպքում ենթարկվելով փոփոխությունների՝ համապատասխան անվտանգային միջավայրի միտումների:

332. Արցախի (Լեռնային Ղարաբաղի) հայության 2020-2023թթ. ամբողջական էթնիկ զտումից հետո առկա գոյաբանական սպառնալիքներն ու մարտահրավերները զգալիորեն սրվել են: Հայաստանի Հանրապետությունը գործում է բարդ և փոփոխվող տարածաշրջանային ու միջազգային անվտանգային միջավայրում, որը բնութագրվում է.

- սրվող աշխարհաքաղաքական մրցակցությամբ,
- չլուծված հակամարտություններով,
- տեխնոլոգիական արագ փոփոխություններով,
- տնտեսական անկայունությամբ:

333. Հայաստանը պետք է իրականացնի ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և միջազգային իրավունքի վրա հիմնված պաշտպանական, երկարաժամկետ և համապարփակ անվտանգության ռազմավարություն, որը կենտրոնացած է.

- զսպման մեխանիզմների ստեղծման,
- դիմակայունության ամրապնդման,
- ժամանակակից սպառնալիքների նկատմամբ խոցելիության նվազեցման,
- երաշխավորված, երկարատեւ ու կայուն խաղաղության կերտման,
- ՀՀ սահմաններից դուրս գտնվող ազգությամբ հայերի և հայկական ժառանգության պահպանման վրա:

334. **Անվտանգության ուղենիշներ** Ազգային արժանապատվությունը և սեփական ճակատագիրը տնօրինելու կամքը մեր դիմակայունության աղբյուրն են:

335. Հասարակական համախմբումը առաջնային նշանակություն ունի արտաքին եւ ներքին մարտահավերժերին հասարակության դիմակայունության ամրապնդման համար:

336. **Խաղաղություն.** Հայաստանը երաշխավորված, հարատև ու կայուն խաղաղությունը դիտարկում է որպես ռազմավարական արժեք, այլ ոչ թե զիջումների հետևանք: Մենք մերժում ենք պարտադրված միակողմանի զիջումները և ամրագրում, որ պետության ու

ժողովրդի ամուր անվտանգությունը և հարատև ու կայուն խաղաղությունը հնարավոր են միայն զսպման ուժի և անսասան ինքնիշխան կամքի ու ներուժի վրա հիմնված զարգացմամբ:

337. Խաղաղությունը պետք է հիմնված լինի ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, ռազմավարական սուբյեկտայնության, զսպման ուժեղ մեխանիզմների և միջազգային իրավունքի պահպանման վրա՝ բացառելով ուժի կիրառումը և ուժի կիրառման սպառնալիքը որպես վեճերի լուծման միջոց՝ նախապատվություն տալով դիվանագիտության և երկխոսության միջոցով խնդիրների քաղաքական կարգավորմանը:
338. **Մեզ համար անընդունելի է** ցանկացած արտաքին միջամտություն ՀՀ տարածքային ամբողջականության, սահմանադրական կարգի, պետական խորհրդանիշների և ազգային ինստիտուտների հանդեպ:
339. **Ժողովրդագրական զարգացում.** Ազգային արժեքների վրա հիմնված ընտանիքակենտրոն և հայրենադարձության քաղաքականությունը ժողովրդագրական ճգնաժամի հաղթահարման և պետության անվտանգային ներուժի վերականգնման գրավականներից է:
340. **Մարդկային տաղանդ և գիտական գերազանցություն.** Հայ մարդու ստեղծարար ներուժը, տաղանդը և գիտական միտքը պետական հզորության գլխավոր աղբյուրներից են: Մենք որդեգրում ենք գիտելիքահեն զարգացման սկզբունքը՝ խրախուսելով մասսայական կրթության մակարդակի բարձրացումը և գիտական գերազանցությունը որպես անհամաչափ սպառնալիքներին հակազդելու և համաշխարհային մրցունակություն ապահովելու կարևորագույն արժեք:
341. **Արտաքին ներդրումների գրավում.** Ներգրավել միջազգային խոշոր կապիտալ և ռազմավարական ներդրումներ Հայաստանի տնտեսության մեջ՝ որպես պետության դիմակայունության լրացուցիչ գործոն եւ զսպման մեխանիզմ:
342. **Սահմանամերձ բնակավայրեր.** Մշակել սահմանամերձ բնակավայրերի տնտեսական հզորացման և բնակեցման հատուկ փաթեթ՝ դրանք դիտարկելով որպես պետության դիմակայունության առաջնագիծ:
343. **Արցախահայության ներուժի իրացում.** Իրականացնել բռնի տեղահանված արցախցիների սոցիալ-տնտեսական լիարժեք ինտեգրման և բնակարանային ապահովման համապարփակ ծրագրեր՝ վերջիններիս մարդկային ու մասնագիտական ներուժը դիտարկելով որպես ՀՀ սրընթաց զարգացման կապիտալ:
344. **Հայկական ժառանգության պահպանում.** Հայկական նյութական ու ոչ նյութական մշակութային հարուստ ժառանգության պաշտպանություն ու զարգացում Հայաստանի սահմաններից ներս ու դուրս:

Պաշտպանական կարողությունների զարգացում

345. Պաշտպանության ոլորտի քաղաքականությունն ուղղված է լինելու տարածաշրջանային սպառնալիքներին դիմակայելուն ունակ պաշտպանական անվտանգության համակարգ ստեղծելուն:

346. Մենք զարգացնելու ենք ռազմավարական եւ անհամաչափ զսպման կարողությունները, հաշվի առնելով մեր երկրի տարածքի փոքրությունը և ռազմավարական խորության բացակայությունը:
347. **«Ամրոց-պետություն».** Դիմակայուն սկզբունքներով ապահովել պետության ու բնակչության համընդհանուր պաշտպանության համակարգի ներդրում՝ կիրառելով բոլոր ռեսուրսները, ինստիտուտները, մեխանիզմները բոլոր բնագավառներում ու տիրույթներում: Ներդնել միասնական C4ISR-ին համապատասխան կառավարման համակարգ, որը ներառում է օդային, ցամաքային, կիբեռ և տեղեկատվական տիրույթների համաժամանակյա գործողությունները:
348. **«Խելացի սահմաններ»** և տարածքային դիմակայունություն. Սահմանները վերածել տեխնոլոգիական բարձր խտությամբ գոտու՝ տեղակայելով արհեստական բնականության վրա հիմնված սենսորային ցանցեր և ինքնավար համակարգեր: Նվազեցնել սահմանային հենակետերի թիվը բարձր շարժունակություն ունեցող, տեխնոլոգիապես հագեցած արագ արձագանքման խմբերի շնորհիվ:
349. **Արժանիքահեն բանակ եւ արժանապատիվ զինձառայություն.** Զինված ուժերը դարձնել մասնագիտական աճի և սոցիալական բարձր կարգավիճակի երաշխավոր կառույց: Վերանայել սպայակազմի կրթական ստանդարտները՝ հիմնվելով ռազմավարական մտածողության, տեխնոլոգիական գրագիտության, առաջնորդության վրա: Բարձրացնել զինվորականի հեղինակությունը՝ միաժամանակ ապահովելով կրթական արտոնություններ ու արժանապատիվ սոցիալական երաշխիքներ, բնակարանային հասանելիություն և գործնական աջակցություն ընտանիքներին: Յուրաքանչյուր ժամկետային զինձառայողի ընտանիք ստանալու է ամսական 40000 դրամ վարձատրություն: 20000 մատչելի բնակարան ծրագրի շրջանակում 1000 բնակարան հատկացվելու զինձառայողներին 50% զեղչով:
350. Առաջանցիկ տեմպերով կզարգացնենք ՀՕՊ միջոցները և ԱԹՍ-երը, չեղարկելու հնարավոր հակառակորդի օդային գերակայությունը
351. Հետևողականորեն կթվայնանցնենք զինված ուժերի և մարտական գործողությունների կառավարման համակարգերը, կզարգացնենք հետախուզության և կապի միջոցները:
352. **Տեղեկատվական անվտանգությունը:** Վերլուծվելու և գնահատվելու են տեղեկատվական անվտանգության սպառնալիքները և որոշվելու են անվտանգությանը ներկայացվող պահանջները: Մշակվելու են պետության քաղաքականության

տեղեկատվական անվտանգության ոլորտի հիմնական ուղղությունները, նպատակները և սկզբունքները, ինչպես նաև տեխնիկական և կազմակերպական միջոցառումները: Վերանայվելու է նորմատիվ-իրավական բազան և համապատասխանեցվելու է արդի պահանջներին: Մշակվելու են տեղեկատվական անվտանգության ապահովման պետական ծրագրեր: Ստեղծվելու է պետության տեղեկատվական անվտանգության ոլորտի համար որակյալ կադրերի նախապատրաստման համակարգ: Ավելացվելու են կիրեռանվտանգության ստորաբաժանումների թվաքանակը: Ստեղծվելու է կիրեռանվտանգության ազգային կենտրոն՝ մեկ միասնական մտահղացմամբ եւ պլանով գործելու համար:

353. **Ներդնելու ենք դրոնների և ԱԹՍ-ների օպերատորների պատրաստման ժամանակակից համակարգ:** Միաժամանակ գործելու է կամավորի ինստիտուտը, որը կապահովի համակարգված և կայուն կապ պետության ու հասարակական կազմակերպությունների միջև արտակարգ իրավիճակների դեպքում:
354. **Ստեղծելու ենք բարձր մարտունակությամբ ակտիվ պահեստազոր,** որը թույլ կտա արագ համալրել զինված ուժերը մարտունակ կադրերով: Ակտիվ պահեստազորի մասնակիցները ստանալու են արժանապատիվ վարձատրություն:
355. **Զինված ուժերի պատրաստությունն ու ռազմական կրթությունը.** Մեծ ներդրումներ են լինելու ռազմական կրթության որակի բարձրացման համար: Զինված ուժերի և այլ զորքերի պատրաստությունն ուսուցման նոր ձևերի, եղանակների և մեթոդների ներդրմամբ համապատասխանեցվելու է ժամանակակից ռազմարվեստի բնույթին: Սեղմ ժամկետներում առաջատար պետությունների ռազմական ոլորտի բարձրակարգ պրոֆեսորադասախոսական կազմի և հրահանգիչների ներգրավմամբ ու ժամանակակից ուսումնանյութական բազայի ստեղծմամբ բարձրացվելու է հրամանատարական կազմի, շտաբների և անձնակազմի մասնագիտական պատրաստության մակարդակը:
356. Ստորագրվելու են համապատասխան հուշագրեր աշխարհի առաջատար ռազմական ուսումնական հաստատությունների հետ, որոնց շրջանակներում իրականացվելու են փորձի փախանակում և կրթական վերապատրաստման ծրագրեր:
357. **Բանակի բարձր պատրաստվածությունն ու մարտունակությունն** ապահովվելու համար անհրաժեշտ է ուժեղացնել սերժանտական (հրահանգիչների) ինստիտուտը՝ այն դարձնելով ուսուցման հիմնական օգակներից մեկը:

358. **Մանկապարտեզից մինչև բարձրագույն ուսումնական հաստատություններ** համապատասխան ծրագրերի եւ միջոցառումների իրականացմամբ ձեւավորվելու է գիտակցական վերաբերմունք հայրենիքի պաշտպանության նկատմամբ:
359. **Վերականգնվելու է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերն ու նշանակությունը գինված ուժերում:**
360. **Իրականացվելու են ՁՈՒ առեստավորման համակարգի բարեփոխումներ,** որոնց հիմքում ներդրվելու է թիրախավորված մեթոդոլոգիա. այն լինելու է արժանիքահեն՝ հաշվի առնելով գինձառայողի անցած մարտական ուղին:
361. **Ռազմաարդյունաբերական համալիրը.** Լրջագույն ներդրումներ են արվելու ռազմաարդյունաբերության կայուն և նորարարական զարգացումն ապահովելու և հայրենական մրցունակ ռազմական արդյունաբերություն ստեղծելու և զարգացնելու նպատակով: Ձեռնակվելու են միջոցներ պաշտպանության և անվտանգության նշանակության ռազմական ապրանքների և գույքի տեսականին ու ծավալները ավելացնելու ուղղությամբ: Ստեղծվելու են անհրաժեշտ կարողություններ սպառազինության, ռազմական տեխնիկայի, ռազմատեխնիկական միջոցների, ունեցվածքի և թիկունքային գույքի մշակման, ստեղծման, արդիականացման, նորոգման և վերականգնման ու սպասարկման համար: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու ռազմական նշանակության գիտահետազոտական ու փորձակոնստրուկտորական աշխատանքների արդյունավետությանը: Սա հնարավորություն է տալու նաեւ ապահովելու ռազմաարդյունաբերական համալիրի ինքնաբավություն:

Մեր նպատակն է.
**ստեղծել ուժեղ պետություն,
որտեղ պաշտպանված է մարդը,
նրա անվտանգությունը,
նրա ազատությունը
և նրա ապագան:**